



Զիաց Մեր Հանապազորդ

ՀՈԿՏԵՄԲԵՐ • ՆՈՅԵՄԲԵՐ • ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018



Քաղցր է Տերը, նրա ողորմությունը հավերժ է,
նրա ճշմարտությունը՝ սերնդից սերունդ:
Մաղմու 99. 5

Հարգելի՛ բարեկամ

Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած արևելահայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության և Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

Վահանավանք՝ նաև Հովհաննավանք, միջնադարյան

վանական համալիր Հայաստանի Հանրապետությունում: Գտնվում է Սյունիքի մարզկենտրոն Կապան քաղաքից 7 կմ արևմուտք՝ Ողջի գետի աջ կողմում, Տիգրանասարի լանջին:

Վանական համալիրի առաջին կառույցը՝ սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, կառուցվել է 911 թվականին՝ Տաթևի վանքի հանդիսավոր օծումից հինգ տարի անց: Կառուցումը հովանավորել է Սյունիք նահանգի Բաղք գավառի իշխան Չազիկի որդի Վահան Սյունին, ով եկեղեցուն նվիրաբերել է հսկայական կալվածքներ: Ավելի ուշ՝ 11-րդ դարի երկրորդ կեսին, Վահանավանքի մոտ կատարվել են նոր կառուցումներ, մեծ եկեղեցուց 25 մետր հեռու կառուցվում է մի ավելի փոքր եկեղեցի՝ սուրբ Աստվածածինը:

Վանքն ունեցել է շուրջ 100 միաբան, կից գործել է վանական դպրոցը, որի սաներից է եղել եկեղեցու հիմնադիր Վահան Ա Սյունեցին:

Վանքի տարածքում խորհրդային տարիներին և ապա 2006-2009 թվականներին իրականացված վերականգնողական աշխատանքների արդյունքում ամբողջովին վերականգնվել են սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և նրան կից գավիթը: Սյունասարահը մասնակիորեն է վերականգնվել: Համալիրի երկհարկ եկեղեցին՝ սուրբ Աստվածածինը, վերականգնվել է խորհրդային տարիներին: (Վիքիպեդիա)

Լուսանկարը՝ Լարա Գայսերեան
Փենսիլվանիա, Միացեալ Նահանգներ
Lara Kaiserian, PA, USA



Ձեռք մեր հանապազորդ

ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄԲԵՐ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածույթյուններ

ԻԹ ՏԱՐԻ

Դ ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում
Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ
Our Daily Bread գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի
խորհրդածույթյունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76, (010) 54-35-78

Էլեկտրոնային փոստ՝ amaa.armenia@amaa.am

Մեր բարեկամների համար

Էմիլի Բրոնտեի «Մոլեգին հողմերի դարավանդը» վեպում կո-
վագան ու դաժան մի մարդ, որ հաճախ Աստվածաշունչն էր
մեջբերում ուրիշներին քննադատելու համար, ներկայացված է որ-
պես «ինքն իրեն արդարացնող Փարիսեցի, որ խոստումներ է որո-
նում իր համար ու անեծքներ տեղում իր դրացիների վրա»: Մի-
ծաղաչարժ տող է սա, որ նույնիսկ որոշ մարդկանց է հիշեցնում:
Սակայն մենք բոլորս այդպես չե՞նք ու
հակամետ ուրիշների ձախողությունները
դատապարտելու՝ մերը չքմեղացնելով:

Աստվածաշնչի մեջ մի շարք մարդիկ
հիանալի կերպով ճիշտ այս բանի հակա-
ռակն արեցին: Նրանք պատրաստ եղան
Աստծո խոստումներից հրաժարվելու և

նույնիսկ նզովվելու, որպեսզի ուրիշները փրկվեն: Նկատի առնենք
Մովսեսին, որ ասաց, թե նախընտրում է, որ իր անունը ջնջվի Աստ-
ծո գրքից, քան թե իսրայելցիներին չներված տեսնի (Ել. 32.32): Կամ
Պողոսը, որ ասաց, թե ինքը պիտի ուզեր Քրիստոսից նզովվել, եթե
դա պիտի նշանակի, որ նրանք Քրիստոսին են գտել (Հռոմ. 9.3):

Մինչ բնականաբար մենք մեզ արդարացնում ենք, Աստվա-
ծաշունչը հստակ ձևով նշում է նրանց, որոնք ուրիշներին սի-
րում են իրենց անձերից ավելի: Նման սեր Տեր Հիսուսն է ցո-
լացնում: «Ոչ ոք ավելի մեծ սեր չունի նրանից, քան այս, եթե
մեկն իր կյանքն է տալիս իր բարեկամների համար» (Հովհ.
15.13): Նույնիսկ նրան ճանաչելուց առաջ Հիսուսը մե՛զ սիրեց
«մինչև վերջ» (13.1), մա՛հը ընտրեց՝ մեզ կյանք տալու համար:

Հիմա մենք հրավիրված ենք Աստծո ընտանիքի մեջ այսպես սի-
րելու և սիրվելու (15.9-12): Մինչ ցույց ենք տալիս Քրիստոսի
աներևակայելի սերը, աշխարհը պիտի ունենա մի նշույլ՝ Նրանից:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ մեզ ցույց ես տալիս, թե
ի՞նչ է նշանակում սիրել: Օգնիր, որ Քեզ նման սիրենք: Ամեն:

Երբ Քրիստոսին սիրենք, ուրիշներին էլ կսիրենք:

Կարդա՛

Յովհաննես 15. 5-17

Սա է իմ պատվիրա-
նը, որ իրար սիրեք,
ինչպես որ ես ձեզ
սիրեցի: Յովհ. 15.12

Աստծո խանձը

Բողալավաւոյող տնից մի քանի փոքր մանուկների դուրս բերելուց հետո խելացնոր մի աղախին դուրս վազելով կանչեց հինգ տարեկան Ջեքիի անունը: Սակայն Ջեքին չհետևեց նրան: Մի անցորդ, բարեկամի ուսին բարձրանալով ու վերի հարկի պատուհանին հասնելով, դուրս բերեց երեխային նախքան առաստաղի վայր ընկնելը: Մայրը՝ Սյուզաննան, ասաց, թե Ջեքին «կրակից ազատված խանձվող» է: Թերևս քեզ ծանոթ է այդ կիսախանձ փայտը՝ որպես մեծանուն Ջոն Ուեսլի (1703-1791):

Սյուզաննա Ուեսլին մեջբերում էր Զաքարիա մարգարեի խոսքերից, որ մեզ ներկայացնում է արժեքավոր մտածում Աստծո նկարագրի մասին: Պատկերացնելով իր տեսիլքը՝ մարգարեն մեզ տանում է մի դատասենյակ, ուր Սատանան Հեսու

քահանայապետի կողքին է կանգնած (3.1): Սատանան Հեսուին ամբաստանում է, սակայն Աստված սաստում է նրան ու ասում. «Արդյոք նա կրակից փրկված կիսախանձ մի փայտ չէ՞» (Հմ. 2):

Տերը Հեսուին ասում է. «Ահա վերացրի քեզնից քո անօրենությունները: Պարեզոտ հազցրեք նրան...» (Հմ. 5): Հետո նրան այս մարտահրավերն է տալիս՝ ասելով. «Եթե իմ ճանապարհներով գնաս և պահես իմ հրամանները, դու կլինես դատավորը իմ Տան» (Հմ. 7): Հիսուսի հանդեպ մեր ունեցած հավատքի համար ի՞նչ հիանալի պարզեւ ենք ստանում Աստծուց: Նա մեզ կրակից ազատում է, մեզ մաքրում է ու մեր մեջ գործում, մինչ նրա Հոգու տված առաջնորդության ենք հետևում: Կարող ես քեզ պիտակել որպես կրակից ազատված Աստծո խանձ:

Կարդա՛ր Չաքարիա 1. 3-7

Ահա վերացրի քեզնից քո անօրենությունները: Պարեզոտ հազցրեք նրան և սուրբ խույր դրեք նրա գլխին: Չաք. 3.5

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ մեզ ազատում ես ու Քեզ հետ հաշտեցնում: Հոգուդ առաջնորդությունն ենք խնդրում, մինչ Քեզ ենք ծառայում:

Աստված մեզ ազատում է, որովհետև սիրում է մեզ, ապա զինում է, որ կարողանանք ուրիշներին սիրել:

Օգնություն աղերսել

Բարեկամուհուս ուղարկած էլեկտրոնային նամակը երկար օրվա վերջում հասավ, սակայն չբացեցի, որովհետև զբաղված էի ընտանիքիս անդամներից մեկի հիվանդությունը: Հաջորդ առավոտ, երբ բացեցի նամակը, տեսա այս հարցը. «Կարո՞ղ եմ քեզ օգնել որևէ ձևով»: Արագ չպատասխանելու համար ամաչեցի և սկսեցի գրել՝ «Ո՛չ»:

Ապա խորունկ շունչ առնելով՝ նշմարեցի, որ հարցը ծանոթ էր ինձ որպես աստվածային հարցում: Հիսուսը այդ հարցը տվեց, երբ Երիթովի ճանապարհին կույր մուրացկանի աղաղակը լսեց: Նա կանգ առավ Բարտիմեոս կոչված մարդու դիմաց՝ «կարող եմ քեզ օգնել»-ի նման հարց տալու համար: Նա ասաց. «Ի՞նչ ես ուզում, որ քեզ համար անեմ» (Մարկ. 10:51): Հիսուսի հարցը ապշեցուցիչ է, որովհետև ցույց է տալիս մեզ օգնելու Իր փափազը: Սակայն նախ հրավիրված ենք ընդունելու, թե՛ Նրա կարիքն ունենք, որը խոնարհություն է: «Մասնագիտությունը» մուրացկան Բարտիմեոսը կարիք ուներ. նա աղքատ, միայնակ ու անտի էր: Սակայն փափազելով նոր կյանք ունենալ՝ նա պարզապես իր հիմնական կարիքը հայտնեց Հիսուսին՝ ասելով. «Ռաբբունի՛, որ տեսնեմ»:

Կույր մարդու համար անկեղծ խնդրանք էր այս, ու Հիսուսը անմիջապես բուժեց նրան: Բարեկամուհուս էլ ինձնից նման անկեղծություն էր ակնկալում: Ուստի խոստացա նրան, որ պիտի աղոթեմ՝ հասկանալու համար, թե որոնք են իմ հիմնական կարիքները, և ամենակարևորը՝ խոնարհաբար իրեն հայտնեմ:

Գիտե՞ս, թե որն է քո հիմնական կարիքն այսօր: Եթե մի բան երկամ հարցնի քեզ, պատասխանիր նրան, ապա քո խնդրանքը ավելի վեր բարձրացրու ու հայտնիր Աստծուն:

Աղոթք - Տե՛ր, կարիք ունեմ: Ուզում եմ սիրոս բանալ Քեզ: Օգնիր, որ խոնարհաբար ուրիշների օգնությունը ընդունեմ: Ամեն:

Աստված ամբարտավաններին հակառակվում է, բայց խոնարհներին շնորհ է տալիս (Ա Պետ. 5.5):

Կարդա՛
Մարկոս 1. 46-52

Հիսուսը նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում, որ քեզ համար անեմ»
Մարկ. 10:51

Քաջարի կեցվածք

Թերեզա Պրեկարովան հազիվ պատանուհի էր, երբ հիտլերյան նացիստները գրավեցին Լեհաստանը Համաշխարհային երկրորդ պատերազմի ու Հոլոքոստի սկզբում: Երբ դրացի հրեաները սկսեցին նացիստների կողմից ձերբակալվել ու անհետանալ, Թերեզան ու լեհերը իրենց կյանքերը վտանգեցին՝ փորձելով նրանց ազատել նացիստների բռնադատությունից ու Ուորսոյի գաղթականներից: Թերեզան կարող էր պատերազմի ու ցեղասպանության առաջնահերթ պատմաբաններից մեկը լինել, սակայն չարի դեմ կանգնելու նրա քաջությունը նրան Արդարության Հերոսների շարքը դասեց Երուսաղեմի Յադ Ուաշեմ ցեղասպանության հուշահամալիրի մեջ: Քաջություն է հարկավոր չարին դիմագրավելու համար: Պողոսը Եփեսոսի եկեղեցուն գրեց. «Որովհետև մեր պատերազմն արյան և մարմնի դեմ է, այլ իշխանությունների և պետությունների դեմ, այս աշխարհի խավար աշխարհակալների դեմ»: (Եփ. 6.12): Հստակ է, որ այս անտեսանելի հակառակությունը ավելի մեծ է միայնակ դիմագրավելու մեր կարողությունից, ուստի Աստված մեզ տվել է անհրաժեշտ հոգևոր զորություն աղբյուր՝ «Աստծո սպառազինությունը», որպեսզի կարողանանք «սատանայի հնարներին դիմադրել» (Հմ. 11): Այդ քաջարի կեցվածքը ի՞նչ է պահանջում: Կարող է դա լինել անարդարության դեմ գործելը և կամ միջամտելը մեկի համար, որ խոցված կամ գոհաբերված է: Ի՞նչ ձև էլ ստանա մեր պայքարը, կարող ենք քաջություն ունենալ, որովհետև մեր Աստվածը արդեն մեզ տվել է այն, ինչի կարիքն ունենք՝ Իր համար ու չարի դեմ կանգնելու:

Կարդա՛ Եփես. 6. 10 - 18

Որովհետև մեր պատերազմն արյան և մարմնի դեմ է, այլ իշխանությունների և պետությունների դեմ, այս աշխարհի խավարի աշխարհակալների դեմ...
Եփես. 6.12

Աղոթք - Սիրո՛ղ Չայր, օգնիր, որ կարողանանք չարի դեմ կանգնել: Շնորհակալ եմ, որ մեզ կարողություն ես տալիս՝ հաստատուն մնալու դժվար պահերին: Ամեն:

Աստված կարողություն է տալիս Իր համար կանգուն մնալու:

Ավելի լավ

Պատմվում է, որ մի խումբ ձկնորսներ հավաքվեցին շոտլանդական պանդոկի մեջ երկար օրվա աշխատանքից հետո: Երբ մեկը նկարագրում էր իր բարեկամի որսացած ձուկը, նրա ձեռքը թռցրեց սեղանի վրայի գավաթը, որ զարնվելով ճերմակ պատին՝ փչրվեց ու հետք թողեց ճերմակ: Մարդը ներողամտությոն հայցեց պանդոկի տիրոջից ու առաջարկեց վնասի հատուցում: Սակայն ոչինչ հնարավոր չէր անել, որովհետև պատը վնասված էր: Կողքին նստող մի մարդ ասաց. «Մի՛ մտահոգվիր»: Ու ոտքի ելնելով և գրպանից ներկելու մատիտ հանելով՝ սկսեց տգեղ հետքի շուրջը նկարել: Պատի վրա դանդաղորեն եղջերուի գլուխ նկարվեց: Այդ մարդը հանրաձայնությոն շոտլանդացի նկարիչ Ի. Հ. Լենդսերն էր: Դավիթը՝ Իսրայելի հռչակավոր թագավորն ու 50-րդ Սաղմոսի հեղինակը, իր գործած մեղքերի պատճառով ամոթ բերեց իր անձին ու իր ազգին: Նա չնացավ իր բարեկամներից մեկի կնոջ հետ ու ծրագրեց այդ բարեկամի սպանությունը՝ մահվան արժանի երկու արարք: Թվում էր, թե նրա կյանքը կործանված էր: Սակայն Նա Աստծուն աղերսեց ու ասաց. «Իմ մեջ մաքուր սիրտ հաստատի՛ր, Աստված, և արդար հոգի նորոգի՛ր իմ որովայնում» (Սաղմ. 50.12):

**Կարդա՛ր
Սաղմոս 50. 9-13**

Ինձ փրկության ցնծություն տուր, և քո տիրական Հոգով հաստատի՛ր ինձ: Սաղմ. 50.14

Դավիթի նման մենք էլ ունենք ամոթալի արարքներ մեր անցյալում ու նրանց ընկերացող հիշատակներ, հուշեր, որոնք նախատում են մեզ գիշերը: Շատ բան կա, որ ուզում ենք ջնջել, սրբագրել ու շիտակը անել: Շնորհ կա, որ ոչ միայն ներում է մեզքը, այլ նաև գործածում այն՝ մեզ ավելի լավը դարձնելու համար: Աստված ոչ մի բան չի վատնում:

Աղոթք - Տե՛ր, դարձյալ Քեզ ամոթով թողեցի: Խնդրում եմ ներիր, փոխիր ու հեղաշրջիր ինձ: Սովորեցրու ինձ Քեզ հետևել: Ամեն:

Աստված ունի ամենատես աչք ու ամեն բան ներող սիրտ:

Փայլփլեւ

«Փայլի՛ր, փայլի՛ր, փոքրիկ աստղ»-ը ծանոթ անգլիական օրորոցային է: Նրա բառերը, որ նախապես գրվել են որպես ոտանավոր Ջեյն Թեյլորի կողմից, կլանում են Աստծո տիեզերքի հրաշալիությունը, ուր աստղերը կախվում են «չատ բարձր երկրի վրա»: Հազվագյուտ հրատարակված հաջորդ համարների մեջ աստղը ներկայանում է առաջնորդ. «Այնպես, ինչպես քո փայլուն և փոքրիկ կայծն է լուսավորում ճամփորդին խավարի մեջ»:

Փրկիպպեցիներին ուղղված նամակում Պողոսը մարտահրավեր է տալիս Փրկիպպեի հավատացյալներին, որ անմեղադրելի ու աննենգ լինեն ու «որպես աշխարհում լույս տվողներ», մինչ Ավետարանի բարի լուրն են տարածում (2.15-16): Մտածում ենք, թե ինչպե՞ս կարելի է աստղերի նման շողալ: Ընդհանրապես մտածում ենք, թե անկարող ենք ու մաքառում ենք՝ խորհելով, թե մեր «լույսը» բավարար չափով պայծա՞ր է՝ տարբերություն բերելու համար: Սակայն աստղերը չեն փորձում աստղեր լինել: Նրանք արդեն աստղեր են: Լույսը մեր աշխարհն ու մեզ փոխում է: Աստված լույսը ստեղծեց (Ծննդ. 1.3) ու Տեր Հիսուսի միջոցով բերում է հոգևոր լույս մեր կյանքերում (Հովհ. 1.1-4): Մենք, որ ունենք Աստծո լույսը մեր մեջ, պետք է շողանք այնպիսի ձևով, որ մեր շուրջ եղողները տեսնեն լույսը ու հրավիրվեն նրա աղբյուրին: Այնպես, ինչպես աստղն է կախված մնում երկնքում, մեր լույսն էլ տարբերություն է առաջացնում Նրա Լույսը լինելով: Երբ մենք պարզապես շողում ենք, հետևում ենք Պողոսի տված ցուցումներին՝ «ամուր բռնելու կյանքի խոսքը» խավար աշխարհի մեջ, և ուրիշներին մեր հույսի աղբյուրին՝ Հիսուսին ենք հրավիրում:

Կարդա՛
Փիլիպ. 2. 14-16

..որի մեջ երևաք որպես աշխարհում լույս տվողներ:
Փիլիպ. 2.15

Աղոթք - Սիրելի՛ Հայր, թող Քո լույսը շողա մեր միջից, մինչ կենաց խոսքն ենք հրամցնում ուրիշներին: Ամեն

Գիտու՛ւր լույս է բերում մեր կյանքերի մեջ:

Ջերմ բարի գալուստ բոլորին

Վերջերս արձակուրդի ընթացքում կինս ու ես այցելեցինք հռչակա-
վոր մարզական մի համալիր: Դռները լայն բաց էին, ու թվաց, թե
մենք ջերմորեն հրավիրված էինք ներս մտնելու: Հաճելի էր այցելություն-
նը ու հիանալի՝ տեսնել գեղեցիկ մարզադաշտերը: Մինչ պատրաստ-
վում էինք դուրս գալու, մեկը մեզ կանգնեցրեց ու ասաց, որ այնտեղ
չպետք է լինեինք: Հանկարծ մտածեցինք, թե մենք օտարականներ էինք
ու անհանգստացանք: Այդ արձակուրդին
մենք մի եկեղեցի էլ այցելեցինք: Դարձյալ
դռները լայն բաց էին, ուստի ներս մտանք:
Ի՛նչ մեծ տարբերություն: Շատերը ջերմորեն
մեզ ողջունեցին ու տվեցին հարազատ տանը
լինելու զգացումը: Եկեղեցու պաշտամունքից
դուրս եկանք՝ գիտենալով, թե մենք սիրալիր
ընդունելություն էինք գտել:

Դժբախտաբար անսովոր չէ եկեղեցի այ-
ցելող օտարների համար ստանալ անխոս պատգամ, որ «այնտեղ
չպետք է լինեինք»: Սակայն Աստվածաշունչը մեզ կոչ է անում, որ բո-
լորի հանդեպ հյուրասեր լինենք: Հիսուսն ասաց, որ մեր դրացիներ-
ին պիտի սիրենք մեր անձերի պես, որ վստահորեն նշանակում է ըն-
դունել նրանց մեր կյանքերի մեջ ու եկեղեցիներում (Մատթ. 22:39):
Երբայցիները նամակը հիշեցնում է. «Հյուրասիրությունը մի՛ մո-
ռացեք» (13:2): Դուկասը և Պողոսը մեզ ցուցում տվեցին գործնա-
կան սեր ցույց տալու ընկերային ու ֆիզիկական կարիք ունեցող
մարդկանց (Դուկ. 14:13-14, Հռոմ. 12:13): Ու հավատացյալների շը-
ջանակի մեջ ունենք սեր ցույց տալու հատուկ պարտականություն
(Գաղ. 6:10): Երբ բոլոր մարդկանց սրտաբաց ու Քրիստոսանման սի-
րով ընդունենք, մեր Տիրոջ սերն ու գուրգուրանքը ցույց կտանք:

Աղոթք - Տե՛ր, բա՛ց մեր սրտերը բոլոր մարդկանց, որոնք
մեր կյանքերի մեջ են. սեր ցույց տանք ու հյուրասիրություն
անենք նրանց: Օգնիր, որ կարողանանք Տե՛ր Հիսուսի ջերմ
սերը ցուցանել: Ամեն:

**Երբ հյուրասիրություն անենք, Աստծո բարությունը
կկիսենք:**

Կարդա՛ Երբայցիներ 13.1-3

Ուրեմն քանի դեռ
ժամանակ ունենք,
բարին անենք բո-
լորին, մանավանդ
հավատի ընտանի-
քների: Գաղ. 6.10

Մեր գեղգեղող Հայրը

Կնոջս ու ինձ զավակներ ունենալուց առաջ ոչ ոք չսասաց, թե որքան կարևոր պիտի լինեն երգելը: Հիմա մեր զավակները վեց, ութ և տասը տարեկան են, սակայն այն ժամանակ երեքն էլ դժվարություն ունեին վաղ քնելու: Ամեն երեկո կինս ու ես հերթ հինք դնում՝ օրորելու մեր փոքրիկներին, աղոթելով, որ շուտ քնեին: Հարյուրավոր ժամեր եմ անցկացրել օրորելով նրանց, օրորոցային երգեր մոմռալով և հուսալով, որ նրանց քնելու ընթացքը կարագանա: Սակայն մինչ երգում էի ամեն գիշեր, հիանալի բան պատահեց. աներևակայելի կերպով նրանց հանդեպ իմ ունեցած սերն ու բերկրանքը խորացան այնպիսի ձևերով, որ երբեք չէի մտածել:

Գիտեի՞ր, թե Աստծո խոսքը նկարագրում է երկնավոր Հորը՝ որպես իր զավակների համար գեղգեղող հայր: Ինչպես ես էի որոնում իմ զավակներին երգով գրավելու ձևը, Սուփոնիան էլ ամփոփում է՝ նկարագրելով Իր ժողովրդի վրա գեղգեղող մեր Երկնավոր Հոր պատկերը. «Ուրախություն կբերի քեզ... ուրախ կլինի քո մեջ»: (Սուփ. 3.17): Սուփոնիայի մարգարեությունն գրքի մեծ մասը ազդարարում է՝ նկարագրելով Աստծուն մերժողներին գալիք դատապարտության մասին: Սակայն Սուփոնիան իր գիրքը եզրափակում է ոչ թե դատապարտությանը և ոչ միայն այն նկարագրությանը, թե ինչպե՞ս պիտի ազատի ժողովրդին իր տառապանքներից, այլ որպես այն Աստվածը, որ գործվալի սիրով, սիրող ու երգերով հրճվող Հայր է:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ այնքան ես հրճվում մեզնով, որ պատրաստ ես երգելու մեզ համար: Օգնիր, որ կարողանանք ընդունել Քո մեծ սերն ու լսել Քո քնքուշ երգը: Ամեն:

Մեր երկնավոր Հայրը հրճվում է Իր զավակներով՝ նորածին մանուկի համար երգող ծնողների նման:

Կարդա՛

Սուփոնիա 3. 14-20

Հորը՝ Տեր Աստված, քո մեջ է և կիրկի քեզ, ուրախություն կբերի քեզ, կնորոգի քեզ իր սիրով և ուրախ կլինի քո մեջ զվարճությանը, ինչպես տոնի օրը: Սուփ. 3.17

Խոսքերից շատ ավելի

Մի շրջանի կառավարչի նվիրման արարողությունից ընթացքում տեղական աֆրիկական լեզվի թարգմանված Աստվածաշունչ նվեր տրվեց: Իր շնորհակալությունը հայտնելու համար կառավարիչը Աստվածաշունչը վեր բարձրացնելով ասաց. «Հիմա գիտե՞նք, թե Աստված հասկանում է մեր լեզուն, ուստի մենք կարող ենք Աստվածաշունչը մեր իմացած լեզվով կարդալ»:

Ինչ որ լինի մեր լեզուն, մեր երկնավոր Հայրը հասկանում է այն: Սակայն շատ հաճախ մենք չենք կարողանում մեր ցանկություններն ու տենչանքները Իրեն հայտնել:

Պողոս առաքյալը քաջալերում է մեզ աղոթելու՝ անկախ մեր ունեցած զգացումներից: Նա խոսում է մեր տառապալից աշխարհի ու մեր կրած ցավերի մասին. «Բոլոր արարածները մինչև հիմա միասին հառաչում են ու ցավի մեջ են» (Հռոմ. 8.22), ու բաղձատում է այն Սուրբ Հոգու կատարած գործի հետ՝ գրելով. «Այսպես էլ Հոգին օգնում է մեր տկարություններին, որովհետև թե ինչի՛ համար պետք է աղոթենք ինչպես որ արժան է, չգիտենք, բայց Հոգին ինքը անբարբառ հառաչանքներով բարեխոս է լինում մեզ համար» (Հռոմ. 8.26): Աստծո Սուրբ Հոգին մեզ լավ է ճանաչում: Նա գիտի մեր փափագները, սրտի լեզուն ու մեր չասած խոսքերը և օգնում է մեզ Աստծո հետ մեր ունեցած հաղորդակցության մեջ: Նրա Հոգին մեզ փոխակերպում է՝ Իր Որդուն կերպարանակից անելու (հմ. 29):

Մեր երկնավոր Հայրը հասկանում է մեր լեզուն ու խոսում մեզ հետ Իր Խոսքի միջոցով: Երբ խորհենք, թե մեր աղոթքները տկար են կամ կարճ, Նրա Սուրբ Հոգին կօգնի մեզ, որ կարողանանք Իր հետ հաղորդակցվել: Նա ցանկանում է, որ մենք կարողանանք Իր հետ խոսել մեր աղոթքներով:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ հասկանում ես իմ լեզուն ու իմ խորագույն փափագները: Երբ աղոթքներս տկար ու չոր լինեն, Քո հոգով ինձ լցրու: Ամեն:

Երբ տկար գգանք մեր աղոթքների մեջ, Աստծո Հոգին կօգնի մեզ աներևակայելի կերպերով:

Կարդա՛ր
Հռոմ. 8. 22-30

Այսպես էլ Հոգին օգնում է մեր տկարություններին...:
Հռոմ. 8.26

Երգել գնդակահարող ջոկատի դիմաց

Երկու մարդ թմրեցուցիչների մագսանենդուլթյան համար տասը տարի բանտարկուլթյան ու մահվան էին դատապարտված: Բանտի մեջ անկացրած ժամանակ նրանք իմացան Հիսուսի միջոցով Աստծո սիրո մասին ու իրենց կյանքը փոխեցին: Երբ ժամանակը հասավ դիմագրավելու գնդակահարող ջոկատին, նրանք Տերունական Աղոթքն ասացին ու «Հիանալի շնորհ» երգը երգեցին: Աստծո հանդեպ իրենց ունեցած հավատքի պատճառով ու Հոգու զորուլթյան միջոցով նրանք կարողացան մահը դիմագրավել անհավատալի քաջուլթյամբ: Նրանք հետևեցին իրենց Փրկչի՝ Հիսուսի պարզած օրինակին: Երբ Հիսուսը իմացավ, թե իր մահը անխուսափելի է, երեկոյի մեծ մասը անցկացրեց բարեկամների հետ երգելով: Աներևակայելի է, թե ինչպես կարելի է երգել նման պարագաներում: Այդ երեկո Հիսուսը և իր բարեկամները Ձատիկի ընթրիքը ունեցան, որ սովորաբար ավարտվում էր 113-118 Սաղմոսներին հատուկ շարքը երգելով, որոնք ծանոթ են որպես «Ալելուլեաներ»: Մահը դիմագրավելով՝ Հիսուսը այդ երեկո երգեց իրեն պատող «մահվան երկուցքի» մասին (Սաղմ. 114:3): Սակայն միաժամանակ Նա գովերգեց Աստծո հավատարիմ կարեկցուլթյունը (117:2) և շնորհակալուլթյուն հայտնեց փրկուլթյան համար (117:14): Վստահաբար այս Սաղմոսները մխիթարեցին Հիսուսին՝ իր խաչելուլթյունից մի գիշեր առաջ: Աստծո հանդեպ Հիսուսի ունեցած վստահուլթյունը այնքան մեծ էր, որ նույնիսկ իր մահը դիմագրավելու ժամանակ, ինչին բնավ արժանի չէր, նախընտրեց Աստծո սիրո մասին երգել: Հիսուսի նման, մենք էլ կարող ենք վստահուլթյուն ունենալ, թե ինչի էլ դիմագրավենք, Աստված մեզ հետ է:

Կարդա՛ր
Մարկոս 14.16 - 26

Ինչ որ խոսոցի՛ հավատացի դրան, և չափազանց խղճալի եղա: Սաղմ. 114.10

Աղոթք - Տե՛ր, զորացրու մեր հավատքը, որպեսզի երբ փորձուլթյուններ դիմագրավենք, կարողանանք վստահուլթյամբ երգել Բո սիրո մասին: Ամեն:

Որքա՛ն քաղցր է Աստծո հիանալի շնորհի մեղեդին:

Հիսուսի պատմությունները

Երբ փոքր աղջնակ էի, սիրում էի մեր տեղական գրադարանն այցելել: Մի օր, նայելով պատանիներին հարմար գրքերի դարակները, մտածեցի, որ կարող եմ այդ բոլոր գրքերը կարգալ: Իմ խանդավառության մեջ կարևոր մի բան մոռացա, որ հաճախ նոր գրքեր էին ավելանում դարակների վրա:

Թեև շատ ջանք թափելու որոշում կայացրի, սակայն այնտեղ կային պարզապես հարյուրավոր գրքեր:

Նոր գրքերը շարունակում են լցնել գրադարանի ավելի շատ դարակներ: Հովհաննես առաքյալը վստահաբար պիտի հիանար այսօրվա գրքերի մեծ քանակով իր գրած հինգ գրքերից հետո՝ Հովհաննու Ավետարանը, Ա. Բ. և Գ Հովհաննու նամակներն ու Հայտնություն գիրքը, որոնք ձեռքով գրված էին մագաղաթների վրա:

Կարդա՛ Ա Հովհ,
1.1-4, Հովհ. 21.24-25

Բայց ուրիշ շատ բաներ էլ կան, որ Հիսուսն արեց...
Հովհ. 21.25

Հովհաննեսը այդ գրքերը գրեց, որովհետև Սուրբ Հոգուց կոչում ստացավ Հիսուսի կյանքի ու առաքելության ակնաստեսի վկայությունը տալու (Ա Հովհ. 1.1-4): Սակայն Հովհաննեսի գրությունները պարունակում էին որոշ մասնակի ներկայացում Հիսուսի բոլոր արածների և սովորացրածների մասին: Նա նաև ասաց, որ եթե Հիսուսի բոլոր արած բաները մեկ առ մեկ գրված լինեին, «աշխարհս էլ բավական չէր լինի» (Հովհ. 21.25): Հովհաննեսի արած հայտարարությունը այսօր էլ ի գորու է: Հակառակ Հիսուսի մասին գրված բոլոր գրքերի՝ աշխարհի գրադարանները պիտի չկարողանային ընդգրկել Հիսուսի սիրո ու շնորհի ամբողջ պատմությունը: Մենք նաև կարող ենք ուրախ լինել, որ ունենք մեր անձնական պատմությունները՝ իրար հետ բաժանելու և ուրախանալու, թե հավիտյանս պիտի կարողանանք նրանց հայտարարել (Սաղմ. 89.1):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք Հիսուսի կյանքի, նվիրումի ու զոհողության համար: Օգնիր մեզ, որպեսզի մեր կյանքերը ցուցանեն Նրա սերն ու շնորհը: Ամեն:

Թող քո կյանքը պատմի Քրիստոսի սիրո ու շնորհի պատմությունը:

Ապահով՝ Իր բազուկների մեջ

Բրտում եղանակը սարսափելի ու երկյուղալի էր, ու հեռախոսին հեկած հաղորդագրությունը ազդարարում էր ջրհեղեղի հնարավորությունը: Սովորականից շատ ավելի մեքենաներ էին կանգնած մեր շրջանում, որովհետև բազմաթիվ ծնողներ էին եկել դպրոցի ավտոբուսի կայանից իրենց զավակներին վերցնելու: Մեքենայի հասնելու ժամանակ արդեն անձրևը սկսել էր տեղալ, երբ տեսա մի կնոջ, որ մեքենայից դուրս գալով՝ մի հովանոց առավ մեքենայի սնդուկից: Նա քայլեց դեպի անձրևի տակ մնացող փոքր աղջնակը ու նրան պաշտպանելու համար առավ իր հովանոցի տակ, մինչև որ կարողանան ետ՝ դեպի մեքենան գնալ: Ծնողական հոգատարություն ու պաշտպանության ի՛նչ

Կարդա՛
Եսայի 40.9-11

Իր բազկով հավաքելու է գառներին, կրելու է նրանց իր ծոցում: Ես. 40.11

հիանալի պատկեր, որ ինձ հիշեցրեց մեր երկնավոր Հոր հոգատարությունը: Եսայի մարգարեն նախատեսեց անհնազանդության համար դատապարտություն, որին պիտի հաջորդեին փայլուն օրեր Աստծո ժողովրդի համար (Ես. 40.1-8): Բարձր լեռից եկած հայտարարությունը վատահեցրեց Իսրայելի ժողովրդին Աստծո հզոր ներկայությունը ու ջերմ հոգատարությունը: Բարի լուրը այն էր, թե Աստծո զորության ու հեղինակության համար վախով լցված ու մտահոգ սրտերն էլ չեն վախենալու (հմ. 9-10): Հայտարարության մեջ ներառված Տիրոջ պաշտպանության լուրը հովիվների տված պաշտպանության նման է (հմ. 11). վախկոտ փոքր ոչխարները ապահովություն պիտի գտնեն Հովվի բազուկների մեջ, ինչպես նաև կաթնատուները բարությունամբ պիտի առաջնորդվեն:

Աշխարհում, ուր ապահովության ու հոգատարության վիճակները միշտ էլ դյուրին չեն, երբ ամբողջ սրտով վստահենք Աստծուն, ապահովություն և նորոգող զորություն պիտի գտնենք Իր մեջ (հմ. 31):

Աղոթք - Հայր, աշխարհում, ուր երբեմն երկյուղներ կան, մենք մխիթարվում ենք Քո շնորհալի հոգատարությունով՝ Հիսուսի մեջ ու Նրա միջոցով: Ամեն:

Բարի լուրը այն է, թե Աստված մեզ հոգ է տանում:

Մեր բեռները կրեց

Անտվոր երևույթ է, որ ջրի կամ էլեկտրականության հաշիվը զարմանալիորեն բարձր լինի: Սակայն Հյուսիսային Կարոլինայից Քիրլըն Հիլին ստացավ ջրի մի հաշիվ, որ կարող էր մարդու սիրտ կանգնեցնել: Այն ասում էր, թե նա 100 միլիոն դոլարի վճարում ուներ: Վստահ լինելով, որ այդքան ջուր էր ծախսել անցյալ ամսին, կատակելով հարցրեց՝ կարո՞ղ է մաս-մաս վճարել պարտքը: 100 միլիոն դոլարի պարտք ունենալը կարող է ծանր բեռ լինել, սակայն դա չի կարելի բաղդատել մեղքի պատճառով իսկական բեռի հետ, որ պիտի կրենք: Փորձելով կրել բեռն ու մեր գործած մեղքերի հետևանքները՝ հոգնածության, հանցանքի ու ամոթի զգացումներ ենք ունենում: Ճշմարտությունը այն է, որ մենք անկարող ենք այս բեռը կրել:

Պետրոսը հիշեցնում է հավատացյալներին, թե միայն Հիսուսը՝ Աստծո անմեղ Որդին, կարող է մեր մեղքերի ծանր բեռը ու նրանց հետևանքները կրել (Ա Պետ. 2.24): Խաչի վրա Իր կրած մահով Հիսուսը մեր բոլոր հանցանքներն Իր վրա վերցրեց ու Իր ներումը շնորհեց: Քանի որ մեր բեռները կրեց, այլևս կարիք չունենք դատապարտության ցավերը կրելու, որին արժանի ենք: Փոխանակ վախի ու հանցանքի կյանքով ապրելու՝ կարող ենք սիրո ու ազատության նոր կյանք ունենալ (Հմ. 22-23):

Աղոթք - Տե՛ր, շատ անգամ մեր հանցանքն ու ամոթը կարող են ծանր թվալ: Օգնիր, որ կարողանանք մեր անցյալն ու նրա ցավը Քեզ բերել ու Քո խաղաղությունը վայելել՝ գիտեցալով, որ Դու արդեն այդ ամենը կրեցիր ու մեզ ազատ արձակեցիր: Ամեն:

Հիսուսը մեր մեղքերի բեռը կրեց, որպեսզի կարողանա մեզ կյանքի օրհնությունները շնորհել:

Կարդա՛ Ա Պետրոս 1. 18-25

Նա ինքը մեր մեղքերն իր մարմնի մեջ խաչափայտի վրա բարձրացրեց, որ մեղքերից հեռանալով՝ արդարության համար ապրենք, որ նրա վերքերով բժշկվեցիք: Ա. Պետ. 2.24

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԽԱՐԳՐՈՒ

Մեր թոռնիկները հափշտակված մոտիկից դիտեցին ազատատազրված լերկ մի արծյուկ: Նրանք նույնիսկ հնարավորություն ունեին նրան դիպչելու: Կենդանաբանական այգու կամավորը իր թևի վրա թառած հզոր թռչունի մասին երբ խոսեց, զարմացա, որ արու արծյուկ թևի ծավալը վեց ու կես ոտք է, սակայն ոսկորների դատարկ լինելու պատճառով նրա քաշը հազիվ երեք կիլոգրամ է: Սա ինձ հիշեցրեց լճի վրա ճախրող այն վահաշուք արծյուկին, որ պատրաստ էր վար խոյանալու և խլելու իր կերը ճիրաններով: Ու մտքիս մեջ ուրիշ մեծ թռչուն պատկերացրի՝ կապույտ բարակ ոտքերով մի ձկնկուլ, որ տեսել էի անշարժ կանգնած մի լճակի մոտ՝ պատրաստ իր երկար կտուցը խրելու ջրի մեջ: Սրանք 10000 թռչնատեսակները միայն երկուսն են, որոնք մեր խորհուրդներն ուղղում են դեպի մեր Ստեղծիչը: Հոբի գրքում նրա ընկերները վիճում են նրա կրած տառապանքների պատճառների շուրջ ու հարցնում են՝ ասելով, թե կարելի՞ է Աստծո խորհուրդները հասկանալ: Որպես պատասխան՝ Հոբը հայտարարում է. «Հարցրո՛ւ գազանին՝ թե կտա պատասխան, երկնքի թռչունին՝ թե մի բան կասի քեզ» (Հոբ 12.7): Անասունները վկայում են այն ճշմարտությունը, թե Աստված ձևավորեց ամբողջ տիգերքը ու հոգ է տանում և հսկում իր արարչագործություն վրա. «Եվ մի՞թե իր Տիրոջ ձեռքին չէ կյանքը կենդանի շնչերի ու հոգին ամեն մարդ էակի» (Հմ. 10):

Քանի որ Աստված թռչուններին հոգ է տանում (Մատթ. 6.26, 10.29), մենք էլ կարող ենք վստահ լինել, թե Նա սիրում է և հոգում քեզ և ինձ, նույնիսկ եթե հանգամանքները անհասկնալի են մեզ համար: Շուրջդ դիտիր ու Նրա մասին իմացիր:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, բաց մեր աչքերը՝ տեսնելու և Քո մասին իմանալու Քո արարչագործությունից: Ամեն:

Աստծո աշխարհը մեզ սովորեցնում է իր մասին:

Կարդա՛ր Յոբ 12. 7-10

Չարցրո՛ւ գազա -
նին թե կտա պա-
տասխան, երկնքի
թռչունին՝ թե մի
բան կասի քեզ:
Յոբ 12.7

Նախ Նրան վստահիր

-Մի՛ թող, Հայրի՛կ: -Չե՛մ թողնի: Բռնած եմ: Խոստանում եմ:

Ջրից սարսափող փոքր երեխա էի, սակայն Հայրս ուզում էր, որ լողալ սովորեմ: Նա լողավազանի ծայրից հատուկ խորունկ մասն էր տանում, ուր հնարավոր էր ինձ համար ոտքերիս վրա մնալ, հետևաբար ինքն էր իմ միակ նեցուկը: Ապա այնտեղ ինձ սովորեցնում էր հանդարտվել ու ծիպալ ջրի վրա:

Դա միայն լողալու դաս չէր, այլև վստահության: Գիտեի, որ Հայրս ինձ սիրում էր ու երբեք զիտակցաբար չպիտի թողներ վնասվել: Սակայն ես դեռ սոսկալով փաթաթվում էի նրա վզին, մինչև որ ինձ վստահեցներ, թե ամեն բան լավ պիտի լինի: Վերջապես իր համբերությունն ու ազնվությունը շահեցի ու սկսեցի լողալ: Սակայն ինձ պետք էր նախ նրան վստահել:

Երբ զգում եմ, թե «գլխիցս վեր» դժվարություն մեջ եմ, ետ եմ գնում ու մտածում այդ լողալու դասերի մասին: Նրանք օգնում են ինձ, որ կարողանամ հիշել Տիրոջ տված վստահությունը իր ժողովրդին. «Մինչև խոր ծերությունն էլ որ հասնեք, ես նույնն եմ... ե՛ս ստեղծեցի, ու ե՛ս էլ պիտի հանդուրժեմ, ե՛ս պիտի ընդունեմ ու փրկեմ ձեզ» (Ես. 46.4): Կարող է այնպես պատահել, որ միշտ Աստծո հզոր բազուկները չզգանք մեր շուրջ տարածված, սակայն Տերը խոստացել է, որ մեզ երբեք չպիտի թողնի (Եբ. 13.5): Մինչ հանգստանում ենք իր հոգածությունն ու տված խոստումների մեջ, Նա մեզ օգնում է, որ իր հավատարմությունը վստահենք: Նա մեզ մեր մտահոգություններից վեր է բարձրացնում, որպեսզի խաղաղություն գտնենք իր մէջ:

Աղոթք - Երկնավոր Հայր, փառավորում եմ Քեզ, որ ինձ կրում ես կյանքի մեջ: Խնդրում եմ, տո՛ւր ինձ հավատք՝ վստահելու, թե Դու միշտ հետո ես: Ամեն:

**Երբ վստահում եմք Աստծուն, Նա մեզ տանում է
չնորիի նոր տեղեր:**

**Կարդա՛ր
Եսայի 46. 3-13**

Օրինյալ է Տերն
ամեն օր. Աստված՝
փրկիչը մեր, պիտի
առաջնորդի մեզ:
Սաղմ. 67.19

Սոսկալի ու շքեղ բաներ

Վախը կարող է մեզ սառույցի վերածել: Մենք բոլոր պատճառները գիտենք վախենալու. ամեն ինչ, որ մեզ անցյալում ցավ է պատճառել, ամեն ինչ, որ կարող է դարձյալ մեզ նույն վիճակին տանել: Ուստի երբեմն մենք բռնված ենք ու ետ չենք կարող գնալ ու վախենում ենք առաջ գնալ՝ ասելով. «Ձեմ կարող անել: Հարկ եղած իմաստությունը և ուժը չունեմ, կամ պետք եղածի չափ քաջ չեմ դարձյալ նման ցավի ենթարկվելու»:

Կլանված եմ, թե ինչպես է հեղինակ Ֆրեդերիկ Բյուքները Աստծո շնորհը նկարագրում որպես մեղմ ձայն, որ ասում է. «Այստեղ է աշխարհը: Սոսկալի ու շքեղ բաներ պիտի պատահեն: Մի վախենա: Ես քեզ հետ եմ»: Սոսկալի բաներ պիտի պատահեն: Մեր աշխարհում վիրավորված մարդիկ են ուրիշներին վիրավորում ու շատ հաճախ՝ դաժան կերպով: Սաղմոսերգու Դավթի նման մենք էլ մեր պատմությունները ունենք, երբ չարը պաշարում է մեզ ու երբ վայրի գազանների պես մեզ վիրավորում է (Սաղմ. 56.5): Ու մենք վշտանում ենք ու ողբում (Հմ. 1-2):

Սակայն Աստծու՝ մեզ հետ լինելու համար շքեղ ու լավ բաներ էլ կարող են պատահել: Երբ մենք Իրեն ենք դիմում մեր ցավերով ու երկյուղներով, մենք մեզ գտնում ենք Իր սիրով պատված, որ ցանկացածի՝ մեզ ցավեցնելու զորությունից շատ ավելին է (Հմ. 1-3), խոր սեր, որ ամբողջ երկինքն է լցնում (Հմ. 10): Նույնիսկ եթե աղետ պատահի մեր շուրջ, Իր սերը հաստատ ապաստան է, ուր մեր սրտերը բժշկություն են գտնում (Հմ. 1, 7): Մինչև այն օրը, երբ մենք մեզ պիտի գտնենք նորոգված ուժով՝ պատրաստ ողջուներու այդ օրը Իր հավատարմության երգով (Հմ. 8-10):

Աղոթք - Բուժող Տեր, շնորհակալ եմք, որ մեզ բռնում ես ու բուժում քո անսահման սիրով: Օգնիր, որ կարողանանք քո սիրո մեջ քեզ հետևելու ուժը գտնել ու կիսել քո սերը ուրիշների հետ: Ամեն:

Աստծո սերն ու շնորհը մեզ քաջություն են պարգևում:

Կարդա՛

Սաղմոս 56

Արթնացիր, փառք իմ, արթնացիր սաղմոսներով և օրհներգությամբ, և ես կարթնանամ առավոտյան: Սաղմ. 56.7

Աղոթքն ու շղթայասողոցը

Միտում եմ Գլեղիս հորաքրոջս աներկյուղ ու քաջարի հոգին, նույնիսկ երբ շատ հաճախ այդ հոգին մտահոգում է ինձ: Մտահոգվեցի, երբ ինձ էլեկտրոնային նամակով լուր տվեց. «Երեկ մի ընկուզենի շղթայասողոցով կտրեցի»:

Պետք է ասել, թե շղթայասողոց գործածող հորաքույրս յոթանասունվեց տարեկան է: Այդ ընկուզենին ասել էր իր կարի տան ետևում, ու երբ արմատները նրա կրածույլ գետինը ճեղքելով դուրս գալու վտանգ ներկայացրին, նա իմացավ, որ այն պետք է կտրել: Սակայն նա ասաց. «Ես միշտ աղոթում եմ նման գործ սկսելուց առաջ»:

Կարդա՛ Նեեմիա 1

Քո ականջները թող բաց լինեն քո ծառաների աղոթքների համար: Նե. 1.11

Իսրայելի աքսորի օրերին, մինչ Նեեմիան որպես մատուլակ էր ծառայում Պարսից թագավորի մոտ, լուրեր լսեց Երուսաղեմ վերադարձած ժողովրդի մասին: Հասկացավ, որ գործ ուներ. «Երուսաղեմի պարիսպները մնում են նույն ձևով քանդված ու ավերված, նրա դռներն էլ՝ հրկիզված» (Նե. 1.3): Քանդված պարիսպները ժողովրդին անապահով վիճակի էին մատնել ու ենթակա դարձրել թշնամիների հարձակումներին: Նեեմիան, սիրելով իր ժողովրդին, որոշեց մի բան անել: Սակայն նա նախ աղոթեց, որովհետև թագավորը գիր էր ուղարկել պարիսպները վերականգնելու աշխատանքները կասեցնելու (Եզրաս 4): Նեեմիան աղոթեց իր ժողովրդի համար (Նե. 1.5-10) ու ապա Աստծո օգնությունը դիմեց՝ թագավորից թույլտվություն խնդրելուց առաջ (Հմ. 11):

Աղոթքը քո պատասխանն է: Աղոթքը լավագույն ձևն է որևէ պարտականություն կամ փորձություն դիմադրավելու համար:

Աղոթք - Հայր, Քո Սուրբ Հոգին մեզ հիշեցնում է, որ նախ աղոթենք: Ուխտենք անել այնպես, ինչպես Քո Հոգին է մղում մեզ անել: Ամեն:

Աղոթքը արա քո առաջին նախասիրությունը՝ փոխանակ թողնելու որպես վերջին միջոց:

Խոցող փուշ

Փուշ մտավ ցուցամատիս մեջ, ու մատս սկսեց արյունոտել: Հառաչելով ձեռքս շուտով ետ քաշեցի: Սակայն չպիտի զարմանայի, որովհետև առանց հատուկ ձեռնոցներ գործածելու փշոտ թուփ կտրելը պիտի ունենա այդ հետևանքը:

Ցավը սաստիկ էր. հոսող արյունը ուշադրություն պահանջեց: Մինչ փորձում էի վիրակապ գտնել, ինքս ինձ գտա անակնկալ մտածելիս Փրկչիս մասին: Կարդանք Հովհաննու Ավետարանի մեջ, թե ինչպես զինվորները հյուսեցին փշե պսակ ու դրին Նրա գլխին (Հովհ. 19.1-3): Մտածեցի, որ եթե մի փուշը այսքան ցավ է տալիս, որքան ցավ կարող է պատճառել ամբողջական փշե պսակը: Ու տակավին դա իր կրած տառապանքների մի փոքր մասն էր: Մտրակը ձաղկեց նրա մեջքը, գամեր խրվեցին Նրա դաստակներին ու ոտքերին, ու մի գեղարդ խոցեց Նրա կողը: Սակայն Հիսուսը նաև ենթարկվեց հոգեկան ցավի:

Եսայի 53.5-ը ասում է. «Բայց Նա խոցվեց մեր մեղքերի համար և մեր անօրենությունների համար դատապարտվեց. մեր խաղաղության համար Նա՛ պատիժ կրեց...»:

«Խաղաղությունը», որի մասին խոսում է Եսային, ուրիշ ձև է խոսելու ներումի մասին: Հիսուսը թույլ տվեց, որ խոցվի սրով, գամերով և փշե պսակով, որպեսզի մեզ տա հոգևոր խաղաղություն Աստծո հետ: Մեզ համար մեռնելու Նրա զոհաբերությունն ու կամեցողությունը հարթեցին ճամբան, որպեսզի մենք կարողանանք հարաբերություն ունենալ Աստծո հետ: Նա արեց այս բոլորը, ասում է Խոսքը, քեզ և ինձ համար:

Աղոթք - Հայր, չեմ կարող երևակայել այն ցավը, որ Որդիդ կրեց իմ մեղքերի համար: Շնորհակալ եմ, որ Նրան ուղարկեցիր ու թույլ տվեցիր, որ իմ մեղքերի համար խոցվի: Ամեն:

Հիսուսը խոցվեց սրով, գամերով և փշե պսակով՝ մեզ հոգևոր խաղաղություն պարգևելու ու Աստծո հետ հաշտեցնելու համար:

Կարդա՛ր Եսայի 53. 1-6

Բայց նա խոցվեց մեր մեղքերի համար և մեր անօրենությունների համար դատապարտվեց: Ես. 53.5

Նավերդ բեր

2017-ի Հարվի փոթորիկը աղետալի ջրհեղեղներ բերեց Արևելյան Թեքսասի շրջանում: Կատաղի անձրևները մարդկանց իրենց տների մեջ բանտարկեցին ու թույլ չտվեցին, որ նրանք կարողանան փախչել: Թեքսասի Նավատորմի անդամներից շատերը ուրիշ նահանգներից նավեր բերեցին՝ օգնելու արգելափակված ժողովրդին:

Այս դյուցազունն ու ազնիվ այրերի ու կանանց վարմունքը մեզ հիշեցնում է Առակաց 3.27-ի մեջ նշված քաջալերանքը, որ ցուցում է տալիս ուրիշներին օգնելու, երբ կարողությունն ունենք: Նրանք իրենց նավերը բերելով օգնեցին կարիք ունեցողներին: Նրանց արարքները ցույց տվեցին ուրիշների օգտի համար իրենց ունեցած կարելիությունները գործածելու կամեցողությունը:

Մենք հաճախ կարող չենք զգում մեր գործերն անելու: Շատ անգամ մտածում ենք, թե կարողությունը, փորձառությունը, կարելիությունն ու ժամանակը չունենք ուրիշներին օգնելու: Նման պարագաների մեջ մենք շուտով մի կողմ ենք քաշվում՝ անտեսելով մեր ունեցած կարելիություններն ու միջոցները, որոնք կարող են օգտակար լինել ուրիշներին: Թեքսասի Նավատորմը չկարողացավ ջրհեղեղից բարձրացող ջրերը կասեցնել, ո՛չ էլ արագ պետական օժանդակություն ապահովել, սակայն գործածեց այն, ինչ որ ուներ իր տրամադրություն տակ: Նրանք իրենց նավերը բերեցին՝ օգնելու ժողովրդին: Թող որ մենք էլ պատրաստ լինենք մեր «նավերը» բերելու, ինչ էլ լինեն նրանք, որպեսի օգնենք նրանց, որոնք մեր օգնություն կարիքն ունեն:

Աղոթք - Տեր, ինչ որ ունեմ, Քեզնից է: Օգնիր, որ կարողացամ գործածել դրանք ուրիշներին օգնելու համար: Ամեն:

Աստված հոգում է Իր ժողովրդին՝ Իր ժողովրդի միջոցով:

Կարդա՛ր Առակներ 3. 21-31

Մի՛ հապաղիր կարոտյալին բարություն անել, երբ քո ձեռքը կարող է օգնել նրան: Առ. 3.27

Միշտ ընդունված

Բազմաթիվ տարիներ իր դասերը հասցնելու համար մաքառելուց հետո վերջապես էնջին մասնավոր նախակրթարանից տեղափոխվեց սովորական դպրոց: Մինգապուրի մեջ գոյություն ունեցող կրթական մրցակցություն մեջ, երբ «լավ» դպրոցում ուսում ստանալը կարող է բարելավել ապագայի հեռանկարները, շատերը պիտի նկատեն սա որպես ձախողություն:

Էնջիի ծնողները հուսախաբ էին, ու էնջին էլ ինքն իրեն աստիճանագուրկ զգաց: Սակայն շուտով այդ ինը տարեկան աղջնակը հասկացավ, թե ինչ է նշանակում լինել իր նման միջակ աշակերտների դասարանում: Նա ասաց. «Մամա՛, ես այստեղին եմ պատկանում ու վերջապես ընդունված եմ զգում»:

Այս պարագան ինձ հիշեցրեց, թե որքա՛ն ուրախ զգաց Զաքե- ոսը, երբ Հիսուսը նրան հրավիրեց այս մաքսավորի տունը (Ղուկ. 19.5): Քրիստոսը հետաքրքրված էր նրանցով, որոնք մտածում էին, թե թերի են ու արժանի չեն Աստծո շնորհին (Հմ. 10): Մեզ գտած ու սիրած լինելով՝ այնպիսին, ինչպիսին որ ենք, Հիսուսը մեզ կատարելության խոստում է տալիս իր մահվան ու հարությունից միջոցով: Մենք կատարյալ ենք միմիայն իր շնորհով:

Ես շատ հաճախ իմ հոգևոր ճամփորդությունը գտնում եմ պայքարի վիճակի մեջ՝ գիտենալով, թե իմ կյանքը միշտ Աստծո իղեալից պակաս է: Որքա՛ն մխիթարական է գիտենալ, թե մենք միշտ ընդունված ենք, որովհետև Սուրբ Հոգին մեզ Հիսուսի նմանողությամբ կաղապարելու աշխատանքի մեջ է:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ սիրում ես այնպիսին, ինչպիսին եմ, ու ինձ կատարյալ ես դարձնում Քո Որդու զոհաբերությամբ: Սովորեցրու ինձ Քեզ հանձնվել ամեն օր Գործվելու համար: Ամեն:

Մենք կատարյալ չենք, սակայն սիրված ենք:

Կարդա՛

Ղուկաս 19.1-10

Որովհետև Սարդու Որդին եկել է, որ կորածին փնտրի ու փրկի: Ղուկ. 19.10

Իսկական դեմքս

Տարիներ շարունակ անցյալում ապրած ոչ աստվածաճանոց կյանքիս համար ամոթի ու անարժան լինելու զգացումներս բացասական անդրադարձան կյանքիս բոլոր ասպարեզներում: Ի՞նչ պիտի լիներ, եթե մարդիկ իմանային իմ անցյալի արատավոր վարքի մասին: Թեև Աստված օգնեց, որ քաջություն ունենամ եկեղեցու առաջնորդներից մեկին ճաշի հրավիրել, սակայն ջանացի իմ անձը կատարյալ ցույց տալ: Ամբողջ տունս մաքրեցի, պատրաստեցի երեք տեսակ առատ ճաշ ու լավագույնս հագնվեցի:

Վազեցի փակելու տան առջևի բակի ջրի ցողունները: Դարձնելով ծորակը՝ ճչացի, երբ ջրի մեծ ցայտը ամբողջ հագուստս թրջեց: Սրբիչով սկսեցի գլուխս չորացնել ու հագիվ էի հագուստս փոխել ու հագել պարզ տաբատ ու շապիկ, երբ զանգը հնչեց: Պատրանքով խոստովանեցի այս առավոտ իմ ունեցած միմոսությունն ու դրդապատճառը: Նոր ընկերուհիս կիսեց ինձ հետ վախով ու անապահովութամբ իր մղած պայքարները, որ առաջանում էին իր անցյալի համար ունեցած հանցավոր զգացումներից: Միասին ազոթելուց հետո ինձ հրավիրեց Աստծո անկատարների խմբակին միանալու: Պողոս առաքյալն ընդունեց իր նոր կյանքը Քրիստոսով՝ մերժելով ուրանալ իր անցյալը կամ թույլ տալ, որ իրեն կտրեն Տիրոջը ծառայելուց (Ա Տիմ. 1.12-14): Մենք էլ երբ ընդունենք Աստծո շնորհն ու ներումը, ազատ կլինենք մեր անցյալից և որևէ պատճառ չենք ունենա ամոթ զգալու:

Կարդա՛
Ա Տիմ. 1. 12-17
Եվ շնորհակալ եմ ինձ գորացնող մեր Տեր Քրիստոս Յիսուսին, որ ինձ հավատարիմ համարեց և սպասավորության մեջ դրեց:
Ա Տիմ. 1.12

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ մեր ամոթն ու անապահովությունները ջնջում ես ու գործածում ես մեզ՝ Քեզ ծառայելու, հոգ չէ թե մեր կյանքերը ինչի էին նման մեզ փրկելուց առաջ: Ամեն:

Աստված ընդունում է մեզ այնպիսին, ինչպիսին որ ենք, ու փոխում է, երբ սիրով ծառայում ենք Իրեն:

Պանձ դիտումի մեջ

Իբրև երիտասարդ մայր՝ որոշել էի արձանագրել աղջկա կյանքի առաջին տարվա դեպքերը: Յուրաքանչյուր ամիս նկարներ արեցի՝ ցույց տալու, թե ինչպես է նա փոխվել ու աճել: Իմ նախասիրած նկարներից մեկը ցույց էր տալիս հոգուս հրճվանքը՝ զվարթագին նստած տեղական ագարակից իմ գնած դատարկ դդումի մեջ: Թեև դդումը հաջորդ շաբաթների ընթացքում թռչնեց, սակայն աղջիկս շարունակեց աճել ու զարգանալ: Պողոսի ներկայացրած ճշմարտությունը, թե ո՞վ է Հիսուսը, ինձ հիշեցնում է աղջկա այդ պատկերը: Պողոսը նմանեցնում է մեր սրտում եղած Հիսուսի գիտությունը մի գանձի, որ պահված է կավե անոթի մեջ: Հիշելը, թե Հիսուսն ինչ արեց մեզ համար, մեզ տալիս է քաջությունն ու ուժը առաջ գնալու մեր պայքարների մեջ, հակառակ նրան, որ «ամեն բանում նեղված ենք» (Բ Կորնթ. 4.8): Մեր մեջ եղած Աստծո զորություն պատճառով, երբ մենք «կարոտ ենք, բայց տարակուսած չենք», հայտնում ենք Հիսուսի կյանքը (Հմ. 8): Դդումի նման, որ թռչնեց, մենք կարող ենք մաշած զգալ մեր փորձությունների ու կրած նեղությունների պատճառով: Սակայն Հիսուսի տված ուրախությունը շարունակում է աճել՝ հակառակ այդ բոլոր մարտահրավերներին: Իր մասին մեր ունեցած գիտությունը, որ է իր զորությունը ի գործ դրված մեր մեջ, պահված գանձն է մեր կավե դյուրաբեկ մարմիններում: Մենք կարող ենք աճել ու զարգանալ զժվարությունների դիմաց, որովհետև Նրա զորությունը գործի վրա է մեր մեջ:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմք, որ Քո ճշմարտությունն էս դրել իմ կյանքի մեջ: Օգնիր, որ կարողանամ դեմ կանգնել մարտահրավերներին Քո զորությունով: Թող որ շուրջիցներս տեսնեն Քո կատարած գործն իմ մեջ ու Քեզ մոտ գան: Ամեն:

Աստծո զորությունը գործի վրա է մեր մեջ:

Կարդա՛ր Բ Կորնթ. 4.7-18

Բայց այս գանձն ունենք հողե անոթներում, որպեսզի զորության գերազանցությունն Աստծունը լինի և ոչ թե մեզանից: Ա Կորնթ. 4.7

Ճամփան ընտրել

Գեղեցիկ աշնանային մի նկար ունեմ, որ ներկայացնում է մի երիտասարդ մարդու՝ Կոլորադոյի լեռների վրա, ձիու վրա նստած, երբ մտածում է իր առջև գտնվող ճամփաներից մեկն ընտրելու մասին: Այս նկարն ինձ հիշեցնում է Ռոբերտ Ֆորեսթի «Զընտրված ճամփան» բանաստեղծությունը: Նրա մեջ Ֆորեսթը խոսում է իր առջև գտնվող երկու ճամփաների մասին: Երկուսն էլ հավասարապես հրապուրիչ են, սակայն կասկածում է, թե պիտի կարողանա՞ ետ վերադառնալ: Սակայն նա պիտի ընտրեր մեկը: Ֆորեսթը գրեց. «Երկու ճամփա բաժանվում են անտառի մեջ, ու ես ընտրեցի այն ճանապարհը, որով շատերը չեն անցել: Ու այդ ընտրությունը արեց պետք եղած տարբերությունը»: Լեբան Քարոզի մեջ (Մատթ. 5-7)

Կարդա՛ր
Մատթոս 7. 13-14

Որքա՛ն նեղ է դուռը, նեղվածք՝ ճանապարհը, որ դեպի կյանք է տանում, և քիչ են այն գտնողները: Մատթ. 7.14

Հիսուսն ասաց Իրեն լսողներին. «Նեղ դռնո՛վ ներս մտեք, որովհետև լայն է դուռը և ընդարձակ այն ճանապարհը, որ դեպի կործանում է տանում, և զբանով գնացողները շատ են: Որքա՛ն նեղ է դուռը, նեղվածք՝ ճանապարհը, որ դեպի կյանք է տանում, և քիչ են այն գտնողները» (Մատթ. 7.13-14): Մեր կյանքի ճամփորդության մեջ դիմադրվում ենք զանազան ընտրություններ: Բազմաթիվ ճամփաներ հրապուրիչ ու խոստումնալից են թվում, սակայն մեկն է կյանքի ուղին: Հիսուսը հրավիրում է մեզ ճամփորդել աշակերտության ու Աստծո խոսքին հնազանդության ճամփով և Իրեն հետևել՝ ամբոխի փոխարեն: Մինչ մտածում ենք մեր առջև եղող ճանապարհի մասին, թող Աստված մեզ տա իմաստությունն ու քաջությունը Իր ճանապարհին հետևելու, որ կյանքի ճամփան է: Մեզ համար և մեր բոլոր սիրելիների համար կարևորը սա պիտի լինի:

Աղոթք - Տե՛ր, մինչ ընթանում եմք այսօրվա մեջ, տո՛ւր մեզ աչքեր՝ տեսնելու նեղ ճամփան, որ տանում է դեպի կյանք ու նրան հետևելու քաջության: Ամեն:

Ընտրիր Հիսուսի հետ քայլելու կյանքի ճամփան:

Անկարելի է բռնել

Մեքսիկական Մոցոլմ բարեկամների հետ լողալու ժամանակ Քեյթլին շնածուկի հարձակման ենթարկվեց: Ձուկը կծեց նրա ոտքերը ու քաշեց նրա մարմինը: Ձկան հարձակումի դեմ կանգնելու համար Քեյթլին հարվածեց նրա քթին: Հափշտակող ձուկը բերանը բացեց ու նրան ազատ արձակելով՝ հեռացավ: Թեև ձկան կծելը պատճառ եղավ բազմաթիվ վերքերի, որոնց համար նա կարիք ունեցավ հարյուրից ավելի կարերի, շնածուկը անկարող էր Քեյթլինին իր բերանի մեջ պահելու: Այս պատմությունը ինձ հիշեցնում է այն ճշմարտությունը, որ Հիսուսը տվեց որպես հարված մահվան՝ վերջ տալու նրա զորությունը՝ հարձակվելու ու հաղթելու իրեն հետևողներին: Պետրոսի համաձայն՝ «Անհար նար էր, որ նա (Հիսուսը) մահից բռնվեր» (Գործք 2.24):

Կարդա՛
Գործք Առ. 2.22-36

...որովհետև
անհնար էր, որ նա
մահից բռնվեր:
Գործք Առ. 2.24

Պետրոսն այս խոսքերն ասաց Երուսաղեմի մեջ հավաքված բազմությունը: Հավանաբար նրանցից շատերը կարող էին լինել այն մարդկանցից, որոնք գոչեցին «Թող խաչվի՛»՝ Հիսուսին դատապարտելու համար (Մատթ. 27.22): Որպես արդյունք այդ գոչերի՝ հռոմեացի զինվորները Նրան խաչը հանեցին, ուր կախված մնաց մինչև հաստատվեր, որ մեռած է: Հիսուսի անշնչացած մարմինը դրվեց գերեզմանի մեջ, ուր երեք օր մնալուց հետո Աստված Նրան հարություն տվեց: Իր հարությունից հետո Պետրոսը և ուրիշներ նրա հետ խոսեցին ու կերան ու քառասուն օր հետո տեսան Նրա երկինք համբառնալը (Գործք 1.9): Տե՛ր Հիսուսի երկրային կյանքը վերջ գտավ Ֆիզիկական տանջանքով ու մտային տառապանքով, սակայն Աստծո զորությունը հաղթեց գերեզմանին: Սրա համար, մահը կամ որևէ ուրիշ պայթար, չունեն կարողություն մեզ իրենց ճանկերի մեջ պահելու հավիտյան:

Աղոթք - Սիրելի՛ Հիսուս, Քո հաղթանակը մահվան հանդեպ ինձ հույս է ներշնչում: Փառավորում եմ Քեզ որպես հարուցյալ Տիրոջ, որ մեռավ, որպեսզի ես հավիտենական կյանք ունենամ: Ամեն:

Գերեզմանի ճանկը անբաղդատելի է Աստծո զորության հետ:

Ո՞ր է խաղաղությունը

1984-ին մի թղթակից հարցրեց Բոբ Դիլանին. - Դու տակավին **1** Հո՞ւլյա ունես խաղաղության համար: - Բնավ խաղաղություն չպիտի լինի,- պատասխանեց նա: Նրա տված այս պատասխանը քննադատության արժանացավ՝ հակառակ այն իրողության, որ խաղաղությունը միշտ էլ մնում է խաբուսիկ: Քրիստոսից 600 տարի առաջ շատ մարգարեներ խաղաղություն էին նախագուշակում: Սակայն Աստծո մարգարե Երեմիան հիշեցրեց ժողովրդին, թե Աստված ասել է. «Ականջ դրեք իմ ձայնին, և ես ձեզ համար Աստված կլինեմ, իսկ դուք ինձ համար կլինեք ժողովուրդ» (Եր. 7.23): Սակայն նրանք կրկին ու կրկին անտեսեցին Տիրոջը ու Նրա պատվիրանները: Սուտ մարգարեները ասացին. «Խաղաղություն է, խաղաղություն» (8.11),

Կարդա՛ր
Երեմիա 8.8-15

Աստծու հետ խաղաղություն ունենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով: ՅՈՒՆ. 5.1

սակայն Երեմիան նախատեսեց կործանում, ու Երուսաղեմն ընկավ Ն.Ք. 586-ին: Երեմիայի մարգարեությունների մեջ մենք գտնում ենք սիրող Աստծուն, որ Իր ապստամբ ժողովրդին ասաց. «Հավիտենական սիրով սիրեցի քեզ, դրա համար էլ քեզ գթության արժանացրի: Նորից պիտի շենացնեմ քեզ» (31.3-4): Աստված սիրո ու խաղաղության Աստված է: Բախումներ են առաջ գալիս Իր հանդեպ մեր ապստամբ լինելու համար: Մեղքը քանդում է աշխարհի խաղաղությունը ու կողոպտում մեզ մեր ներքին խաղաղությունից: Հիսուսը աշխարհ եկավ՝ մեզ Աստծո հետ հաշտեցնելու ու ներքին խաղաղություն տալու համար: Պողոսը գրեց. «Արդ մենք, հավատով արդարացած լինելով, Աստծո հետ խաղաղություն ունենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (Հռոմ. 5.1): Հոգ չէ, որ բնակվում ենք պատերազմական շրջանների կամ խաղաղ միջավայրի մեջ, Քրիստոսը հրավիրում է մեզ Իր խաղաղության:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմք, որ մեզ խաղաղություն ես պարգևում, որ ոչ մի պատերազմ կամ բախում չի կարող կորզել մեր կյանքերից: Օգնիր, որ Քո մեջ հանգչեմք: Ամեն:

Աստված չի կարող Իրենից անկախ ուրախություն և խաղաղություն տալ մեզ, որովհետև այդպիսի բան գոյություն չունի:

Մեծ աստիճանական ձայնի բարձրացումը

Տտուգներս ինձ սովորեցրին ամեն տեսակի երաժշտություն սիրել ու զնահատել՝ ժողովրդականից մինչև դասական: Հետևաբար, սիրոսս սկսեց արագ բաբախել, երբ Ռուսաստանի մեծագույն երաժշտական սրահներից մեկը՝ Մոսկվայի երաժշտանոց մտա՝ լսելու Մոսկվայի Ազգային Միմֆոնիան: Մինչ դեկավարը պատրաստեց երաժիշտներին Չայկովսկու վարպետությունը գրած երաժշտական կտորը նվագելու, երաժշտությունը սկսեց ուժեղանալ՝ պատրաստելով հիանալ աստիճանական ձայնի բարձրացումով, որ եղավ երաժշտության գագաթնակետը: Գրավիչ ու սքանչելի պահ էր, ու ներկաները մեծ ծափահարություններով ոտքի ելան: Աստծո խոսքը առաջանում է դեպի պատմության ուժեղագույն բարձրացումը, որ է Հիսուս Քրիստոսի խաչն ու հարությունը: Ազամի ու Եվայի՝ Եղեմում մեղք գործելու դեպքից անմիջապես հետո Աստված խոստանում է Փրկչի գալուստը (Մն. 3.15), ու ամբողջ Հին Կտակարանում այդ նյութը զարգանում է: Խոստումը հնչեց Բաղարջակերքի (Զատկի) նոխազի (Ել. 12.21), մարգարեների հույսի (Ա Պետ. 1.10) և Աստծո ժողովրդի փրկության տենչի մեջ: Ա Հովհաննու 4.14-ը հաստատում է, թե այդ պատմությունը դեպի ո՞ր է ուղղվում. «Մենք տեսանք ու վկայում ենք, որ Հայրն իր Որդուն ուղարկեց աշխարհի Փրկիչ լինելու»: Ինչպե՞ս: Աստված կատարեց իր խոստումը՝ ազատելու իր կտորած աշխարհը, երբ Հիսուսը մեռավ ու հարություն առավ մեզ ներելու ու նորոգելու համար ու հաշտեցնելու մեր Արարչի հետ: Մինչ հիշում ենք, թե Աստծո Որդին ի՞նչ է արել մեզ համար, մենք տոնում ենք Աստծո շնորհի ու մեր ու այս աշխարհի ազատումի աստիճանական ձայնի բարձրացումը՝ Հիսուսին:

Կարդա՛ր
Ա Հովհ. 4.14-21

Հայրն իր Որդուն
ուղարկեց աշխարհի
Փրկիչ լինելու:
Ա Հովհ. 4.14

Աղոթք - Հայր, Որդուդ գալուստը իր մեծ ազդեցությունն է ունեցել այս աշխարհի վրա: Երախտապարտ եմ, որ Նա եկավ ինձ ազատելու ու նորից պիտի գա այս աշխարհը վերանորոգելու համար: Ամեն:

Տոնե՛նք Հիսուս պարգևը:

Անակնկալ ազնվություն

Բարեկամուհիս հերթի էր սպասում՝ վճարելու իր արած գնումների համար, երբ իր առջև կանգնած մարդը ետ դառնալով 14 դոլար արժեցող մի վկայագիր հանձնեց: Նրա ազնվությունը տեսնելով՝ արտասովեց, ապա սկսեց ծիծաղել իր արտահայտած հուզումնի վրա: Այս անակնկալ ազնիվ արարքը իր սրտին դիպավ ու հույս ներշնչեց իր դժվար հանգամանքներում: Ծնորհակալություն հայտնեց Տիրոջը իր բարություն համար, որ հասավ ուրիշի միջոցով:

Տալը Պողոս առաքյալի՝ Եփեսոսի մեջ եղած հեթանոս Քրիստոնյաներին գրած նամակի նյութերից մեկն էր: Նա կոչ արեց, որ իրենց հին կյանքը ետևում թողնեն ու փարվեն նոր կյանքի՝ ասելով, թե փրկված են շնորհով: Նա բացատրում է, թե այս փրկող շնորհից է բխում «բարի գործերի» մեր փափազը, որովհետև մենք ստեղծված ենք Աստծո պատկերով ու Նրա «ստեղծագործությունն ենք» (2:10): Մենք շուկայում կանգնած այդ մարդու նման կարող ենք Աստծո սերը տարածել մեր ամենօրյա գործերով:

Անշուշտ կարիք չունենք նյութապես տալու՝ Աստծո շնորհը վայելելու համար: Կարող ենք Նրա սերը ցույց տալ շատ ուրիշ արարքներով: Կարող ենք ժամանակ տրամադրել մեկին լսելու, երբ մեզ հետ է խոսում: Կարող ենք հարց տալ, թե ինչպես են նրանք, որոնք ծառայում են մեզ: Կարող ենք մնալ օգնելու նրան, որ օգնություն կարիք ունի: Երբ տալիս ենք ուրիշներին, մենք ուրախություն ենք ստանում դրա փոխարեն (Գործք Առ. 20:35):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, մեզ ստեղծեցիր Քո պատկերով, ու մենք ուրախ ենք, որ կարող ենք Քո սերը կիսել: Օգնիր մեզ՝ տեսնելու այն առիթները, երբ կարող ենք ուրիշներին տալ: Ամեն:

Մենք ստեղծված ենք Աստծո սերը կիսելու՝ իր պարգևները տալով

Կարդա՛
Եփես. 2. 1- 10

Որովհետև նրա ստեղծագործությունն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար: Եփես. 2.10

Քո ճամփան, ոչ իմը

Քամիլը և ժոեիլը մեծ հուզմունք ապրեցին, երբ իմացան, որ Իրենց ութ տարեկան աղջկան՝ Ռիմային ախտորոշել են շատ հազվագյուտ արյան քաղցկեղ: Հիվանդությունը զարգացավ մինչև գլխուղեղ ու հասավ կաթվածի, և Ռիման ընկավ մահաքունի մեջ: Հիվանդանոցի բժշկական խումբը խորհրդակցեց նրա ծնողներին հետ, որպեսզի հուղարկավորություն կարգադրություններ անեն՝ մեկ տոկոս ապաքինումի հույս տալով: Քամիլը և ժոեիլը ծոմապահություն արեցին՝ հրաշքի ակնկալություն: Քամիլն ասաց. - Երբ աղոթում եմք, պետք է վստահենք Աստծուն, ինչ էլ լինի վիճակը: Ու աղոթենք Հիսուսի նման՝ ասելով՝ ոչ թե իմ կամքը, այլ Հա՛յր, Քո կամքը թող լինի: Իսկ ժոեիլն ասաց. -Սակայն շատ եմ ուզում, որ Աստված բուժի նրան: -Այո՛, ու պետք է խնդրենք,- ասաց Քամիլը:

Կարդա՛ր
Ղուկաս 22. 39-46

Ամբողջ սրտով
հույսդ դիր Աստծու
վրա և մի՛ հպարտացիր քո իմաստությունքամբ: Առ. 3.5

- Սակայն Աստծուն կպատվենք, երբ մեր անձերը Իրեն հանձնենք, եթե նույնիսկ շատ դժվար է, որովհետև այդպես արեց Հիսուսը:

Հիսուսը խաչ բարձրանալուց առաջ աղոթեց. «Հա՛յր, եթե ցանկանում ես, այս բաժակն անցկացրո՛ւ ինձանից, սակայն ոչ թե իմ, այլ քո կամքը թող լինի» (Ղուկ. 22.42): Աղոթելով «այս բաժակն անցկացրո՛ւ ինձանից»՝ Հիսուսը խնդրեց խաչ չբարձրանալ, սակայն Նա Հորը հանձնվեց սիրով: Մեր ցանկությունները Աստծուն հանձնելը դյուրին չէ, ու դժվար է հասկանալ Նրա իմաստությունը մարտահրավերների ժամանակ: Քամիլի և ժոեիլի աղոթքները պատասխան ստացան հիանալի կերպով: Ռիման հիմա տասնհինգ տարեկան առողջ պատանուհի է: Հիսուսը հասկանում է ամեն պայքար: Նույնիսկ երբ մեր օգտի համար Իր խնդրանքը անպատասխան մնաց, Նա ցույց տվեց մեզ, թե ինչպես կարելի է Աստծուն վստահել յուրաքանչյուր պահի:

Աղոթք - Հայր, ուզում եմ ամբողջովին Քո անխախտ սիրուն վստահել ու ինքս ինձ հանձնել Քեզ՝ որպես Քո ծառա: Ամեն:

Աստված միշտ արժանի է մեր նվիրումին ու փառաբանության:

Երախտագիտության արտահայտություն

Հարատև ցավերի ու սահմանափակ շարժունակության պատճառով տարիների հոգնությունն մնայուն դարձավ ինձ համար: Այդ պատճառով ավելի պահանջկոտ ու դժգոհ դարձա: Սկսեցի գանգատվել ամուսնուս հոգատարությունից: Տան մաքրություն համար սկսեցի նեղել նրան: Հակառակ նրան, որ ճանաչածս լավագույն խոհարարն է, սկսեցի բժախնդրություն ցուցաբերել ճաշերի զանազանության պակասի պատճառով: Երբ նա վերջապես հայտնեց, թե զանգատներս իրեն ցավեցնում էին, գայրացա: Նա գաղափար չուներ, թե ես ինչ վիճակի մեջ էի: Վերջապես Աստված օգնեց ինձ, որ կարողանամ տեսնել սխալներս ու խնդրել ամուսնուս ու Աստծո ներողամտությունը:

Կարդա՛
Թվեր 11. 1-11

Եթե հավաքվի ծովի ամբողջ ձուկը, կբավարարե՞նք նրանց: Թվ. 11.22

Ավելի լավ հանգամանքներում լինելու ցանկությունը կարող է զանգատվելու առիթ տալ և նույնիսկ հարաբերություններ քանդող անձնակենտրոնության հասցնել: Իսրայելցիները ծանոթ էին այս դժվարությանը: Թվում է, թե նրանք երբեք գոհ չէին ու միշտ նեղանում էին Աստծո նախատեսության համար (Ել. 17.1-3):

Հակառակ նրան, որ Տերը հոգաց Իր ժողովրդի անապատի մեջ «երկնքից հաց» տալով (16.4), նրանք սկսեցին ուրիշ ուտելիք պահանջել (Թվ. 11.4): Փոխանակ ուրախ լինելու Աստծո արած ամեն օրվա հրաշքների ու հոգատարության համար՝ իսրայելցիները ավելին ուզեցին. ավելի լավ բան, տարբեր բան կամ նույնիսկ այն, ինչ որ ունեին անցյալում (Հմ. 4-6): Նրանք իրենց բարկությունը թափեցին Մովսեսի վրա (Հմ. 10-14):

Աստծո բարություն ու հավատարմության վստահելը կարող է օգնել մեզ, որ երախտագիտության հոգի ունենանք:

Աղոթք - Տե՛ր, խնդրում եմ օգնիր մեզ, որ կարողանանք դեմ կանգնել մեր դժգոհությանը՝ ուրախ լինելով երախտագիտության գոհացնող անուշության համար: Ամեն:

Երախտագետ փառաբանությունը մեզ գոհացնում է ու Աստվածահաճ է:

Չամաձայնել՝ չհամաձայնելու

Հիշում եմ հորս խոսքը, թե որքա՛ն դժվար է հեռու մնալ Աստվածաշնչի մեկնաբանություն անավարտ վեճերից: Որպես հակադրություն՝ նա հիշեց, թե որքա՛ն լավ է, երբ երկու կողմերը համաձայնում են չհամաձայնել: Սակայն կարելի՞ է մի կողմ թողնել անհաշտ տարբերություններ, երբ շատ բաների վրա կարող է դա ազդել: Այս այն հարցերից մեկն է, որին պատասխանում է Պողոս առաքյալը Հռոմեացիներին իր գրած նամակի մեջ: Գրելով իր ընթերցողներին, որոնք բռնված էին ընկերային, քաղաքական և կրոնական վեճերով, առաջարկում է միջոցներ հասարակ ասպարեզ գտնելու՝ նույնիսկ ամենից բևեռացնող վիճակների մեջ (14.5-6): Ըստ Պողոսի՝ համաձայնել չհամաձայնելու ձևը, հիշելն է, թե մեզնից յուրաքանչյուրը հաշիվ պիտի տա Տիրոջը ոչ միայն մեր կարծիքների համար, այլև թե ինչպես ենք վարվում իրար հետ մեր տարբերությունների մեջ (հմ. 10):

Վիճաբանությունները իրականում կարող են լինել բացառիկ առիթներ՝ հիշելու, թե մեր գաղափարներից ու Աստվածաշնչի մեր մեկնաբանություններից ավելի կարևոր բաներ կան: Բոլորս էլ հաշիվ պիտի տանք, թե արդյոք իրար ու նույնիսկ մեր թշնամիներին սիրե՞լ ենք, ինչպես Քրիստոսը մեզ սիրեց:

Հիմա, երբ նրա մասին եմ մտածում, հիշում եմ, թե հայրս խոսում էր, թե որքա՛ն լավ է ոչ միայն համաձայնելը՝ չհամաձայնելու համար, այլ այդ անելը փոխադարձ սիրով ու հարգանքով:

Աղոթք - Չայր, խնդրում եմք օգնիր, որ համբերող ու ազնիվ լինենք նրանց հետ, որոնք մեզ հետ համաձայն չեն որևէ բանի կամ ամեն բանի համար: Ամեն:

Կարող եմք սիրով համաձայնել՝ չհամաձայնելու համար:

Կարդա՛ր
Չռոմ.14. 1-13

Ուրեմն խաղաղության և միմյանց շինության բաների հետևից գնանք:
Չռոմ. 14.19

Խավարի մեջ հույս

Ավանդուլթյան համաձայն՝ Քու Յուլանը իմաստունն ու հայրենասեր չինացի կառավարիչ էր, որ ապրեց այն ժամանակաշրջանում (475 - 246 Ն.Ք.), որ ծանոթ էր որպես պատերազմական վիճակների շրջան: Ասվում է, թե նա հաճախակի փորձեց ազդարարել թագավորին սպառնացող վտանգի մասին, որ կարող էր երկիրը ավերել: Սակայն թագավորը մերժեց լսել նրա տված խրատը: Վերջապես Քու Յուլանը աքսորվեց ու երբ լսեց իր երկրի կործանման մասին, անձնասպան եղավ:

Քու Յուլանի կյանքը որոշ չափով նմանվում է Երեմիա մարգարեի կյանքին:

Երեմիան էլ ծառայեց թագավորների, որոնք մերժեցին լսել իր ազդարարությունները, ու իրենց երկիրը քանդվեց: Քու Յուլանը տեղի տվեց, սակայն Երեմիան գտավ հարազատ հույս: Ինչո՞ւ այս տարբերությունը: Երեմիան գիտեր այն Տիրոջը, որ տալիս է միակ իսկական հույսը: «...Քո հույսը կիրականանա, - ասում է Տերը. - քո որդիները կվերաբնակվեն իրենց սահմաններում» (Եր. 31:17): Թեև Երուսաղեմը կործանվեց 586-ին Ն.Ք., սակայն հետո վերաշինվեց (տե՛ս՝ Նե. 6:15):

Որոշակի հանգամանքներում մենք բոլորս գտնվում ենք վիճակների մեջ, որոնք կարող են հուսահատեցնել մեզ: Հնարավոր է՝ ստանանք վատ բժշկական տեղեկագիր, աշխատանքի անակնկալ կորուստ և կամ փշրված ընտանեկան վիճակ: Սակայն երբ կյանքը մեզ ցած նետի, մենք դեռ կարող ենք նայել վեր՝ գահի վրա նստած Աստծուն: Նրա ձեռքերում են մեր օրերը, ու մեզ իր սրտին մոտ է պահում:

Աղոթք - Տե՛ր, լցրու ինձ հույսով և տո՛ւր ինձ շոշափելի հիշեցում, թե ամեն բան լավ պիտի լինի Քո կամքով ու Քո ժամանակի մեջ: Ամեն:

Աշխարհը լավագույնին է ձգտում, սակայն Տերը լավագույն հույսն է առաջարկում:

Կարդա՛ր
Երեմիա 31. 16-26

Ես արբեցրի բոլոր ծարավ հոգիներին, բոլոր քաղցած հոգիներին լիացրի: Եր. 31:25

Արգահատանքի ու կարեկցության հոգս

Անա Ֆրանքը ծանոթ է իր օրագրով, ուր նկարագրում է իր ընտանիքի տարիներով թաքնվելը Համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ: Երբ նա բանտարկվեց, նացիստների մահվան գաղթակայանում իր հետ եղողներն ասացին. «Նրանց համար նրա թափած արցունքները երբեք չցամաքեցին»: Նա եղավ իր հետ բանտարկվածների համար «օրհնյալ ներկայություն»: Այս պատճառով հայտնի ակադեմիկոս ու աստվածաբան Քեննեթ Բեյլին եզրակացրեց, թե Աննան բնավ «արգահատանքի ու կարեկցության հոգնություն ցույց չտվեց»:

Կարեկցության հոգսը շատ վատ աշխարհում ապրելու արդյունքներից մեկը կարող է լինել: Մարդկային տառապանքի անչափելի ծավալը կարող է մեր մեջ լավ մտադրություն ունեցողներին իսկ թմրեցնել: Սակայն կարեկցության հոգնությունը Հիսուսի մոտ չկար: Մատթեոս 9.35-36-ն ասում է. «Հիսուսը ման էր գալիս բոլոր քաղաքներում ու գյուղերում, ուսուցանում նրանց ժողովարաններում, արքայության Ավետարանը քարոզում, ժողովրդի մեջ ամեն ցավ ու ամեն հիվանդություն բժշկում: Եվ նա, բազմությունները տեսնելով, գլխաց նրանց որ հոգնել ու ցիրուցան էին եղել, ինչպես ոչխարները, որ հովիվ չունեն»: Աշխարհը տառապում է ոչ միայն ֆիզիկական կարիքների համար, այլև հոգևոր կոտորածության: Հիսուսը եկավ այդ կարիքները հոգալու ու կոչ արեց իր հետևողներին, որ իրեն միանան այս գործի մեջ (Հմ. 37-38): Նա աղոթեց, որ Հայրը գործիչներ հանի, որպեսզի նրանք հոգատար լինեն նրանց նկատմամբ, որոնք առանձնության, մեղքի ու հիվանդության պայքարների մեջ են:

Աղոթք - Յայր, ներիր ինձ, երբ կարիք ունեցողներին անտեսում եմ: Հոգովդ ինձ զորացրու, որպեսզի պատասխանեմ այնպես, ինչպես Դու ես առաջնորդում ու հայթայթում: Ամեն:

Ցավով լեցուն աշխարհում մենք կարող ենք օրհնակ լինել Հիսուսի ցույց տված կարեկցության:

Կարդա՛ Մատթեոս 9. 35-38

Եվ նա, բազմությունները տեսնելով, գթաց նրանց, որ հոգնել և ցիրուցան էին եղել, ինչպես ոչխարները, որ հովիվ չունեն: Մատթ. 9.36

Աղվեսներ բռնել

Մինչ խոսում էի բարեկամուհուս հետ, հրձվանքս հայտնեցի, երբ լսեցի ծովածիժառնների կոկոսը: Բայց նա ասաց. «Անպիտան արարածներ», որովհետև իր համար նրանք ամենօրյա գլխացավանք էին: Որպես լոնդոնաբնակ՝ ես էլ նույն զգացումն ունեմ աղվեսների մասին: Չեմ դիտում նրանց սիրուն կենդանիներ, այլ իրենց ետևում գարշահոտ աղտեղություն թողնող դեզերող արարածներ: Աղվեսների մասին կարդում ենք Երգ Երգոցում, որ հայտնում է այր ու կնոջ միջև եղած սերը: Մի շարք մեկնաբաններ հավատում են, թե այս սիրո հարաբերությունը Աստծո ու Իր ժողովրդի միջև եղած հարաբերությունն է: Հարսը զգուշացնում է փոքր աղվեսների մասին՝ խնդրելով իր փեսայից, որ նրանց բռնի (2.15): Այգու խաղողը ուտել ցանկացող աղվեսները կարող են փափուկ տունկերը փչացնել: Մինչ հարսը նայում է իրենց ամուսնական կյանքին, չի ցանկանում, որ գարշածիժուն խանգարի իրենց սիրո ուխտը: «Աղվեսները» ինչպե՞ս կարող են խանգարել մեր հարաբերությունը Աստծո հետ: Ինձ համար, երբ «այո՛» եմ ասում բազմաթիվ խնդրանքների, կարող եմ ճնշումի տակ ու անհաճո վիճակի մեջ լինել: Եվ կամ եթե ականատես եմ լինում հարաբերությունների բախումների, կարող եմ փորձության ենթարկվել բարկանալու կամ հուսահատվելու: Մինչ խնդրում եմ Աստծուց, որ այս տեսակի «աղվեսներին» ազդեցությունը սահմանափակի - նրանց, որոնց ես եմ թույլ տվել ներս մտնելու բաց դռնից, կամ նրանց, որոնք ներս են սպրդել - կարող եմ վստահություն ու սեր ունենալ առ Աստված, երբ զգում եմ իր ներկայությունն ու տված ուղղությունը: Ո՞րն է քո կարգավիճակը: Ինչպե՞ս կարող ես Աստծո օգնությունը խնդրել, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ Նրանից հեռու չլինելը:

Կարդա՛
Երգ Երգոց 2. 14-17
Բռնեցեք փոքրիկ աղվեսներին, որ ապականում են այգիները: Երգ Երգոց 2.15

Աղոթք - Տե՛ր Աստված, խնդրում եմ, պահպանիր իմ հարաբերությունը Քեզ հետ ու դուրս նետիր ամեն ինչ, որ կարող է իմ աչքերը Քեզնից հեռացնել: Ամեն:

Աստված կարող է պաշտպանել մեր ունեցած հարաբերությունը Իր հետ:

Տե՛ս քո քաղաքը

«Տե՛ս մեր քաղաքը, ինչպես մենք ենք տեսնում»։ Դեստոյթի (Մի-
ջիգան) քաղաքային զարգացման մի խումբ գործածեց այս նշանա-
բանը՝ իր տեսլականը հայտնելու քաղաքի ապագայի համար։ Սա-
կայն ծրագիրը դադարեց, երբ քաղաքացիները թերի բան տեսան
մարտարչավի մեջ։ Աֆրիկյան ամերիկացիները մեծամասնություն
են քաղաքի բնակչության ու բանվոր դա-
սակարգի։ Սակայն նրանց դեմքերը բա-
ցակա էին ցուցատախտակների ու պաս-
տառների վրայի նկարներում, որոնք թե-
լադրում էին, որ մարդիկ դիտեն քաղաքը
այնպես, ինչպես իրենք են տեսնում։ Հի-
սուսի երկրակիցներն էլ նման թերի կետ
ունեին ապագայի հանդեպ իրենց տեսլականում։ Որպես Աբրահա-
մի որդիներ՝ նրանք մտահոգ էին միայն հրեա ժողովրդի ապագա-
յով։ Նրանք չկարողացան հասկանալ Հիսուսի մտահոգությունը
սամարացիների, հռոմեացի զինվորների կամ ցանկացած մեկի հա-
մար, որ կապ չուներ իրենց ընտանեկան արմատների, բաբբիների
կամ տաճարի պաշտամունքի հետ։ Դեստոյթիցիների թերի կետը
նմանեցնում եմ Երուսաղեմին։ Ես շատ հաճախ միտում եմ ունե-
նում տեսնելու միայն այն մարդկանց, որոնց կյանքի փորձառությունը
հասկանում եմ։ Սակայն Աստված ունի՝ ձևը՝ իր միությունը բե-
րելու մեր այլազանություն մեջ։ Մեր կարծածից ավելի ենք մենք
իրար նման։ Աստված ընտրեց անապատի մեջ մի վրանաբնակի՝ Աբ-
րամին, օրհնություն բերելու աշխարհի բոլոր բնակիչներին (Մանդ-
12.1-3)։ Հիսուսը գիտի ու սիրում է բոլոր նրանց, որոնց տակավին
ճանոթ չենք կամ չենք սիրում։ Միասին ապրում ենք Նրա շնորհով
ու ողորմությունով, որ կարող է մեզ օգնել, որ տեսնենք իրար, մեր
քաղաքները ու իր թագավորությունը, ինչպես Ի՛նքն է տեսնում։

Կարդա՛
ծննդոց 12. 1-3

Քեզնով պիտի
օրհնվեն աշխարհի
բոլոր ժողովուրդ-
ները։ Ծննդ. 12.3

Աղոթք - Երկնքում ապրող Աստված, խնդրում եմ բաց մեր աչքե-
րը մարդկանց ու սրտերի, որոնք մեր կարծածից շատ ավելի են մեզ
նման։ Օգնիր նաև, որ տեսնենք, թե Քո կարիքն ունենք։ Ամեն։

Ամեն մարդ ամեն տեղ ավելի ու ավելի է մեզ նման։

Դեռ թագավորն է

Լրատվական մի տեղեկագիր այն անվանեց «Քրիստոնյանե-
րի համար եզակի անողոք մի օր տասնյակ տարիների մեջ»:
Կիրակի օրվա պաշտամունքի հավաքվածների վրա 2017-ի ապ-
րիլի զույգ հարձակումները մեր հասկացողությունից դուրս
են: Այլ խոսքով, չունենք մի դասակարգ, որ կարող է նկարա-
գրել պաշտամունքի տան մեջ եղած արյունահեղությունը: Սա-
կայն մենք կարող ենք մխիթարվել ու-
րիշներից, որոնք նման ցավեր գիտեն:

Երուսաղեմի ժողովրդի մեծամասնու-
թյունը աքսորի մեջ էր կամ արդեն սպան-
ված, երբ Ասափը գրեց 73-րդ Սաղմոսը: Իր
սրտի ցավը դուրս թափելով՝ նա նկարա-
գրեց տաճարի կործանումը անգույժ գավթիչների ձեռքով ու ասաց.
«Քեզ ատողները պարծեցան իրենց բարօրությունը» (Հմ. 4): «Հրի
մատնեցին քո սրբարանը, և հողին հավասարեցրին քո անվան խո-
րանը» (Հմ. 7): Սակայն Սաղմոսերգուն ապաստան գտավ իր համար՝
հակառակ այդ ահռելի իրողության, ու քաջալերեց մեզ, որ մենք էլ
կարողանանք նույնն անել: Ասափն ասաց. «Աստված, Դու մեր թա-
գավորն ես հավիտենությունից ի վեր, դու, որ փրկություն գործե-
ցիր երկրի վրա» (Հմ. 12): Այս ճշմարտությունը կարողություն է
տալիս Ասափին, որ Աստծո զորությունը տեսնի, հակառակ նրան,
որ Տիրոջ փրկությունը այդ պահին բացակա էր թվում: Ասափն
աղոթեց. «Նայի՛ր քո ուխտին... Թող խիղճն ամոթով ետ չդառնա,
և աղքատն ու տնանկր թող օրհնեն սուրբ անունդ» (Հմ. 20-21):

Երբ արդարությունն ու ողորմությունը բացակա են թվում, Աստծո
զորությունն ու սերը որևէ կերպ չեն պակասում: Ասափի հետ մենք էլ
վստահությունը կարող ենք ասել. «Աստված է իմ թագավորը»:

Աղոթք - Տե՛ր, Սաղմոսերգուի հետ մենք էլ ենք աղոթում Քո
անվան համար: Տույց տուր Քո զորությունն ու կարեկցություն-
ը: Կանգնիր ու պաշտպանիր իրավունքդ: Ամեն:

Աստված պիտի պաշտպանի իր անունը:

Կարդա՛
Սաղմոս 73.4-8, 12-23
Ելի՛ր, Աստված, և
կատարի՛ր դա-
տաստանդ:
Սաղմ. 73.22

Իմաստության աղբյուրը

Մի տղամարդ դատ բացեց մի կնոջ դեմ՝ պնդելով, որ իր շունն է գողացել: Դատարանում կիներն ասաց, թե իր ունեցած շունը չի կարող այդ մարդունը լինել ու ասաց դատավորին, թե որտեղից է գնել: Վճռելով, որ շան իսկական տիրոջ ինքնությունը պարզ էր, դատավորը ազատ արձակեց շանը դատարանում: Շունը պոչը շարժելով արագ տղամարդու մոտ գնաց:

Սողոմոնը, որպես Իսրայելի դատավոր, պետք է նման հարց լուծեր: Երկու կանայք ասացին, թե նույն նորածին մանչուկի մայրն են: Երկու կողմերին լսելով՝ Սողոմոնը սուր խնդրեց, որպեսզի երեխան երկուսի բաժանի:

Մանչուկի իսկական մայրը աղերսեց, որ որդին մյուս կնոջը տրվի՝ ընտրելով իր որդու փրկությունը, նույնիսկ եթե իրենը չպիտի լիներ (Գ Թագ. 3:26): Սողոմոնը որդուն նրան տվեց:

Իմաստությունը անհրաժեշտ է, երբ որոշում ենք, թե ինչն է արդար ու բարոյական, շիտակ կամ սխալ: Եթե իսկապես արժևորում ենք իմաստությունը, կարող ենք Սողոմոնի նման Աստծուց խորատես սիրտ խնդրել (Հմ. 9): Աստված կարող է պատասխանել մեր խնդրանքին՝ օգնելով, որ կարողանանք հավասարակշռել մեր կարիքներն ու փափագները ուրիշների օգտի համար: Նա նաև կարող է մեզ օգնել, որ կարողանանք կշռել ու բաղդատել անմիջական շահերը մնայուն կամ հավիտենական շահերի հետ, որպեսզի կարողանանք Նրան պատվել մեր ապրած կյանքով: Մեր Աստվածը ոչ միայն կատարելապես իմաստուն դատավոր է, այլև անձնական խորհրդատու, որ փափագում է մեզ տալ մեծ քանակով աստվածային իմաստություն (Հակ. 1:5):

Աղոթք - Աստված, Քե՛զ եմ պաշտում որպես իմաստության ճշմարիտ աղբյուր: Խնդրում եմ, ցույց տուր ինձ ինչպես ընտրել, որ պատիվ բերի Քո անունին: Ամեն:

Իմաստության կարի՞ք ունես: Խնդրիր Աստծուց՝ աղբյուրից, որ կարող է քեզ տալ:

Կարդա՛
Գ Թագ. 3. 16 - 28
Քու ծառայիդ
իմաստուն սիրտ
տուր: Գ Թագ. 3.9

Չայրը ատամնաբույժի մոտ

Չեմ ակնկալում հմուտ դաս սովորել Հոր սրտի մասին ատամնաբուժարանում, սակայն սովորեցի: Ես այնտեղ էի իմ տասը տարեկան մանչուկի հետ: Քանի որ մանկական ատամի տակից, որ դեռ չէր ընկել, չափահասի ատամ էր դուրս գալիս, հարկ էր հանել այն. ուրիշ ելք չկար:

Տղաս արցունքոտ աչքերով աղերսեց ինձ. «Հայրի՛կ, ուրիշ միջոց չկա՞»: Չե՞նք կարող սպասել ու տեսնել, թե ինչ պիտի լինի: Խնդրում եմ, հայրի՛կ, չեմ ուզում, որ այս ատամը քաշենք»: Նրա աղերսը սիրտս ճմլեց, սակայն ասացի. «Որդի՛ս, ների՛ր, պետք է հանենք: Ուրիշ ձև չկա»: Մինչ ատամնաբույժը քաշում էր նրա համառ ատամը, որդուս ձեռքը բռնեցի և արցունքոտ աչքերով տեսա նրա գալարվելն ու տանջվելը: Չէի կարող նրա ցավը տանել. լավագույնը, որ կարող էի առաջարկել, կողքին լինելն էր:

Այդ պահին հիշեցի Հիսուսին Գեթսեմանի պարտեզում, երբ նա խնդրեց ուրիշ միջոց: Ինչքա՛ն նրա խոսքը Հոր սիրտը կոտրեց, երբ տեսավ իր սիրելի Որդուն նման ցավի մեջ: Ու դեռ այլ միջոց չկար Իր ժողովրդին ազատելու:

Մեր կյանքերում երբեմն անախորժ ու անհաճո պահեր ենք ունենում, ինչպես իմ որդին ունեցավ: Սակայն Հիսուսի կատարած գործի համար Իր Հոգու միջոցով մեր սիրող Հայրը միշտ էլ մեզ հետ է (Մատթ. 28.20):

Աղոթք - Չայր, շնորհակալ եմք, որ մեզ այնքան սիրեցիր, որ Քո Որդուն ուղարկեցիր մեզ փրկելու՝ հակառակ նրան, որ դա Քո սիրտը կոտրեց: Մեր ուրախության կամ ցավի մեջ շնորհակալ եմք Քո Չոգու համար, որ մեզ կրում է ու հոգում: Ամեն: **Մեր սիրող Երկնավոր Չայրը խոստում է տվել, որ ամեն ժամանակ մեզ հետ պիտի լինի, նույնիսկ մեր խավարագույն պահերին:**

Կարդա՛ր Մատթոս 26. 36-39

Չայր իմ, եթե հնարավոր է, թող այս բաժակն ինձանից անցնի. սակայն ոչ թե ինչպես որ ես եմ կամենում, այլ ինչպես դու: Մատթ. 26. 39

Ներողություն

2005 թվականին Քոլինզը սուտ տեղեկություն պատրաստեց, Չորի հետևանքով Մքին բանտարկվեց չորս տարի և ուխտեց, որ երբ ազատ արձակվի, գտնի Քոլինզին ու «ցավեցնի նրան»: Որոշ ժամանակ հետո Մքին ազատ արձակվեց, սակայն ամեն ինչ կորցնելուց հետո: Սուտ տեղեկությունների բացահայտվելուց հետո Քոլինզը աշխատանքը կորցրեց ու բանտարկվեց: Սակայն երկուսն էլ Քրիստոսին հավատացին բանտում եղած ժամանակ:

2015-ին երկուսն էլ իմացան, որ նույն Քրիստոնեական ընկերություն մեջ են գործում: Քոլինզն ասում է. «Ասացի Մքին, թե անկեղծորեն որևէ բացատրություն չունեմ իմ արածների համար: Պարզապես կարող եմ ասել քեզ «ներողություն»: «Միայն ուզում էի այդ խոսքը լսել քեզնից», - պատասխանեց Մքին ու ներեց նրան: Այդ երկու մարդիկ կարողացան իրար հետ հաշտվել, որովհետև երկուսն էլ Աստծո անբաղդատելի սիրո փորձառությունն ու ներումը ունեցան, որ զորացնում է մեզ «ներել, ինչպես որ Քրիստոսը ներեց» (Կող. 3.13): Հիմա երկուսն էլ շատ լավ բարեկամներ են: Քոլինզն ասաց. «Մենք այս միացյալ առաքելությունը ունենք, որ աշխարհն իմանա, թե եթե մեկից ներողություն պիտի խնդրես, հպարտությունդ անարգիր, գնա ու ներողություն ասա: Ու եթե բան ունես մեկի դեմ, մի կողմ դիր դառնությունը, որովհետև այն թույն խմելու նման է»: Աստված հրավիրում է հավատացյալներին, որ խաղաղությունը ու միաբանությունը ապրեն: Եթե «մեկի դեմ թշնամություն ունենք», մենք կարող ենք նրան իր մոտ բերել: Նա պիտի օգնի մեզ հաշտվել (Հմ. 13-15, Փիլ. 4.6-7):

Կարդա՛ր
Կողոս. 3.12-17

Ինչպես որ Քրիստոսը
ծեզ ներեց, այնպես էլ
դուք: Կող. 3.13

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմք, որ մեզ ներում ես, երբ Քեզ մոտ եմք գալիս ցավով՝ մեր մեղքերի համար: Օգնիր մեզ Քո ներումը ստանալ և ուրիշներին տալ: Ամեն:

Քրիստոսը մեզ ազատ է արձակում՝ ներելու համար:

Չայրեր ու որդիներ

Հայրս բարի էր իբրև հայր և ընդհանրապես հավատարիմ՝ որպես որդի: Սակայն ես պատճառ եղա, որ հայրս մի բազմանք ունենա, որ կարող էի տալ՝ անձս: Հայրս լուռ մարդ էր, ես՝ նույնպես: Շատ հաճախ մենք կողք կողքի աշխատեցինք ժամերով՝ հազվադեպ բառ փոխանակելով: Նա երբեք չհարցրեց, ու ես երբեք չասացի իրեն իմ ցանկություններն ու երազները, հույսերն ու վախերը:

Որոշ ժամանակ հետո վերապահություններից սխալվեցի: Շատ հնարավոր է, որ այս զգացումը ունեցա, երբ առաջին որդիս ծնվեց, կամ երբ մեկ առ մեկ որդիներս տնից դուրս ելան՝ իրենց ընտանիքները կազմելու: Հիմա անդրադառնում եմ, որ շատ ավելի լավ որդի կարող էի լինել հորս համար: Մտաբերում եմ այն բոլոր բաները, որ կարող էի ասել նրան, ու այն բոլոր բաները, որ նա կարող էր ինձ ասել: Նրա հուղարկավորության ժամանակ դազադի կողքին կանգնեցի՝ պայքարելով հասկանալու զգացումներս. «Ո՛ւշ է, չէ՞, հիմա»: Կինս մեղմորեն ասաց. «Շատ ճիշտ է»: Սակայն իմ մխիթարությունն այն ճշմարտության մեջ է, թե մի օր երկնքում մեր հարցերը պիտի լուծենք. չէ՞ որ դա այն տեղն է, ուր բոլոր արցունքները պիտի սրբվեն (Հայտ. 21.4): Հիսուսին հավատացողների համար մահը վախճան չէ՛, այլ՝ սկիզբ անժամանակ գոյություն, ուր չպիտի լինի անհասկացողություն. հարաբերությունները պիտի բուժվեն, ու սերը հավիտյան պիտի աճի: Այնտեղ որդիներն սրտերը իրենց հայրերին պիտի վերադառնան, ու հայրերին՝ որդիներին (Մաղ. 4.6):

Կարդա՛
Եփես. 4. 31-32

Նա հոր սիրտը դարձնի դեպի որդին, մարդու սիրտը՝ դեպի իր ընկերը: Մաղ. 4.6

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ ներումիդ ու Քեզ հետ վերանորոգված հարաբերություն ունենալու արտոնության համար: Օգնիր, որ հաշտություն որոնեմ իմ խզված հարաբերություններում, մինչ սպասում եմ հավիտյան Քո ներկայության մեջ բնակվելու: Ամեն:

Աստծո զորության ու սիրո մեջ ավելի մոտեցիր ուրիշներին, քանի դեռ առիթ ունես:

Ի՞նչ կարող ենք անել

Թեև իր անկողնում արգելափակված էր, 92 տարեկան Մորի Բու-
գարթը գլխարկներ հյուսեց Միչիգանի անտուն մարդկանց հա-
մար: Նա տեղեկացրեց, թե տասնհինգ տարվա մեջ 8000-ից ավելի գլ-
խարկներ է պատրաստել: Փոխանակ իր առողջության ու սահմանա-
փակումների վրա կենտրոնանալու՝ Բուգարթը նայեց իրենից դուրս և
արեց այն, ինչ որ կարող էր՝ ուրիշների կարիքները իրենից առաջ նկա-
տելով: Նա հայտարարեց, թե իր արած գոր-
ծը իրեն լավ զգացողություն ու նպատակ
տվեց: Նա ասաց. «Սա պիտի անեմ, մինչև
գնամ տուն՝ Տիրոջս մոտ», որ պատահեց
2018-ի փետրվարին: Թեև իր շինած գլխարկ-
ները ստացողներից շատերը չպիտի իմանան
իր պատմությունը և կամ որքա՞ն գոհողու-
թյուն արեց ամեն գլխարկի համար, Մորիի՝
սիրո հետամուտ լինելու պարզ արարքը հիմա
աշխարհում շատերին է ներշնչում: Մենք էլ կարող ենք նայել մեր պայ-
քարներից այն կողմ և ուրիշների կարիքները մեր կարիքներից առաջ
դնել՝ նմանվելով մեր կարեկցող ու սիրող Տիրոջը՝ Հիսուս Բրիստոսին
(Փիլ. 2.1-5): Մարդեղացած Աստվածը և Թագավորների Թագավորը
խոնարհությունով «ծառայի կերպարանք» առավ (Հմ. 6-7): Իր կյանքը
տվեց՝ որպես գերագույն գոհ, մեր փոխարեն Ի՛նքը մեռավ խաչի վրա
(Հմ. 8): Հիսուսը ամեն ինչ տվեց մեզ համար... այս բոլորն արեց Հայր
Աստծո համար (Հմ. 9-11): Որպես Հիսուսին հավատացողներ՝ մեր
առանձնաչորհուրմն է հետաքրքրություն ու սեր ցույց տալ ուրիշ-
ների հանդեպ ազնիվ արարքներով: Եթե նույնիսկ խորհենք, թե
չատ բան չունենք տալու, մենք կարող ենք ծառայի կերպարանքը
որդեգրել: Կարող ենք նաև մարդկանց կյանքի մեջ տարբերություն
բերելու առիթներ փնտրել՝ պարզապես անելով այն, ինչ կարող ենք:

Կարդա՛
Փիլիպ. 2. 1-11
Ձեզանից յուրա-
քանցյուրը թող այն
մտածմունքն ունե-
ցնա, որ Քրիստոս
Հիսուսի մեջ էր:
Փիլ. 2.5

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ ենք, որ մեզ հիշեցնում ես, որ
կարող ենք տարբերություն բերել, երբ ուրիշներին սիրում
ենք մեր խոսքերով ու գործերով: Ամեն:

**Կարող ենք Քրիստոսի սերը ցույց տալ՝ անելով այն, ինչ
կարող ենք՝ ուրիշներին ծառայելով:**

Իր ներկայությունը

Մտահոգ մի հայր ու իր պատանի որդին նստեցին ոգեհար-
ցուկթյամբ զբաղվող մի մարդու դիմաց, որ հարցրեց.

- Որքա՞ն հեռու պիտի գնա որդիդ:

- Մեծ քաղաք,- պատասխանեց հայրը,- ու պիտի գնա երկար
ժամանակով:

Հորը հմայիլ՝ բարի բախտ ունենալու
իր տալով՝ ասաց.

- Սա նրան պիտի պաշտպանի ո՛ւր որ
գնա:

Այդ պատանին ես էի: Սակայն այդ
ոգեհարցուկթեամբ զբաղվողը ու հմայի-
լը ոչինչ չէին կարող անել ինձ համար:

Երբ այդ քաղաքի մեջ էի, հուլիս Հիսուս-
սի վրա դրի: Մի կողմ նետեցի հմայիլը ու Քրիստոսին փարվե-
ցի: Հիսուսին ունենալը իմ կյանքի մեջ երաշխավորեց Աստծո
ներկայությունը:

Երեսուն տարի հետո հայրս, որ հիմա հավատացյալ է, երբ
եղբորս շտապ հիվանդանոց տարանք, ինձ ասաց.

- Նախ, աղոթենք. Աստծո Հոգին քեզ հետ քայլում է ու քեզ հետ
պիտի լինի ամբողջ ընթացքում: Մենք սովորեցինք, թե Աստծո զո-
րությունն ու ներկայությունը մեր միակ ապահովությունն են:

Մովսեսն էլ նման դաս ստացավ: Նա Աստծուց մարտահրա-
վեր էր ստացել ժողովրդին Եգիպտոսի գերությունից դուրս՝
դեպի խոստացյալ երկիրը առաջնորդելու (Ել. 3.10), ու Աստ-
ված նրան վստահեցրեց. «Ես քեզ հետ կլինեմ» (Հմ. 12):

Մեր ճամփորդությունն էլ առանց մարտահրավերների չէ,
սակայն մենք Աստծո ներկայության վստահությունը ունենք:
Ինչպես Հիսուսն ասաց իր աշակերտներին. «Եվ ահա ես ձեզ
հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը» (Մատթ. 28.20):

Աղոթք - Տե՛ր, երբ ճամփորդությունը երկար թվա, օգնիր,
որ հիշեմ, թե Դու ինձ հետ ես ճամփորդում: Ամեն:

Վախենալու կարիք չկա, երբ Դիսուսը քեզ հետ է քայլում:

Կարդա՛
Ելք 3. 7-12

Ես ինքս պիտի
զնամ քո առաջից ու
պիտի տեղավորեմ
քեզ: Ելք 33.14

Վատահ հույս

1 1940-ական թվականներին, երբ Ճապոնիան հարձակվեց Չինաստանի վրա, դուկտ. Վիլյամ Ուոլսը որպես միսիոներ վիրաբույժ էր ծառայում Վուզուի մեջ: Ուոլսը, որ այդ օրերին վերակացուն էր Սթաուլթ Հիշատակի Հիվանդանոցի, հրամայեց, որ իր բժշկական գործիքները զբոսանավերի վրա դնեն ու շարունակեն իրենց ծառայությունը՝ գետերի վրա ծփալով և խույս տալով ռազմական հարձակումներից: Վտանգավոր ժամանակներում Ուոլսի նախասիրած համարներից մեկը՝ Փիլիպպեցիս 1. 21-ը, իրեն հիշեցրեց, որ երբ նա ապրեց, գործ ուներ անելիք Փրկչի համար, սակայն երբ նա մեռավ, Քրիստոսի հետ հավիտենական կյանք ունենալու խոստումը ուներ: Այս համարը հատուկ իմաստ ունեցավ, երբ նա մեռավ, երբ զրպարտությունը բանտարկված էր 1951 թվականին:

Պողոսի գրությունը ցույցացնում է խոր նվիրում, որ մենք կարող ենք անձկալ որպես Հիսուսի հետևորդներ՝ մեզ դնելով փորձությունների ու վտանգների մեջ իր սիրո համար: Նա նվիրվում է Սուրբ Հոգու միջոցով կարելի դարձած ու մեզ մոտիկ եղողների աղոթքներով (հմ. 19): Նա նաև խոստում է: Նույնիսկ երբ մեր անձերը հանձնենք շարունակական ծառայության դժվար հանգամանքներում, սա հիշեցում է, որ երբ մեր կյանքն ու գործը վերջ գտնեն այստեղ, մենք դեռ ունենք մեր առջև եղող ուրախությունը Հիսուսի հետ:

Մեր դժվարագույն պահերի մեջ Հիսուսի հետ քայլելուն նվիրված սրտերով ու մեր աչքերը հաստատ կերպով հաստատված հավիտենական կյանքի իր խոստումների վրա՝ թող մեր օրերն ու մեր գործերը ուրիշներին օրհնություն լինեն Աստուծո սիրով:

Աղոթք - Հայր, ինձ կամեցող ծառա դարձրու տկարության ու զորության ժամանակ: Ամեն:

Աստծուն ընծայված զոհերը առիթներ են իր սերը ցույց տալու:

Կարդա՛
Փիլիպ. 1. 19-26

Որովհետև ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ: Փիլիպ. 1.21

Ո՞վ է վարորդը

Ռբացիա՝ Թիմը, Մորիա Սենդրանքի «Ուր տարօրինակ բաներ կան» գրքի հետևողությունը «տարօրինակ բանի» կավե արձանիկ ունի իր մեքենայում:

Նախկինում Թիմը ինձ հետևում էր խճողումի մեջ ու հանկարծակի շարժումներով սկսեց հատությունը վարել մեքենան: Երբ հասանք, հարցրի. «Այդ տարօրինակ բա՞նն էր վարում մեքենան»:

Հաջորդ կիրակի տանը մոռացա քարոզիս նոթերը: Շուտով եկեղեցուց դուրս սուրացի՝ նոթերս բերելու, ու ճանապարհին Թիմին վազանցեցի: Երբ հետո հանդիպեցինք, նա կատակեց. «Այդ տարօրինակ բա՞նն էր վարում մեքենան»: Միծաղեցինք, սակայն նրա ասածը ինձ հիշեցրեց, որ արագությունս ուշադիր պիտի լինեի:

Երբ Աստվածաշունչը նկարագրում է, թե ինչ է նշանակում հարաբերության մեջ լինել Աստծո հետ, մեզ քաջալերում է, որ մեր «անդամները հանձնենք Աստծուն» (Հռոմ. 6.13): Թիմի՝ այդ օրն ասածը նկատեցի իբրև ազնիվ հիշեցում Աստծուց, որպեսզի իմ շավիղներն ու ամբողջ էությունը Նրան սիրով հանձնեմ: Հարցը, թե «Ո՞վ է վարորդը», հարմար է ամբողջ կյանքին: Արդյո՞ք թույլ ենք տալիս, որ անցյալի մեր մեղքերը մեզ ուղղեն. ինչպիսի՞ն են մտահոգությունը, վախը, կամքը: Կամ ընդհակառակը՝ հանձնվո՞ւմ ենք Աստծո սիրով Հոգուն ու շնորհին, որ օգնում է մեր աճումին: Աստծուն հանձնվելը լավ բան է մեզ համար: Խոսքն ասում է, թե Աստծո իմաստությունը մեզ հիշեցնում է, թե «Նրա ճանապարհները բարու ճանապարհներ են, նրա բոլոր շավիղները՝ խաղաղություն» (Առ. 3.17): Ավելի լավ է Իրեն հետևել ո՞ւր որ տանի:

Աղոթք - Սիրո՞ղ Տեր, շնորհակալ եմ Քեզ հնազանդվելու Քո տված շնորհի և խաղաղության համար, երբ կողքիդ մնամ: Ամեն:

Ինչ որ Աստված պահանջում է, միևնույն ժամանակ ցանկանում է:

Կարդա՛ր
Յոզմ. 6. 1-14

Եթե Յոզով ենք ապրում, Յոզով վարվենք: Գաղ. 5.25

ԱՆՄԻՒՄ ՈՋԽԱՐՆԵՐ, ԲԱՐԻ ԻՈՎԻԿ

Բարեկամս՝ Ձեզը, մի տարի անցկացրեց հովվություն անելով Ուլայոմինգում: Նա ասաց. «Ոջխարները այնքան անմիտ են, որ միայն ուտում են այն, ինչ որ իրենց առջև կա: Եթե նույնիսկ ուտում են իրենց առջև եղած ամբողջ խոտը, ետ չեն դառնում նոր տեղ գտնելու արածելու համար, այլ սկսում են ուտել հողը»:

Միծաղեցինք: Սակայն չկարողացա չմտածել, թե որքա՛ն հաճախ է Աստվածաշունչը բաղդատում մարդկանց ոջխարների հետ: Հետևաբար բնավ զարմանալի չէ, որ մենք հովվի կարիք ունենանք: Բայց քանի որ ոջխարները անմիտ են, որևէ սովորական հովիվ բավարար չպիտի լինի նրանց մասին հոգ տանելու համար: Ոջխարները իրենց հոգ տանող հովվի կարիքն ունեն: Երբ եզեկիեկ մարդարեն գրեց Բաբելոնի մեջ աքսորված Աստծո ժողովրդին, բաղդատեց նրանց ոջխարների հետ, որոնք առաջնորդվում էին չար հովիվների կողմից: Փոխանակ հոտին հոգ տանելու՝ ժողովրդի առաջնորդները շահագործեցին նրան՝ նրանից օգտվելով (Եզեկիեկ 34:3) և ապա թողնելով նրան վայրի անասուններին, որ հոշոտեն (Հմ. 5): Սակայն նրանք անհույս չէին: Աստված՝ Բարի Հովիվը, խոստացավ նրանց ազատել շահագործող առաջնորդներից: Նա խոստացավ նրանց տուն բերել, դալար արոտների մեջ դնել ու հանգիստ շնորհել նրանց: Նա բուժում է վիրավորներին ու կորսվածների ետևից գնում (Հմ. 11-16): Նա վտարում է վայրի կենդանիներին, որպեսզի Իր հոտը ապահով լինի (Հմ. 28):

Աստծո հոտի անդամները կարոտ են հոգատարության ու առաջնորդության: Որքա՛ն օրհնյալ ենք մենք, որ ունենք Հովիվ, որ միշտ մեզ առաջնորդում է դեպի դալար արոտներ:

Աղոթք - Տեր, շնորհակալ ենք Քո հոգատարության համար: Նույնիսկ երբ չգիտենք, թե ինչի կարիք ունենք, Դու հոգում ես մեր բոլոր կարիքները: Ամեն:

Ականջալու՞ր եմ հովվիս ձայնին:

Կարդա՛ր Եզեկիեկ 34. 7-16

Ինչպես որ հովիվն է իր հոտը փնտրում այն օրը, երբ մեզ ու մառախուղ է լինում իր ցրված հոտերի վրա, այնպես էլ ես եմ փնտրելու հոտերս: Եզ. 34.12

Քաջությանը կապված

Միսկին Թոմբասոն հիշատակի վազքը երեք մղոնի վրա երկա-
րող խմբային մրցում է: Այս մրցման ժամանակ խմբի յոթ
անդամները միասնաբար են վազում՝ իբրև մեկ միավոր, առա-
ջին երեք մղոնը՝ պարանից բռնած, ապա վերջին մղոնին՝ թող-
նելով ու անհատապես վազելով: Հետևաբար, յուրաքանչյուր
անձի ժամանակը գումարն է խմբի պա-
հած քայլաչափի և յուրաքանչյուրի
արագության:

Այս տարի աղջկաս խումբը նոր ռազ-
մավարութիւնն որդեգրեց, որ երբեք չէի
տեսել: Ամենից արագ վազողին խմբի
առջևում կանգնեցրին ու ամենից թույ-
լին՝ նրա ետևում: Նպատակն այն էր, որ
լավագույն վազողը մոտ լինի դանդաղ վազողին՝ քաջալերա-
կան խոսքեր ասելու համար:

Նրանց ռազմավարութիւնը ինձ հիշեցրեց մի հատված Եբ-
րայեցիների նամակից, ուր հեղինակը թախանձում է. «Պինդ,
անսայթաք բռնենք հուլիսի դավանութիւնը» (Եբ. 10.23) և
... իրար նկատմամբ զգույշ լինենք՝ իրար սիրո ու բարի գործե-
րի մղելով» (Հմ. 24): Վստահաբար շատ ձևեր կան սա հաջո-
ղացնելու համար, սակայն հեղինակը նշում է մեկը. «Եվ մեր՝
իրար հետ հավաքվելը չթողնենք, ինչպես ոմանց սովորու-
թիւնն է, այլ իրար հորդորենք» (Հմ. 25): Ուրիշ հավատացյալ-
ների հետ հավաքվելը էական է հավատքի կյանքի համար:

Կյանքի մրցումը թվում է մեր կարողութիւններից վեր, ու մենք
փորձության ենք ենթարկվում պարանը հուսահատությամբ
ձգել: Մինչ միասին վազում ենք, քաջալերե՛նք իրար:

Աղոթք - Հիսուս, շնորհակալ եմ Քո տված հույսի համար:
Շնորհակալ եմք, որ մեզ քաջալերում ես: Օգնիր, որ Քեզ
նմանվենք՝ իրար քաջալերելով: Ամեն:

Քաջալերելը հոգու ջուրն է:

Կարդա՛
Եբր. 10.19-25

Եվ իրար նկատմամբ
զգույշ լինենք՝ իրար
սիրո ու բարի գոր-
ծերի մղելով:
Եբր. 10.24

Վտանգավոր մտացրություններ

Արվեստագետ Սիզիամունդ Գյոթզեն ցնցեց Վիկտորիայի ժամանակի Անգլիան «Մարդկանցից անարգված ու մերժված» խորագրով գծանկարով: Նա նկարեց տառապող Հիսուսին՝ Գյոթզեի սերնդի մարդկանցով շրջապատված: Նրանք այնքան էին կլանված իրենց աշխատանքային, քաղաքական ու անձնական հետաքրքրություններով, որ չէին տեսնում Փրկչի զոհողությունը: Քրիստոսին շրջապատող անտարբեր ամբողջ Հիսուսի խաչի տակ գտնվող ամբոխի նման գաղափար չունեն, թե ինչ կամ ում կորցրեց: Ներկայիս հավատացյալների և անհավատների ուշադրությունը կարող է վրիպել հավիտենականից: Հիսուսի հետևորդները ինչպե՞ս կարող են այս մտացրությունից ազատվել Աստծո մեծ սիրո ճամբարությունով: Մենք կարող ենք սկսել իրար սիրել՝ որպես Աստծո զավակներ: Հիսուսն ասաց. «Դրանով բոլորը կիմանան, որ իմ աշակերտներն եք, եթե իրար նկատմամբ սեր ունենաք» (Հովհ. 13.35): Սակայն իսկական սերը այստեղ կանգ չի առնում: Մենք այդ սերը ընդարձակում ենք Ավետարանը կիսելով, մարդկանց Փրկչին մոտեցնելու հույսով: Ինչպես Պողոսը գրեց, «Մենք Քրիստոսի կողմից պատգամաբերություն ենք անում» (Բ Կորնթ. 5.20): Այս կերպով Քրիստոսի մարմինը կարող է թե՛ ցոլալ և թե՛ սփռել Աստծո սերը, այն սերը, որի կարիքը բուռն կերպով ունենք թե՛ միմյանց և թե՛ մեր աշխարհի համար: Թող այս երկու ջանքերը, զորացած իր Հոգով, մաս կազմեն մտացրությունը վերացնելու, որ արգելք է մեզ համար՝ տեսնելու Աստծո սիրո հրաշագործությունը Հիսուսի մեջ:

Աղոթք - Հայր, աշխարհի շփոթների ու մտացրությունների մեջ մեզ կանչել ես լույս բերելու խավարում: Օգնիր Քո սերն ապրելու՝ Քրիստոսով մեր եղբայրներին ու քույրերին սիրելով ու պատմելով Քո շնորհի մասին: Ամեն:

**Մտացրության մշուշի մեջ ապրող աշխարհի համար
Հիսուսի Բարի Լուրի լույսն ենք բերում:**

Կարդա՛

Յովհ. 13. 31-35

Դրանով բոլորը կիմանան, որ իմ աշակերտներն եք, եթե իրար նկատմամբ սեր ունենաք: Յովհ. 13.35

Շնորհակալություն Աստծո էության համար

Ողջունի քարտերի վրա տպագրված հազարավոր զգացական գրություններից ամենից ազդուն այդ պարզ խոսքն է. «Շնորհակալություն քո էության համար»: Եթե այդ քարտը ստանաս, պիտի գիտենաս, որ մեկը քեզ հոգ է տանում, ոչ թե այն բանի համար, որ դու հոյակապ բան արեցիր այդ անձին, այլ գնահատված ես քո էության համար: Հարց եմ տալիս, մի՞թե այս տեսակի զգացական խորհուրդը կարող է մեզ ցույց տալ լավագույն ձևերից մեկը՝ «շնորհակալություն» ասելու Աստծուն: Վստահաբար կան ժամանակներ, երբ Աստված զգալի կերպով միջամտում է մեր կյանքերի մեջ, ու մենք սրա նման բան ենք ասում. «Տե՛ր, շնորհակալ եմ, որ օգնեցիր այդ աշխատանքը գտնելու համար»: Բայց մենք պարզապես կարող ենք ասել. «Տե՛ր, շնորհակալ եմ Քո էության համար»: Այս միտքը կա բազմաթիվ համայնքներում, ինչպես Ա Մնաց. 16.34-ում.

Կարդա՛ր Սաղմոս 94.1-7

Աղաղակեցե՛ք Աստծուն, բոլո՛ր երկրներ, սաղմո՛ս երգեցեք նրա անվանը... Ելե՛ք և տեսե՛ք գործերն Աստծու, թե որքան ահեղ են խորհուրդներով՝ քան գործերը մարդկանց բոլոր որդիների: Սաղմ. 65.2-3

«Գոհություն մատուցեցեք Տիրոջը, քանզի բարի է նա, և հավերժ է նրա ողորմածությունը»: Եվ Սաղմ. 7.18-ում. «Գոհություն կմատուցեմ Տիրոջն իր արդարության համար, սաղմոս կերգեմ Բարձրյալ Տիրոջ համար»: Շնորհակալ եմ, Տե՛ր, Քո էության համար՝ Սուրբը: Եվ «Աղաղակեցե՛ք Աստծուն, բոլո՛ր երկրներ, սաղմո՛ս երգեցեք նրա անվանը... Ելե՛ք և տեսե՛ք գործերն Աստծու, թե որքան ահեղ են խորհուրդներով՝ քան գործերը մարդկանց բոլոր որդիների» (Սաղմ. 65.2-3): Շնորհակալ եմ, Տե՛ր, Քո էության համար՝ իբրև տիեզերքի Ամենահզոր Աստծո: Աստծո էությունը բավարար պատճառ է մեզ համար, որ փառաբանենք ու մեր երախտագիտությունը հայտնենք Նրան: Շնորհակալ եմ, Աստված, պարզապես Քո էությունը լինելու համար:

Աղոթք - Շնորհակալ եմ, մեզ սիրող Ամենակարող Աստված, ամեն բանի համար, որ Քեզ գերազանց է դարձնում: Մեր խոսքերով ու աղոթքներով Քեզ ենք փառաբանում: Ամեն:

Անհամար պատճառներ կան Աստծուն շնորհակալություն հայտնելու՝ ներառյալ իր էությունը:

Յպոււմի գորութիւնը

Քսաներորդ դարի Հնդկաստանի հռչակավոր միսիոներ բժիշկ դոկտ. Փոլ Բրենդը մոտիկից տեսավ բորոտութեան արտաքին նշանն ու խարանք: Մի հիվանդի քննութեան ընթացքում դիպավ նրան՝ վատահեցնելու, թե հնարավոր է բուժումը: Մարդու աչքերից առատորեն արցունքներ հոսեցին, ու ներկաներից մեկը բացատրեց դոկտ. Բրենդին՝ ասելով. «Դու դիպար նրան, երբ ոչ մեկը չէր համարձակվել տարիներ շարունակ: Դրանք ուրախութեան արցունքներ են»: Հիսուսի առաքելութեան առաջին օրերին մի բորոտ մոտեցավ Նրան: Բորոտութիւնը նշան էր անցյալում ամեն տեսակ փոխանցիկ մաշկային հիվանդութեան: Իր ունեցած հիվանդութեան պատճառով, ըստ Հին Կտակարանի օրենքի, մարդը ստիպված էր ժողովրդից հեռու մնալ: Եթե պատահեր, որ հիվանդը ինքն իրեն առողջ մարդկանց մոտ զգար, պետք է գոչեր. «Անմաքո՛ւր եմ, անմաքո՛ւր եմ», որպեսզի մարդիկ հեռու մնային իրենից (ՂԼ. 13.45-46): Ու այդ պատճառով մարդը պիտի հեռանար ու կապ չունենար ամիսներ ու տարիներ շարունակ: Գութով լցված՝ Հիսուսն իր ձեռքը երկարեց ու դիպավ մարդուն: Հիսուսը գորութիւնն ու հեղինակութիւնն ունէր մարդկանց բժշկելու միայն խոսքով (Մարկ. 2.11-12): Սակայն երբ Հիսուսը տեսավ մի մարդու, որի Ֆիզիկական հիվանդութիւնը նրան մեկուսացած ու լքված էր դարձրել, Նրա հպումը վատահեցրեց մարդուն, որ միայնակ ու մերժված չէ: Մինչ Աստված մեզ առիթներ է ընծայում, մենք կարող ենք շնորհ ու սեր արտահայտել ազնիվ հպումով, որ ցուցաբերում է պատիվ ու արժեք: Պարզապես մարդկային բուժիչ գորութեան հպումը ցավի մեջ եղող մարդկանց պիտի հիշեցնի մեր հոգածութիւնն ու հետաքրքրութիւնը:

Կարդա՛
Մարկոս 1.40-45

Հիսուսն էլ, գթալով, ձեռքը մեկնեց, նրան դիպավ...:
Մարկ. 1.41

Աղոթք - Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմք, որ անձնապես մոտենում ես ցավի մեջ եղողներին: Ամեն:

Ուրիշների հոգատարութիւնը կարող է ունենալ կարեկցութեան հպում:

Մի՛ դադարիր կառուցել

Երբ առիթը եղավ նոր պաշտոն ստանձնելու, Միմոնը հավատաց, որ դա Աստծուց էր: Աղոթելուց ու խորհուրդ հարցնելուց հետո նա զգաց, որ Աստված իրեն առիթ էր տալիս, որ ավելի մեծ պատասխանատվություն ստանձնի: Ամեն բան կարգին էր, ու նրա վերադասը քաջալերեց այդ փոփոխության համար: Սակայն շուտով սկսեցին սխալներ պատահել: Նրա աշխատակիցներից ոմանք նախանձելով մերժեցին աշխատել նրա հետ, և նա սկսեց մտածել հրաժարվելու մասին:

Երբ իսրայելցիները Երուսաղեմ վերադարձան՝ Աստծո տունը շինելու, թշնամիները ուզեցին փռնդել ու հուսահատության մատնել նրանց (Բ Եզր. 4:4): Իսրայելցիները նախ դադարեցրին աշխատանքը, հետո շարունակեցին, երբ Աստված Անգիա ու Զաբարիա մարդարենների միջոցով քաջելերեց նրանց (4:24

5:2): Թշնամիները դարձյալ եկան նեղելու նրանց: Սակայն այս անգամ նրանք հարատևեցին՝ գիտենալով, թե «Տեր Աստծու աչքը քաղցր էր... հրեաների վրա» (5:5): Նրանք ամուր կերպով կառուցած մնացին Աստծո ցուցումներին՝ վստահ լինելով, որ Նա պիտի առաջնորդի իրենց ամեն տեսակ հակադարձության դեմ: Միմոնը ևս խնդրեց Աստծո իմաստությունը՝ որոշելու, թե պիտի մնա՞ր, թե՞ նոր պաշտոն գտներ: Զգալով Աստծո կոչը՝ մնալու իր պաշտոնին, նա վստահեց Աստծո գործությանը՝ հարատևելու: Ժամանակի ընթացքում նա իր գործընկերների վստահությունն էլ շահեց: Մինչ խնդրում ենք Աստծուն հետևել՝ ո՛ւր որ մեզ դնի, կարող ենք հակադարձության դիմադրավել ընթացքում: Հենց այդ պահին պետք է շարունակենք հետևել. Նա մեզ պիտի առաջնորդի ու կրի մեզ իր ուսերի վրա:

Աղոթք - Տեր, վստահ եմ Քո՛ ինձ համար ունեցած ծրագրին: Սովորեցրու ինձ Քեզ ապավինել ու չհուսահատվել կամ վախենալ դժվար պարագաներում կամ մեր հակառակորդների դեմ պայքարում: Ամեն:

Չաստատ մնա. Աստծո աչքը վրադ է:

Կարդա՛ր Բ Եզրաս 5. 1-5

Բայց Տեր Աստծու աչքը քաղցր էր գերությունից վերադարձած հրեաների վրա. նրանք չխափանեցին նրանց աշխատանքը:

Բ Եզր. 5.5

Դժվար խոսակցություն

Մի անգամ Հիսուսն մղոն քչեցի՝ դժվար խոսակցություն ունենալու հետո տեղում ապրող մի պաշտոնյայի հետ: Մի այլ պաշտոնյայի տված տեղեկության համաձայն՝ նա մեր ընկերությունը խեղաթյուրում էր, ու ես մտահոգ էի մեր վաստակով: Ցանկացա կարծիք տալ, որը կարող էր իր ընտրությունը փոխել: Ա. Թագ. 25-ում մեկը անակնկալ որոշեց անվարան դիմադրել Իսրայելի ապագա թագավորին, որ սխալ ընտրություն պիտի աներ: Աբիգեան ամուսնացած էր Նաբաղի հետ, որի նկարագիրը համապատասխանում էր իր անունի իմաստին («անզգամ») (Հմ. 3, 25): Նաբաղը որոշել էր մերժել Դավթին ու նրա զորքին վճարել իր հոտերը պաշտպանելու սովորական վարձը (Հմ. 10-11): Իմանալով, որ Դավթի ծրագրել է հարձակվել վրեժ լուծելու համար, ու գիտենալով, թե իր անզգամ ամուսինը չպիտի հասկանա դա, Աբիգեան պատրաստեց խաղաղության առաջարկ: Նա զնաց հանդիպելու Դավթին ու համոզեց նրան վերաատեսության ենթարկել իր որոշումը (Հմ. 18-31): Ինչպե՞ս կարողացավ Աբիգեան սա անել: Նախ, նա էջերի վրա բարձած ուտելիք ուղարկեց Դավթին ու նրա մարդկանց գոհացնելու և պարտքը փակելու համար, ապա ճշմարտությունն ասաց Դավթին: Նա իմաստություն ցուցաբերեց Դավթին Աստծո արած կոչը իր կյանքի համար: Եթե դիմադրեր վրիժառության իր փափագին՝ հիշելով, որ Աստված իրեն թագավոր դարձրեց, սա սայթաքում չպիտի լիներ, ոչ էլ խղճի խայթ, որ առանց պատճառի արյուն թափի (Հմ. 31): Գուցե դու էլ գիտես սխալվելու ճանապարհին գտնվող մեկին, որ կարող է ուրիշների վնաս հասցնել և դադարեցնել իր ազդեցությունը՝ Աստծո համար: Հնարավոր է, որ Աստված քեզ Աբիգեայի նման կանչում է՝ դժվար խոսակցություն ունենալու:

Կարդա՛
Ա. Թագ. 25. 21-35
Եթե հնարավոր է, որքան ձեզանից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղությամբ մնացեք: Դոմ. 12.18

Աղոթք - Սիրելի՛ Յայր, խնդրում եմ օգնիր ինձ՝ իմանալու, թե ե՞րբ պետք է սիրով մխիթարեմ ուրիշներին: Ամեն:

Երբեմն Աստծուն հետևելը նշանակում է դժվար խոսակցություն:

Սխալ կողմում

Երբ դեպի Թեբեման՝ Գանա տանող կամուրջը ջրհեղեղի պատճառով փրվեց, Թանո գետի մյուս կողմում գտնվող Նոր Կրորոն յի բնակիչները դժվարության մատնվեցին: Թեբեմանում գտնվող հովիվ Սամուել Ափիայի եկեղեցու ներկայութունն էլ տուժեց, որովհետև անդամների մեծ մասը ապրում էին Նոր Կրորոյում՝ գետի «սխալ» կողմում: Այդ ճգնաժամի մեջ հովիվ Սամուելը ջանում էր ընդարձակել եկեղեցու մանկատունը՝ ավելի մեծ թվով որբ երեխաների հոգ տանելու համար: Հետևաբար, նա աղոթեց: Հետո իր եկեղեցին երաշխավորեց գետի մյուս կողմում՝ Նոր Կրորոյում բացօթյա պաշտամունքներ ունենալու ծրագիրը: Շուտով նրանք սկսեցին մկրտել նոր հավատացյալների, ու նոր եկեղեցի ծնվեց: Ոչ միայն դա. Նոր Կրորոն բավարար տեղ ուներ՝ հոգ տանելու այն որբերին, որոնք բնակության տեղի կարիք ունեին: Աստված իր գործն էր կատարում ճգնաժամի մեջ: Երբ Պողոս առաքյալն ինքն իրեն գտավ ազատության «սխալ» կողմում, չողբաց իր վիճակը: Փիլիպպեի եկեղեցուն ուղղած իր նամակում նա գրեց. «Կամենում եմ, եղբայրներ՛ր, որ իմանաք, թե ինչ որ ինձ հետ եղավ, ավելի Ավետարանի առաջադիմության համար հաջողվեց» (Փիլ. 1.12): Պողոսը նշում է, թե ինչպես էին իր շղթաները պատճառ դարձել, որ «ամբողջ պալատի» մարդիկ լսեն Քրիստոսի մասին (Հմ. 13): Եվ ուրիշներն էլ էին վստահություն շահել՝ Հիսուսի բարի լուրը տարածելու համար (Հմ. 14): Հակառակ արգելքների՝ հովիվ Սամուելը և Պողոս առաքյալը տեսան, թե Աստված ցույց է տալիս նոր ձևեր՝ ճգնաժամում գործելու: Աստված ի՞նչ կարող է անել մեր այսօրվա դիմագրաված մարտահրավերների մեջ:

Աղոթք - Տե՛ր, երբեմն թվում է, թե մենք որոշակի վիճակում սխալ կողմում ենք: Գիտենք, որ Դու ամեն տեղ ես: Ամեն:

Աստված գործի վրա է դժվարության մեջ: Այդ է
Աստվածաշնչի պատգամը: **Մեթ Չենդլըր**

Կարդա՛ր
Փիլիպ. 1.12-18

...ինչ որ ինձ հետ
եղավ, ավելի Ավետա-
րանի առաջադիմու-
թյան համար հաջող-
վեց: Փիլիպ. 1.12

Թարնված ծառայութիւն

Մեծ ակադեմիական մի ծրագիր ճնշում էր վրաս, ու վախենում էի, որ չկարողանայի որոշված ժամանակին ավարտել: Իմ մտահոգության մեջ քաջալերական երեք նոթ ստացա բարեկամներից, որոնք խրախուսում էին ինձ: Յուրաքանչյուրն ասում էր. «Աստված քեզ մտքիս մեջ դրեց, երբ աղոթում էի»: Խոնարհ ու քաջալերված զգացի, որ այս բարեկամները ինձ հետ ստեղծում էին՝ առանց գիտենալու, թե ես ի՞նչ վիճակներից էի անցնում, և հավատում եմ, թե Աստված նրանց գործածեց որպես Իր սիրո պատգամավորներ: Պողոս առաքյալին ծանոթ էր աղոթքի գործությունը, երբ դրեց Կորնթոսի եկեղեցու անդամներին: Նա ասաց, թե ինքը վստահ է, թե Աստված պիտի շարունակի ազատել նրանց վտանգից «մեզ համար ձեր աղոթքի օգնականությամբ» (Բ Կորնթ. 1.11): Ու երբ Աստված պատասխանեց նրանց աղոթքներին, նա փառավորվեց, մինչ ժողովուրդը շնորհակալություն էր հայտնում «մարդկանց ցույց տված շնորհի» համար (Հմ. 11):

Բարեկամներս և Պողոսի օգնականները աղոթքով միջամտության առաքելության մեջ մտան, որը Օսվալդ Չամբերսը կոչում է «պահված ծառայություն, որ Աստծուն փառավորող պտուղ է բերում»: Մինչ մեր միտքն ու սիրտը կենտրոնացնում ենք Հիսուսի վրա, տեսնում ենք, որ նա մեզ ձևավորում է ու սովորեցնում ինչպես աղոթել: Նա մեզ կարողություն է տալիս, որ մեր բարեկամների, ընտանիքի անդամների ու նույնիսկ օտարների համար մեր ճշմարիտ խնդրանքը բարձրացնենք: Աստված դրե՞լ է մեկին քո սրտի ու մտքի վրա, որի համար կարող ես աղոթել:

Աղոթք - Տեր Աստված, երախտապարտ եմ, որ ոչ միայն Քո սերն եմ զգում ուրիշներից մատուցած աղոթքների պատճառով, այլև զգում եմ, թե ես էլ կարող եմ աղոթել ուրիշների համար: Ամեն:

Աստված լսում է Իր ժողովրդի աղոթքը:

**Կարդա՛ր
Բ Կորնթ. 1.8-11**

Նրա վրա հույս ունենք, որ դեռ կփրկի էլ՝ մեզ համար ձեր արած աղոթքի օգնականությամբ:
Բ Կորնթ. 1.11

ԻՆչ որ ունենք

Բարեկամուհիս ցանկանում էր տոնական օրերի առիթով մի հավաքույթի համար իր տանը հավաքել իր ընտանիքին ու բարեկամներին: Հյուրերից յուրաքանչյուրը, ուրախությամբ ընդունելով հրավերը, առաջարկում է մասնակցել ճաշի պատրաստությունը՝ բեռը թեթևացնելու նպատակով: Ոմանք կարող էին բերել հաց, աղցան կամ անուշեղեն: Սակայն մեկ հրավիրյալ նյութական կարիքի մեջ էր: Թեև նա ուրախությամբ էր սպասում այդ հավաքույթին՝ իր սիրելի բարեկամների հետ ժամանակ անցկացնելու համար, սակայն հնարավորություն չուներ ճաշ գնելու: Հետևաբար, նա առաջարկեց մաքրել մեզ հյուրասիրող բարեկամուհու տունը՝ որպես նվեր: Վստահաբար նա ուրախությամբ կարող էր մեր սեղանակիցը լինել, սակայն մտածեց, թե ի՞նչ կարող էր անել օգտակար լինելու համար: Պատրաստ էր ամբողջ սրտով իր ժամանակն ու ձիրքերը բերել: Մտածում եմ, թե ճիշտ դա էր Պողոսի խոսքերի նպատակը Բ Կորնթացիս 8-ի մեջ: Նրանք ցանկություն ունեին սիրահոգի տալու՝ օգնելու իրենց հավատակից Քրիստոնյա քույրերին և եղբայրներին: Պողոսն էլ քաջալերեց նրանց իրենց ջանքի մեջ ու գնահատեց նրանց ունեցած փափազն ու կամեցողությունը՝ շեշտելով, թե տալու իրենց փափազը տրված նվերը դարձնում է ընդունելի՝ անկախ նրա արժեքից:

Մենք հաճախ բաղդատում ենք մեր տվածը ուրիշի տվածի հետ, հատկապես երբ մեր հնարավորությունները սահմանափակ են մեր ցանկացածի համեմատ: Սակայն Աստված մեր տվածին տարբեր կերպ է նայում. նա սիրում է մեր տալու կամեցողությունը:

Աղոթք - Տե՛ր, խնդրում եմ օգնիր, որ տեսնեմ, թե Դու ի՞նչ ես տվել ինձ, նույնիսկ երբ դա թվում է շատ քիչ աշխարհի չափանիշով: Օգնիր, որ առատորեն տամ ուրիշների օգտին: Ամեն:

Աստված սիրում է բարի կամեցողությամբ տրված ամենափոքր բանն անգամ:

**Կարդա՛ր
Բ Կորնթ. 8.1-12**

Որովհետև եթե հո-
ժարություն կա, ու-
նեցածի չափով է
ընդունելի և ոչ թե
չունեցածի չափով:
Բ Կորնթ. 8.12

Մոր սերը

Մուրի ծնողները ամուսնալուծվեցին, երբ նա փոքր էր: Նրա խնամքի ու այլ հարցերի օրինական պայքարը պատճառեցան, որ որոշ ժամանակ մանկատանը մնար: Մեծ երեխաների տված նեղուլթյան պատճառով նա միայնակ ու լքված զգաց: Մայրը միայն ամիսը մեկ անգամ այցելեց նրան, ու շատ քիչ տեսավ հորը: Սակայն տարիներ հետո մայրն ասաց նրան, որ թեև պայմանները թույլ չտվեցին իրեն հաճախակի այցելել, սակայն ամեն օր մանկատան ցանկապատին մոտեցավ՝ հույս ունենալով հեռվից գոնե տեսնել իր աղջնակին:

- Երբեմն քեզ էի դիտում, երբ խաղում էիր բակի մեջ՝ պարզապես տեսնելու, որ լավ ես,- ասաց մայրը:

Երբ Սուն պատմեց այս պատմությունը, Աստծո սիրո մասին մի նշույլ տվեց ինձ: Երբեմն մենք էլ լքված ու միայնակ ենք զգում մեր պայքարների մեջ: Որքա՛ն մխիթարական է գիտենալ, թե Աստված միշտ մեզ վրա հսկում է (Սաղմ. 33.18): Թեև մենք իրեն չենք տեսնում, սակայն Նա այնտեղ է: Սիրող ծնողի նման Նրա աչքերն ու սիրտը հարատև մեզ վրա են՝ ո՛ւր էլ գնանք: Սակայն Սուրի մորից ավելի Նա կարող է մեզ համար գործել: 90-րդ Սաղմոսը նկարագրում է, թե ինչպես է Նա ազատում, պաշտպանում ու վեր բարձրացնում իր զավակներին: Նա ասավենից ու պատսպարանից շատ ավելին է: Երբ նավարկում ենք կյանքի խավար ձորում, կարող ենք մխիթարվել նրանով, թե ամենահզոր Տերը հսկում է մեզ վրա ու գործի վրա է մեր կյանքի մեջ: Նա հայտարարում է. «Ինձ կտա՛ ու ես կլսեմ նրան, և նրա հետ կլինեմ նեղուլթյան մեջ, կփրկեմ ու կփառավորեմ նրան» (Հմ. 15):

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք այն վստահության համար, որ միշտ Քո հսկողության տակ եմք: Ամեն:

Մեր երկնավոր Գայրը միշտ մոտ է մեզ:

Կարդա՛
Սաղմոս 90. 1-6

Ինձ ձայն կտա՛ ու կլսեմ նրան, և նրա հետ կլինեմ նեղուլթյան մեջ. կփրկեմ ու կփառավորեմ նրան:

Սաղմ. 90.15

Անհողողող օգնականը

Երբ իր ողնաշարը վնասելուց հետո Մարթին անդամալույծ դարձավ, որոշեց դպրոց վերադառնալ՝ ստանալու համար գործարար կառավարման մագիստրոսի (MBA) բարձր վկայականը: Մայրը՝ Զուզին, օգնեց, որ նա իր նպատակին հասնի: Նրա հետ նստեց բոլոր դասախոսություններին ու սերտողության խմբերի հետ, նովագրեց ու համակարգչային խնդիրներով զբաղվեց: Նույնիսկ օգնեց նրան բեմ բարձրանալ՝ վկայականը ստանալու համար: Ինչ որ անհասանելի էր թվում, հնարավոր դարձավ: Հաստատ, անհողողողը ու գործնական՝ օգնությունը Մարթին ստացավ իր վկայականը:

Կարդա՛
Յովհ. 14.15-26

Սուրբ Յոզիմ... ամեն
բան կսովորեցնի
ձեզ: Յովհ. 15.26

Հիսուսը իմացավ, որ իր հետևորդները կարիք պիտի ունենային նմանօրինակ օգնություն: Երբ ասաց նրանց իր գալիք բացակայության մասին, նշեց, որ նրանք նոր տեսակի կապ պիտի ունենային Աստծո հետ Սուրբ Հոգու միջոցով: Այս Հոգին շարունակական ու մնայուն օգնական, ուսուցիչ ու առաջնորդ պիտի լինի, որ ոչ միայն իրենց հետ պիտի ապրի, այլ նաև՝ իրենց մեջ (Հովհ. 14.14,26): Հոգին Հիսուսի աշակերտներին պիտի տաներ իր կինային գործություն, որպեսզի ուժ ու կարողություն ունենան հարատևելու ու բարի լուրը տարածելու: Պայքարի ժամանակ Հոգին պիտի հիշեցնի նրանց այն ամենը, ինչի մասին Հիսուսն ասել էր (Հմ. 26): Սրտներդ թող չխռովվի ... իրար սիրեք... Ես եմ հարությունն ու կյանքը: Դու դիմագրավո՞ւմ ես մի բանի, որ քո գործությունից ու կարողությունից ավելին է: Կարող ես Հոգու հարատև ու անհողողող օգնությանը վստահել: Քո մեջ գործող Աստծո Հոգուն վստահելը նրան արժանի պատիվ պիտի բերի:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ Սուրբ Յոզիմ մնայուն օգնության համար: Օգնիր, որ Քո Յոզիմն վստահեմ, երբ օգնության կարիք ունենամ: Ամեն:

Երբ Աստծո ամենակարող Յոզիմ մասին հարցում կա, երբեք մի ասա՝ «Չեմ կարող»:

Լուռ վկան

Էմին բնակվում է փակ երկրում, ուր արգելված է Ավետարանը քարոզել: Նա որպես բուժքույր աշխատում է մի մեծ հիվանդանոցում՝ հոգ տանելով նորածին մանուկներին: Նրա ցուցաբերած աշխատանքային նվիրումը այնքան ուշադրավ է դարձնում իր աշխատանքը, որ շատերի հետաքրքրությունն է արթնացնում: Կանայք մղում ունեն հատկապես նրան հարցեր ուղղելու: Միայն այդ ժամանակ է էմին խոսում նրանց հետ իր հավատքի ու Փրկչի մասին:

Իր կատարած բարի գործի համար մի շարք գործընկերներ նախանձում են նրան ու զրպարտում, իբր դեղ է գողացել:

Վերակացուները չեն հավատում նրանց, ու վերջապես վերադասները գտնում են հանցավորին: Այս դեպքից հետո գործընկերներից շատերը հարցնում են նրա հավատքի մասին: Նրա օրինակը ինձ հիշեցնում է Պետրոսի ասածը. «Սիրելիներ՛ր, աղաչում եմ ձեզ, ...Ձեր վարքը հեթանոսների մեջ բարի՛ պահեցեք, որպեսզի ինչի համար որ ձեզ չարագործների պես բամբասում են, ձեր բարի գործերը տեսնելով՝ այցելություն օրը փառավորեն Աստծուն» (Ա Պետ. 2.11-12):

Մեր ամենօրյա կյանքը մեր տան մեջ, մեր աշխատավայրում կամ դպրոցում կարող է ուրիշների վրա մեծ ազդեցություն ունենալ, երբ թույլ տանք, որ Աստված գործի մեր մեջ: Մենք չըջապատված ենք մարդկանցով, որոնք դիտում են մեզ, թե ինչ ենք ասում և ինչպես վարվում: Աստծուն վստահենք ու թույլ տանք, որ Նա իշխի մեր գործերի ու խորհուրդների վրա: Այն ժամանակ մենք պիտի ազդենք նրանց վրա, որոնք չեն հավատում, և սա կարող է շատերին առաջնորդել, որ հավատքով Հիսուսին դառնան:

Աղոթք - Հայր, օգնիր, որ ապրեմ այնպիսի ձևով, որ Քո անվանը պատիվ բերի: Ամեն:

Մեր կյանքերը մեր խոսքերից ավելի բարձր են խոսում:

**Կարդա՛ր
Ա Պետրոս 2.11-21**

Ձեր վարքը հեթանոսների մեջ բարի՛ պահեցեք: Ա Պետ. 2.12

Աստված այստեղ է

Մեր տան մեջ ցուցատախտակ կա, որ ասում է. «Հրավիրված կամ ոչ՝ Աստված ներկա է»: Արդիական մի տարբերակում կարելի է կարդալ. «Ընդունենք կամ ոչ, Աստված այստեղ է»: Ութերորդ դարի վերջին (Ն.Ք. 755 -715) ապրած Հին Կտակարանի մարգարե Օսենն նման խոսքեր գրեց հրեա ազգին՝ քաջալերելու նրանց, որ «հետամուտ» լինեն Աստծուն ճանաչելու (Օսեն 6.3), որովհետև նրանք մոռացել էին Նրան (4.1): Աստծո ներկայությունը մոռանալով՝ նրանք սկսեցին Նրանից հեռանալ (հմ.12), ու շատ չանցած՝ նրանց խորհուրդներում Աստծուն տեղ չկար (տե՛ս Սաղմ. 10.4): Օսենի այս պարզ, սակայն հմուտ տեսությունը Աստծուն ճանաչելու, մեզ հիշեցնում է, թե Նա մոտ է ու գործի վրա՝ մեր կյանքի մեջ՝ թե՛ մեր ուրախությունների և թե՛ մեր պայքարների պահերին: Աստծուն ճանաչելը կարող է նշանակել, թե երբ պաշտոնի բարձրացում ու հավելյալ մուտք ենք ունենում, անդրադառնում ենք, թե Աստված մեզ առիթ է տալիս տան նորոգություն զործը ավարտելու՝ մեր բյուջեի սահմաններում: Իսկ եթե մեր տան նորոգության դիմումը մերժվի, Աստծուն ճանաչելը օգնում է մեզ պահելու այն, երբ վստահում ենք Նրան, որ գործի բոլոր պարագաներում մեր օգտի համար: Եթե չկարողանանք մտնել մեր նախասիրած քոլեջը, կարող ենք ընդունել, թե Աստված մեզ հետ է, ու մխիթարվում ենք Իր ներկայություն մեջ մեր հուսախաբուության պահին: Մինչ ընթրիք ենք վայելում, Աստծուն ճանաչելը մեզ հիշեցնում է Նրա նախատեսությունը մեր վայելած ճաշի ու այն խոհանոցի մեջ, ուր պատրաստում ենք մեր ճաշը:

Երբ ընդունում ենք Աստծուն, հիշում ենք Իր ներկայությունը մեր կյանքում՝ թե՛ մեր հաջողությունների և թե՛ մեր ցավերի մեջ՝ լինեն դրանք մեծ կամ փոքր:

Աղոթք - Տե՛ր Դիսուս, խնդրում եմ ներիք ինձ, երբ Քեզ մոռանամ: Օգնիր ընդունել, որ Դու ներկա ես իմ կյանքի մեջ: Ամեն:

Աստված միշտ ներկա է ու գործի վրա:

Կարդա՛

Օսեն 6.1-6

Կճանաչե՛նք Տիրոջը և հետամուտ կլինե՛նք ճանաչելու Դրան: Օսեն 6.3

Անակնկալ ներումը

Երբ դեռ քույրի աշակերտ էի, մի ամառ Կոլորադոյի ագա-
րակներից մեկում աշխատեցի: Մի երեկո, երկար օրվա աշ-
խատանքից հետո, հոգնած ու անոթի վարեցի քարշակը դեպի
բակի մուտքը: Խորհելով, թե վարպետ վարորդ եմ, ղեկը ուժ-
գին դեպի ձախ թեքեցի ու սեղմեցի արգելակը, և քարշակը գլ-
խիվայր շրջվեց: Մանգաղը ցած ընկավ
ու այնտեղ գտնվող 500 գալոն պարու-
նակող գազի տակառը գլորեց, որ դետ-
նին գարկվելով՝ ճեղքվեց, ու ամբողջ
գազը դուրս հոսեց:

Ագարակի տերը, մոտիկ մի տեղ
կանգնած, դիտում էր տեսարանը:

Քարշակից իջնելով՝ ներողութուն
խնդրեցի, և առաջին միտքը, որ ծագեց գլխումս, այն էր, որ
առաջարկեցի ամռան մնացյալ մասն անվճար աշխատել:

Ծեր ագարակապանը, տեսնելով եղածը, դեպի տուն դարձավ
ու ասաց. «Գնանք ընթրենք միասին»:

Հիսուսի պատմած պատմություններից մեկը հիշեցի: Պատ-
մությունը մի երիտասարդի մասին էր, որ սոսկալի բան էր
արել, և բացականչեց. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո
առջև»: Նա մտածում էր նաև ավելացնելու. «Ինձ դարձրու քո
վարձկաններից մեկի նման», սակայն մինչ այդ բոլոր բառերը
կարտասանեց, հայրը միջամտեց: Նա մի ձևով ասաց. «Գնանք
ընթրենք միասին» (Ղուկ. 15.17-24):

Աղոթք - Հա՛յր, վայելում ենք Քո շնորհալի ու անսահման
ներումը: Մինչ ընտանեկան հարաբերություն ենք վայելում
Քեզ հետ, շնորհակալ ենք Քո տված խաղաղության ու ազա-
տության համար: Ամեն:

Կարդա՛
Ղուկաս 15.11-24

Երանի նրանց,
որոնց անօրենու-
թյունները ներվե-
ցին: Հռոմ. 4.7

Ի՞նչ մեծ առանձնաշնորհում է Աստծո գավակները լինել:

Հաստատ հիմք

Անցյալ ամառ ամուսինս և ես այցելեցինք ճարտարապետ Ֆրենկ Լոյդ Ռայթի՝ 1935-ին նախագծած Փենսիլվանիայի շրջանում գտնվող տունը, որ ծանոթ է «Հոսող ջուր» անունով: Ես բնավ դրա նման բան չէի տեսել: Ռայթը ուզեց հորինվածքով իր բնավայրից բարձրացող տուն ստեղծել ու հաջողեց: Նա կառուցեց տունը ջրվեժի կողքին, ու նրա ոճը ցույց է տալիս մոտիկ ժայռի եզրերը: Մեր պտուղտի առաջնորդը բացատրեց, թե ինչն է այդ կառույցը հաստատ ու ապահով դարձնում, ու ասաց. «Տան ամբողջ ուղղահայաց միջերկաթը հենվում է մի ժայռի վրա»:

Լսելով նրա խոսքերը՝ հիշեցի Հիսուսի ասածներն իր աշակերտներին: Լերան Քարոզի մեջ Հիսուսն ասաց, թե ինչ որ սովորեցնում է նրանց, պիտի դառնա հաստատ հիմք նրանց կյանքերի համար: Եթե լսեն իր խոսքերը ու դրանք գործնականի վերածեն, պիտի կարողանան հաստատ մնալ ցանկացած փոթորկի դիմաց: Նրանք, ովքեր լսում են ու չեն հնազանդվում, պիտի լինեն ավազի վրա կառուցված տան նման (Մատթ. 7.24-27): Հետո Պողոսն արձագանքեց այս մտքին՝ գրելով, թե Քրիստոսն է հիմքը, ու Նրա վրա կառուցենք մեր գործերը, որոնք հաստատ պիտի մնան (Ա Կորնթ. 3.11):

Երբ լսենք Հիսուսի խոսքերը ու հնազանդվենք նրանց, այն ժամանակ կշինենք մեր կյանքերը հաստատ ու ապառաժյա վեմի վրա: Կարող է պատահել, որ մեր կյանքերը մի քիչ նմանվեն գեղեցիկ «Հոսող ջրի» ու կանգնուն մնան վեմի վրա կառուցված լինելու համար:

Աղոթք - Տե՛ր, օգնիր մեզ լսել և հնազանդվել Հիսուսի խոսքերին: Ամեն:

Ինչի՞ շուրջ ես կառուցում կյանքդ:

Կարդա՛ր
Մատթեոս 7. 24-27

Արդ նրան, ով որ իմ այս խոսքերը լսում է ու դրանք կատարում, մի իմաստուն մարդու կնմանեցնեմ, որ իր տունը ժայռի վրա շինեց: Մատթ. 7.24

Ռոպեի Տերը

Ոչ վաղ անցյալում մեզնից երեք ժամ հեռու ապրող զավակիս տան մեջ շինարարական ծրագրի վրա էի աշխատում: Աշխատանքը ակնկալվածից ավելի շատ ժամանակ պահանջեց, և ամեն առավոտ աղոթեցի, որ գործը ավարտվի օրվա վերջում: Սակայն ամեն երեկո տեսա, որ դեռ անելիքներ կան: *Զարմացա, թե ինչո՛ւ: Ուշացումի համար կարո՞ղ էր պատճառ լինել: Ու պատասխանը եկավ հաջորդ առավոտ: Գործիք վերցնելու ժամանակ հեռախոսս զանգեց, ու անձանոթ մի ձայն ասաց. «Աղջիկդ վերավորվեց մի պատահարի պատճառով: Պիտի շուտ գաս»:*

Նա բնակվում էր զավակիս տան մոտ, հետևաբար միայն տասնչորս բոպե տևեց, մինչև որ իրեն հասնեի: Եթե տանը լինեի, երեք ժամ հեռու պիտի լինեի: Հետևեցի շտապօգնություն մեքենային մինչև հիվանդանոց ու սփոփեցի նրան վերահատուկյունից առաջ: Մինչ նստած նրա ձեռքն էի բռնել, անդրադարձա, թե եթե ծրագիրս ամբողջացրած լինեի, այնտեղ պիտի չկարողանայի լինել:

Մեր վայրկյանները Աստծուն են պատկանում: Այս էր կնոջ փորձառությունը, որի որդուն Աստված վերապրեցրեց Եդիսեն մարգարեի միջոցով (Դ Թագ. 4.18-37): Սովի պատճառով կինը իր երկիրը թողնելուց տարիներ հետո վերադարձավ թագավորին աղերսելու իր արտի համար: Ծիչտ այդ պահին թագավորը զրուցում էր մարգարեի ծառայի՝ Գեեզիի հետ: Մինչ Գեեզին թագավորին պատմում էր, թե ինչպես Եդիսենն վերապրեցրեց մեռած տղային (Հմ. 8), կինը ներս մտավ, ու նրա խնդրանքը կատարվեց: Մենք չգիտենք, թե հաջորդ պահին ինչ կարող է պատահել, սակայն Աստված շնորհով կարող է ցանկացած հանգամանք բարու գործակից դարձնել:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմ կյանքի պարգևի համար: Օգնիր ինձ, որ հավատարիմ ծառա լինեմ ու մոտիկից Քեզ հետևեմ: Ամեն:

Մեր կյանքերը ավելի լավը պիտի լինեն, եթե Աստծո ձեռքերի մեջ են ու ոչ մեր:

Կարդա՛
Գ Թագ. 8.1-6

Մարդու սիրտը պիտի խորիի իրավունքի մասին, որպեսզի Աստված էլ ուղղի նրա ընթացքը: Առ.16.9

Աստծուն պատվել շնորհակալությունով

Բժիշկը իր երեսը չէր կնճռոտում, հակառակ նրան, որ ամուսնուս հետ խոսում էր նրա քաղցկեղի ախտաճանաչումի մասին: Ժպիտով նա առաջարկեց. «Օրդ սկսի՛ր նվազագույնը երեք բաների համար շնորհակալություն հայտնելով»: Ամուսինս՝ Դանը համաձայնեց՝ գիտենալով, որ երախտագիտությունը մեր սրտերը բացում է քաջալերություն գտնելու Աստծո բարություն մեջ: Ուստի Դանը ամեն օր սկսում է փառաբանություն խոսքերով. «Շնորհակալ եմ, Աստված, գիշերվա հանգիստ քնի համար: Մաքուր անկողնի համար: Պայծառ արևի համար: Սեղանի վրա եղած նախաճաշի համար: Շրթներիս վրայի ժպիտի համար»: Յուրաքանչյուր բառ սրտագին է: Սակայն կարո՞ղ է կեղծ թվալ: Կյանքի փոքր բաների համար մեր տված փառաբանությունը կարևո՞ր է Աստծո համար: 49-րդ Սաղմոսի մեջ Դավթի գլխավոր երաժիշտ Ասափը հստակ պատասխան է առաջարկում՝ հայտնելով Աստծո խոսքը, որ ասում է. «Քո տնից հորթեր չեն ընդունում, ոչ էլ քո հոտից՝ նոխագներ» (Հմ. 9): Իսրայելցիների այս պաշտոնական շնորհակալության զոհերի փոխարեն՝ Աստված ցանկանում է, որ Իր ժողովուրդը իր սիրտը Իրեն տա՝ որպես երախտագիտություն (Հմ. 14, 23): Ամուսնուս այս փորձառություն պես ամբողջ սրտով եղած երախտագիտությունը օգնում է մեր հոգիները զարգացնելու: Հետո, երբ Տիրոջը գոչենք «նեղության օրերին», Նա պիտի «փրկի» մեզ (Հմ. 15): Արդյո՞ք սա նշանակում է, թե Դանը պիտի բժշկվի հոգեպես ու ֆիզիկապես իր բժշկական խնամքի երկու տարիների ընթացքում: Չգիտենք: Սակայն ներկայիս նա հրճվում է՝ իր երախտագիտությունը հայտնելով Աստծուն՝ Իր սիրո, ինչպես նաև Իր Փրկիչ, Բուժող ու Բարեկամ լինելու համար:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալություն հայտնելը կարող է փոքր թվալ ինձ, ուստի շնորհակալություն եմ հայտնում, որպեսզի դա Քեզ պատիվ բերի: Ամեն:

Կարդա՛
Սաղմոս 49. 8-15

Քո նեղության օրը կանչի՛ր ինձ, ես կփրկեմ քեզ, ու դու կփառաբանես ինձ: Սաղմ. 49.15

Իմ շնորհակալությունը Աստծուն մեծ է Նրա համար:

Աստված լսում է

Դայեհը լուռ մնաց, մինչ սերտողության խմբի մեջ եղողները հաղոթեցին իրենց ընտանիքի անդամների ու բարեկամների համար, որոնք մարտահրավերներ ու հիվանդություններ էին դիմազրավում: Իր ընտանիքի անդամներից մեկը տարիներ շարունակ մի մոլուցքի հետ էր պայքարում: Սակայն Դայեհն իր խնդրանքը գաղտնի պահեց, որովհետև չպիտի կարողանար նրանց երեսին նայել կամ լսել նրանց հարցերը կամ խրատները, որոնք հաճախ հաջորդում էին այդ նյութի արծարծումին: Ուստի նա մտածեց, որ խնդրանքը ծածուկ պահելը ավելի լավ է: Մյուսները սակայն չկարողացան հասկանալ, թե ինչպես էր հավատացյալ լինելով ամեն օր պայքարում:

Կարդա՛
Յո՞ւմ. 12. 9-21

Յույսով ուրախացե՛ք, նեղությանը համբերեցե՛ք, մշտապես աղոթեցե՛ք: Յո՞ւմ. 12.12

Թեև Դայեհը չկիսեց իր խնդրանքը այդ խմբի հետ, բայց նա ուներ վստահելի մի քանի բարեկամ, որոնցից խնդրել էր իր հետ հաղոթել: Նրանք միասին Աստծուց խնդրեցին, որ նրա սիրելի մոլուցքյան կապանքները քանդի, որպեսզի նա Քրիստոսով կարողանա ազատության փորձառությունը ունենալ, ու Աստված Դայեհին տվեց հարկավոր խաղաղությունն ու համբերությունը: Մինչ նա հաղոթեց Աստծո հետ իր ունեցած հարաբերության համար, մխիթարություն ու զորություն գտավ: Մեզնից շատերն ունեն անկեղծ ու հարատևող հաղոթքներ, որոնք թվում են անպատասխան: Սակայն մենք կարող ենք վստահություն ունենալ, որ Աստված հոգում է ու լսում մեր բոլոր հաղոթքները: Նա թախանձում է մեզ, որ շարունակենք իր կողքից քայլել, «Հույսով ուրախացե՛ք, նեղությանը համբերեցե՛ք, մշտապես աղոթեցե՛ք» (Հո՞ւմ. 12.12): Մենք կարող ենք իր վրա հենվել:

Աղոթք - Տե՛ր, Քո Խոսքը մեզ մղում է, որ շարունակ աղոթենք: Օգնիր, որ հարատևենք ու տուր կարողություն, որ հավատարիմ աղոթակից լինենք ուրիշների հետ: Ամեն:

«Նրան ճշմարիտ սրտով մոտենանք, լիակատար հավատով, մեր սրտերը չար խղճմտանքից մաքրված» (Եբր. 10.22):

Ապահով տեղ

Եղբայրներս ու ես հասակ առանք ծառախիտ բլուրների վրա Արևմտյան Վիրջինիայի մեջ: Մեր երևակայության հորիզոնները ընդլայնելով՝ մենք Թարզանի նման ճոճվեցինք ծառի ճյուղերից կախված, ծառի տնակներ շինեցինք, մեր կարգացած պատմությունների և տեսած շարժապատկերների մեջ եղած տեսարանները խաղացինք: Մեր նախասիրություններից մեկը ամրոց շինելն ու ձևացնելն էր, թե մենք պաշտպանված ենք հարձակումներից: Տարիներ հետո զգովակներս ամրոցներ շինեցին անկողնի ծածկոցներով, սափաններով ու բարձիկներով՝ երևակայելով, թե կառուցում են իրենց «ապահով տեղերը» երևակայական թշնամիների դեմ:

Կարդա՛ Սաղմոս 46

Աստված ապավենն ու զորությունն է մեր և մեր օգնականը մեզ հասած խիստ նեղությունների մեջ: Սաղմ. 46.1-2

Թաքստոցներ կառուցելը, ուր կարող ես ապահով ու պաշտպանված զգալ, բնազդային է: Երբ Սաղմոսերգու Դավիթը ապահով մի տեղ ցանկացավ ունենալ, Աստծուց այն կողմ չնայեց: Սաղմոս 46.1-2-ը հաստատում է. «Աստված ապավենն ու զորությունն է մեր և մեր օգնականը մեզ հասած խիստ նեղությունների մեջ: Ուստի մենք չենք վախենա...»: Հին Կտակարանի արձանագրությունը Դավիթի կյանքի ու հարատև իր դիմազրաված վտանգների մասին ցույց է տալիս Աստծուն վստահելու հիանալի մի մակարդակ: Հակառակ իրեն սպառնացող վտանգներին՝ նա համոզված էր, որ իր իսկական ապահովությունը Աստծո ներկայության մեջ էր:

Մենք էլ կարող ենք նույն վստահությունը ունենալ: Թեև մենք ապրում ենք վտանգավոր աշխարհի մեջ, մեր Աստվածը խաղաղությունն ու վստահությունն է պարգևում ներկայի ու ապագայի համար: Նա մեր ապահով տեղն է:

Աղոթք - Հայր: Մեր շուրջ գտնվող աշխարհը կարող է սպառնացող, ճնշող ու վտանգավոր թվալ, սակայն Դու խաղաղություն, զորություն և օգնություն ես պարգևում: Ամեն:

Շնորհակալություն հայտնիր Աստծուն, որ քո պաշտպանության տեղն է:

Շնորհակալությունը քո էության համար

Երբ ծառայեցի մորս իբրև խնամող քաղցկեղի կենտրոնում, ծանոթացա այլ խնամողի՝ Լորիի հետ, որ բնակվում էր ամուսնու՝ Ֆրենկի հետ հարևան սենյակներից մեկում: Մենք հաճախ էինք զրուցում, արտասվում, ծիծաղում ու աղոթում: Մեզ համար հաճույք էր իրար քաջալերելը:

Մի օր բաց թողեցի ավտոբուսը, որ կենտրոնի բնակիչներին շուկա էր տանում գնումներ անելու: Լորին առաջարկեց իր մեքենայով երեկոյան ինձ շուկա տանել: Երախտապարտ արցունքներով ընդունեցի առաջարկը:

- Շնորհակալ եմ քո էության համար, - ասացի:

Իրապես գնահատում եմ նրան՝ իբրև անձ իր էության համար և ոչ թե մատուցած բարեկամական ծառայության:

99-րդ Սաղմոսը ապացուցում է Աստծո հանդեպ եղած գնահատանքը Իր էության, ոչ թե պարզապես Իր արածների համար: Սաղմոսերգուն հրավիրում է «երկրի բոլոր բնակիչներին» «աղաղակելու Տիրոջ առջև» (Հմ. 2)՝ վստահ, թե «Նա է Տեր Աստվածը մեր» (Հմ. 3): Մեր Ստեղծիչը մեզ հրավիրում է Իր ներկայությունը՝ շնորհակալ լինելու և Իր անունը փառավորելու (Հմ. 4): Այո՛, Տերը մնում է արժանի մեր շարունակական շնորհակալության, որովհետև Նա «քաղցր է», Իր «ողորմությունը հավերժ է» ու իր «ճշմարտությունը՝ սերնդից սերունդ» (Հմ. 5):

Աստված միշտ էլ պիտի լինի տիեզերքի Ստեղծիչն ու Պահպանիչը, ինչպես նաև մեզ ջերմ սիրով սիրող զթառատ Հայրը: Նա արժանի է մեր՝ հարազատ ուրախությունը լեցուն երախտագիտության:

Կարդա՛ր
Սաղմոս 99

Մտե՛ք նրա դռներով խոստովանությանը: Սաղմ. 99.4

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ քո էության համար: Ամեն:

Այսօր ո՞ւմ հետ կարող ես կիսել Աստծո սերը:

Հարցեր՝ Ծննդյան օրերին

Օրացույցի Դեկտեմբեր ամսվա էջը պատելուց առաջ Ծննդի ցնծությունն է սկսում պղպղալ մեր քաղաքի Հյուսիսային շրջանների մեջ: Բժշկական մի կենտրոնում ծառերն ու ծառիկները գունավոր լույսերով են զարդարվում, որոնք երեկոյան սքանչելի տեսարան են պարզում: Ուրիշ առևտրական մի կենտրոն իր շենքը զարդարում է ու նմանեցնում հսկա ու շռայլորեն զարդարված Ծննդի նվերի: Դժվար է որևէ կողմ շրջվել ու չտեսնել ապացույց Ծնունդի ոգու մասին, և կամ ամենաքիչը՝ եղանակին հարմար առևտուր:

**Կարդա՛ր
Մատթեոս 16. 13-21**

Նրանց ասաց. «Իսկ դո՞ւք իմ մասին ինչ եք ասում, թե ո՞վ եմ»: Մատթ. 16.15

Իր ծնունդից մոտ երեսուն տարի հետո Հիսուսը հարցրեց իր աշակերտներին. «Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում. Մարդու Որդին ո՞վ է» (Մատթ. 16.13): Նրանք տվեցին այն պատասխանները, որ ուրիշներն են ասում. «Ոմանք՝ թե Հովհաննես Մկրտիչն է, մյուսները՝ Եղիան, ուրիշներն էլ՝ Երեմիան կամ մարգարեներից մեկը» (Հմ. 14): Ապա Հիսուսը անձնականի վերածեց ու հարցրեց. «Իսկ դո՞ւք իմ մասին ինչ եք ասում, թե ո՞վ եմ» (Հմ. 15): Պետրոսը պատասխանեց. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծու Որդին» (Հմ. 16):

Այս տարի դարձյալ շատերը Ծնունդը պիտի տոնեն՝ առանց մտածելու, թե իրապես ո՞վ է մանուկը: Երբ նրանց հետ հաղորդակցվում ենք, կարող ենք օգնել նրանց, որ նկատի առնեն այս կարևոր հարցը. «Ծնունդը պարզապես սիրտ ջերմացնող պատմություն է ակոսում ծնված մանուկի մասին»: Կամ «Մեր Արարիչը իրապե՞ս այցելեց իր Ստեղծագործությանը ու մեզ՝ նից մեկը եղավ»:

Աղոթք - Երկնքում ապրող Հայր, թող մեր Ծնունդի տոնակատարությունները այս տարի, շռայլ կամ փոքր, Մեսիային պատվեն, որ եկավ իր ժողովրդին փրկելու: Ամեն:

Ո՞վ է Հիսուսը քեզ համար:

Ձեռք պարզել

Այդպիսի ցուրտ ձմռան եղանակին զավակներս մեր տան հետևի բակի սառույցի վրա չմշկելու հրճվանքն են ապրում: Երբ նրանք դեռ փոքր էին, չմշկելը մեծ մարտահրավեր էր նրանց համար. դժվար էր համոզել, որ ոտքերը կարծր սառույցին դնեն, որովհետև ճանաչում էին գետին ընկնելու ցավը: Ամեն անգամ, երբ նրանց ոտքը սահում էր, ամուսինս կամ ես մեր ձեռքը պարզելով նրանց ոտքի էինք հանում, որպեսզի շարունակեն իրենց սահքը: Երբ ընկնում ենք, մեզ օգնելու համար մեկին ունենալը ժողովողի մեջ նկարագրված օգնող ձեռքի պարզված է: Ուրիշի հետ աշխատակցելը մեր կատարած գործը ավելի քաղցր ու ազդու է դարձնում (4.9), ու բա-

Կարդա՛ ժողովող 4. 8-12

Քանի որ եթե մեկն ընկնի, նրա ընկերը կկանգնեցնի նրան: Ժող. 4.10

րեկամը ջերմություն է բերում մեր կյանքերի մեջ: Երբ մարտահրավերներ դիմադրավենք, լավ կլինի, որ մեր կողքին մեկին ունենանք՝ որպես գործնական ու զգացական նեցուկ: Այս հարաբերությունները մեզ գորություն, նպատակ ու մխիթարություն են պարզվում: Երբ մենք մեզ գտնենք կյանքի դժվարությունների մեջ սառույցի վրա ընկած, օգնող ձեռք կունենանք մեզ մոտ: Եթե այո՛, կարող է դա Աստծո ձեռքը լինել: Երբ ուրիշ մեկը բարեկամի կարիք ունենա, կարո՞ղ ենք մենք Աստծո պատասխանը լինել՝ նրան վեր բարձրացնելու համար: Ընկերակից լինելով՝ մենք շատ հաճախ կարող ենք գտնել բարեկամ: Եթե այնպես թվա, որ ոչ ոք չկա մեզ մոտ մեզ դարձյալ ոտքերի վրա պահելու, կարող ենք մխիթարություն ունենալ՝ գիտենալով, թե Աստված միշտ մեզ մոտ եղող օգնականն է (Սաղմ. 45.2): Երբ մեր ձեռքը Իրեն երկարենք, նա պատրաստ կլինի մեզ հաստատ պահելու Իր հզոր ձեռքով:

Աղոթք - Շնորհակալ եմ, Յայր, որ ինձ օգնում ես, երբ կյանքը ինձ գետին է նետում: Շնորհակալ եմ այն մարդկանց համար, որոնց գործածում ես ինձ քաջալերելու և զորացնելու:

Դու ես իմ ամենից հավատարիմ բարեկամը: Ամեն:

Ինչպե՞ս կարող ես քո կյանքի մեջ ինքդ քեզ ավելի բացել Աստծո ներկայության:

Միայնակ Ծնունդ

Ամենից մենակյաց Ծնունդը, որ անցկացրել եմ, պապիս Հյուզակի մեջ էր՝ Սաքոգուի մոտ, Հյուսիսային Գանայում: Ես հազիվ տասնհինգ տարեկան էի, ու ծնողներս, քույրերս ու եղբայրներս հազարավոր մղոններ հեռու էին: Նախորդ տարիներին, երբ իրենց ու գյուղի իմ ընկերների հետ էի, Ծնունդը միշտ էլ մեծ էր ու հիշատակելի: Սակայն այս անգամ լուռ էր ու միայնակ: Երբ պառկեցի անկողնու վրա, հիշեցի մի երգ. «Տարին ավարտված է, Ծնունդը՝ եկած, Աստծո Որդին՝ ծնված, խաղաղություն և ուրախություն ամենքին»:

Կարդա՛ր
Սաղմոս 24. 14-22

Աչքերն իմ մշտապես Տիրոջն են ուղղուած: Սաղմ. 24.10

Տատիկս եկավ ու հարցրեց. «Ի՞նչ երգ է սա»: Տատս ու պապս չգիտեին Ծնունդի կամ Քրիստոսի մասին: Հետևաբար իրենց պատմեցի Ծնունդի մասին: Այդ վայրկյանները լուսավորեցին մենությունս:

Միայնակ դաշտերում՝ միայն ոչխարների հետ և երբեմն էլ գիշատիչ կենդանիների, Դավիթը՝ հովիվ պատանին, միայնության փորձառությունը ունեցավ: Միակը չէր դա: Հետագայում նա գրեց. «Քանզի միամորիկ եմ ես և աղքատ» (Սաղմ. 24.16): Սակայն Դավիթը թույլ չտվեց, որ միայնությունը պատճառ դառնա, որ լքյալի զգացումը ունենա: Դրա փոխարեն նա երգեց. «Տե՛ր, ես սպասեցի քեզ» (Հմ. 21):

Ժամանակ առ ժամանակ մենք էլ միայնությանը պիտի դիմագրավենք: Ծնունդը, ուր էլ գտնի քեզ այս տարի, միայնության մեջ կամ բարեկամների հետ, նրա եղանակը վայելիր Քրիստոսի հետ:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ Քեզ հետ միայնակ չեմ իմ միայնության մեջ: Այս Ծնունդին օգնիր, որ Քեզ հետ իմ ունեցած հարաբերության հաճույքը ունենամ և ուրիշներին հասնեմ: Ամեն:

Հիսուսի հետ Ծնունդի ժամանակ մենք երբեք միայնակ չենք:

Աստծո պահված ձեռքը

Ընկերս որդեգրվել էր Միացյալ Նահանգներից միսիոներ մի գուլգի կողմից ու մեծացել Գանայում: Իր ընտանիքի՝ Միացյալ Նահանգներ վերադառնալուց հետո նա սկսեց քոլեջ հաճախել, սակայն պիտի թողներ: Հետո զինվորագրվեց բանակին, որ վերջապես օգնեց իրեն քոլեջի վճարումներն անելու ու աշխարհը շրջագայելու: Այդ բոլորի մեջ Աստված գործի վրա էր՝ պատրաստելով նրան հատուկ դերի համար: Այսօր նա գրում է ու խմբագրում Քրիստոնեական գրականությունն ու այդպես ծառայում միջազգային ունկնդիրներին:

Նրա կինն էլ հետաքրքրական պատմություն ունի: Նա ձախողվեց քիմիագիտության քննությունը քոլեջի առաջին տարում լուսնոտության համար ընդունած դեղերի ուժեղ ազդեցության տակ: Երկար մտածումներից հետո որոշեց գիտության փոխարեն Ամերիկյան Նշանաբան Լեզու նյութը սերտել, որ ավելի հեշտ աշխատանքային բեռ ուներ: Անդրադառնալով այդ փորձառությունը՝ նա ասաց. «Աստված իմ կյանքը այլ նպատակի է ուղղում»: Այսօր նա Աստծո՝ կյանք փոխող Խոսքը մատչելի է դարձնում խուլ մարդկանց:

Երբեմն մտածում ես, թե Աստված քեզ ո՛ւր է առաջնորդում: Սաղմոս 138.16-ը ճանաչում է Աստծո գերիշխան ձեռքը մեր կյանքերի մեջ. «Իմ անկատարությունները տեսան Քո աչքերը, և այդ բոլորը գրվեցին Քո գրքում: ... Ու չկար մեկը, որ առաջնորդեր դրանք»: Չգիտենք, թե Աստված մեր կյանքի պարագաները ինչպես պիտի գործածի, սակայն մենք վստահ կարող ենք լինել, թե Աստված ամեն բան գիտի մեր մասին ու առաջնորդում է մեր քայլերը:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, օգնիր, որ Քեզ վստահեմ, նույնիսկ երբ չեմ հասկանում: Շնորհակալ եմ, որ ինձ հոգ ես տանում ու իմ քայլերն ուղղորդում: Ամեն:

Ի՞նչ քայլեր կարող ես անել՝ տեսնելու, թե Աստված ինչպե՞ս է ուղղում կամ էլ իր կոչի համաձայն գործի լծում:

Կարդա՛
Սաղմոս 138. 13-18

Իմ անկատարությունները տեսան քո աչքերը, և այդ բոլորը գրվեցին քո գրքում: Սաղմ. 138.16

ՏՈՒՆ

Վերջերս մի բարեկամ, որ տների վաճառքով էր զբաղվում, քաղցկեղի պատճառով մահացավ: Մինչ կինս ու ես հիշեցինք Բեթսահին, Սուն հիշեց, թե տարիներ առաջ Բեթսահին մի մարդու առաջնորդել էր Հիսուսին հավատալու, որ հետո մեզ հետ լավ բարեկամ դարձավ: Որքա՛ն քաջալերական է հիշել, թե Բեթսահին ոչ միայն ընտանիքների օգնեց, որ հարմար տուն գտնեն բնակության համար այստեղ՝ մեր համայնքում, այլ ուրիշներին օգնեց, որպեսզի վստահ լինեն, որ ունեն հավիտենական տուն: Մինչ Հիսուսը պատրաստվում էր խաչ բարձրանալ, Նա հետաքրքրություն ցուցաբերեց մեր հավիտենականության հանդեպ: Իր աշակերտներին ասաց. «Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու», ու նրանց հիշեցրեց, թե շատ սենյակներ պիտի լինեն Իր Հոր տան մեջ բոլոր նրանց համար, որոնք Իրեն են վստահում (Հովհ. 14:2):

Մենք փափագում ենք լավ տուն ունենալ այս կյանքի մեջ, նաև հատուկ տեղ մեր ընտանիքների համար՝ ուտելու, քնելու և ուրիշների հետ բարեկամություն մշակելու ուրախության: Սակայն մտածենք, թե որքա՛ն հիանալի պիտի լինի, երբ մենք անցնենք մյուս կյանքին ու գտնենք, թե Աստված արդեն հարկ եղածն արել է մեր հավիտենական բնակարանի համար: Փառք Աստծուն մեզ «ճոխ» (Հովհ. 10:10) կյանք տալու համար՝ ներառյալ Իր ներկայությունը մեզ հետ ու հետո Իր հետ լինելու այնտեղ, որ մեզ համար է պատրաստում (14:3):

Աղոթք - Տե՛ր, երբ ակնկալում եմք ունենալ այն տունը, որ Դու ես պատրաստում մեզ համար, թող ուրիշներին էլ պատմենք, որ նրանք, որոնք հավատում են Հիսուսին, կարողանան հավիտյան վայելել Քո պատրաստած տունը: Ամեն:

Ո՞ւմ հետ կարող ես խոսել այսօր հավիտենական տուն ունենալու իրենց կարիքների մասին և երաշխավորություն տալ, որ դա պիտի ունենան:

Կարդա՛
Հովհ. 14. 1-6

Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան, իսկ եթե ոչ, ես ձեզ կասեի՝ «Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու»:
Հովհ. 14.6

Ջաստատ սեր

Երբ մեքենայի դուռը ամուր փակեցի ու դպրոց ուղղվեցի, հայրս ասաց. «Սիրում եմ քեզ»: Վեցերորդ դասարան էի, ու ամիսներ շարունակ հիմնականում այս նույն պատկերը կրկնեցինք ամեն առավոտ: Երբ դպրոց էինք հասնում, հայրս ասում էր. «Լավ օր ունեցիր: Սիրում եմ քեզ»: Պատասխանը լինում էր. «Ցտեսություն»: Բարկացած չէի նրա վրա, ոչ էլ փորձում էի անտեսել նրան: Պարզապես խորասուզված էի իմ մտածումների մեջ, այդ պատճառով ուշադիր չեղա իր խոսքերին: Սակայն հորս սերը միշտ էլ նույնը մնաց: Աստծո սերն ու կարեկցությունն էլ այդպես է և ավելին՝ հավիտենական է: Եբրայերեն բառը, որ ներկայացնում է այս հաստատ սերը, «հեսեդ»-ն է, որ շատ անգամներ գործածված է Հին Կտակարանի մեջ և քսանվեց անգամ այս Սաղմոսում: Ոչ մի արդիական բառ չի կարող տալ դրա ամբողջական իմաստը. այն թարգմանում ենք որպես «ազնվություն», «սիրո ազնվություն», «չնորհ» կամ «հավատարմություն»: «Հեսեդը» սեր է, որ հիմնված է ուխտով եղած նվիրումի վրա, սեր, որ կարգապահ ու հավատարիմ է: Նույնիսկ երբ Աստծո ժողովուրդը մեղք գործեց, Աստված հավատարիմ մնաց Իր սիրո մեջ: Հաստատ հավատքը անբաժան մասն է Աստծո նկարագրի (Ել. 34:6): Երբ երեխա էի, երբեմն հորս սերը բնական երևույթ էի համարում: Հիմա երբեմն նույն ձևով եմ ընդունում երկնավոր Հորս սերը: Շատ հաճախ մոռանում եմ Աստծուն լսել և Իր կոչին պատասխանել: Մոռանում եմ երախտապարտ լինել: Սակայն գիտեմ, որ Աստծո սերը իմ հանդեպ տակավին հաստատ է, իրականություն, որ հաստատ հիմ է պարզևում կյանքիս:

Կարդա՛ր
Սաղմոս 135. 1-6

Գոհություն մատուցեցեք Տիրոջը, քանզի բարի է նա, քանզի հավերժ է նրա ողորմությունը: Սաղմ. 135.1

Աղոթք - Տե՛ր, փառավորում ենք Քեզ Քո հաստատ սիրո համար: Նույնիսկ երբ մենք հավատարիմ չլինեմք, Դու միշտ հավատարիմ ես: Ամեն:

**ժամանակ տրամադրիր Աստծո սերը ուրիշին
ցույց տալու:**

«Տիրոջն եմ ես»

Ներկայիս տեսնում ենք, որ դաջվածքը, այսինքն՝ մաշկի վրա մեկանով նկարելը, տարածված երևույթ է: Մի շարք դաջվածքներ այնքան փոքր են լինում, որ հնարավոր չէ նկատել: Մարզիկներ, դերասաններ ու սովորական մարդիկ նախընտրում են իրենց մարմնի մեծ մասը ծածկել գունավոր պատկերներով կամ խոսքերով: Թվում է, թե մարդիկ այս սովորությունը պիտի շարունակեն: Այս արհեստը 3 բիլիոն դոլար եկամուտ է բերել 2014-ին, և ավելին՝ 66 միլիոն էլ կազմել է դրանք վերացնելու գործը: Անկախ քո գզացումներից՝ Եսայի 44-ը փոխաբերականորեն խոսում է այն մարդկանց մասին, որոնք հետևյալ գրությունն էին դնում իրենց ճակատներին. «Աստծունն եմ ես» (Հմ. 5): Այս «ինքնադաջումը» գազաթնակետն է ամբողջ պարբերության, որի մեջ Եսային խոսում է Իր ընտրյալ ժողովրդի հանդեպ Աստծո ունեցած հոգատարության մասին (Հմ. 1): Նրանք կարող էին Իր օգնությանը վստահել (Հմ. 2), և նրանց երկիրն ու ժառանգորդները նշանակվել էին օրհնություններ ստանալու համար (Հմ. 3): Այս երեք պարզ, գորավոր բառերը՝ «Աստծունն եմ ես», հաստատում են, թե Աստծո ժողովուրդը գիտեր, որ իրենք Նրա ստացվածքն էին, և թե Նա պիտի հոգար: Նրանք, որոնք Աստծուն են գալիս Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով, կարող են վստահությանմբ ասել. «Աստծունն եմ ես»: Մենք Իր ժողովուրդն ենք, Իր ոչխարները, Իր գավակները, Իր ժառանգորդները և Իր բնակությունը: Եթե մենք չունենք որևէ արտաքին նշան կամ գծագրված պատկերներ, կարող ենք վստահ լինել, թե մենք ունենք Հոգու հաստատ վկայությունը մեր սրտերի մեջ, որ մենք Իրն ենք (տե՛ս՝ Հռոմ. 8.16-17):

Կարդա՛ Եսայի 44.1-5

Նույն ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, որ մենք Աստծու որդիներ ենք: Հռոմ. 8.16

Աղոթք - Հայր, Քո սիրո ու հոգատարության արտահայտությունները մեր շուրջն են, ու Քո Հոգին իմ մեջ է բնակվում: Ամեն:

Ինչպե՞ս կարող է քո՝ Աստծուն պատկանելու ճշմարտությունը ազդել քո կենսակերպի վրա:

Մեսիան ակնկալի

Մեքենան նորոգող մարդը շատ երիտասարդ էր թվում: -Նա հազիվ պատանի է,- ամուսինս՝ Դանը փսփսաց ինձ՝ արտահայտելով իր կասկածը:

Նրա տարակուսանքը այդ պատանու կարողությունների համար նմանվեց Նազարեթ քաղաքում գանգատվողներին, ուր քաղաքացիները կասկածեցին Հիսուսի ով լինելուն:

«Չէ՞ որ սա հյուսիսի որդին է»,- ասացին (Մատթ. 13.55), երբ Հիսուսը սովորեցնում էր ժողովարանում: Հեզնանքով ու զարմանքով լսել էին, թե իրենց ծանոթ մեկը սովորեցնում է ու բժշկում, և հարցրին. «Սրան որտեղի՞ց են այս իմաստությունն ու հրաշագործ գորությունները» (Հմ. 54): Փոխանակ Հիսուսին վստահելու՝ նրանք բարկացան Նրա հեղինակության դեմ (Հմ. 15, 58):

Այս ձևով մենք էլ կարող ենք պայքարել մեր Փրկչի իմաստությանը և գորությանը վստահելու համար, հատկապես մեր կյանքերում ծանոթ ու սովորական մանրամասների մեջ: Թերանալով իր օգնությունն ակնկալելու մեջ՝ կարող ենք Նրա՝ մեր կյանքերը փոխող հրաշքներից զրկվել: Դանը, տեսնելով, թե իրեն պետք եղած օգնությունը իր առջև էր, վերջապես ընդունեց այդ երիտասարդին ու թույլ տվեց, որ նա քննի մեր մեքենայի էլեկտրական մարտկոցը: Պարզապես մեկ պտուտակ փոխելով՝ երիտասարդը մեքենան մի վայրկյանում գործի գցեց, ու լույսերը փայլեցին: Դանն ասաց. «Մնունդի նման՝ լույսերը վառվեցին»:

Մենք նույնպես ակնկալենք և ունենանք փորձառությունը, թե Մեսիան բերում է նոր լույս, կյանք և օգնություն մեր ամենօրյա ճամփորդության մեջ իր հետ:

Աղոթք - Երբ կասկածեմ, Տե՛ր, օգնիր իմ անհավատության դեմ: Ամեն:

Որո՞նք են այն գործնական ձևերը, որոնք մեզ կարող են հիշեցնել, թե Աստված հսկում է ու կարող է:

Կարդա՛
Մատթեոս 13. 53-58

Չէ՞ որ սա հյուսիսի որդին է, չէ՞ որ սրա մայրը Մարիամ է կոչվում: Մատթ. 13.55

«Գաղտնիք կա՛», գաղտնիքը

Մի աշխատակից ինձ խոստովանեց, թե ինքը չի մտածում, որ «Հիսուսի մարդն է»: Լսեցի, երբ նա նկարագրեց այն, ինչ կոչում էր «Հանգստի ու ինքնասիրության» կյանք, և թե ինչպես դա նրան չէր գոհացնում: Նա ասաց. - Սակայն սա է իմ խնդիրը: Ես փորձում եմ բարի լինել, նույնիսկ հոգատար, սակայն չի ստացվում: Թվում է, թե այն բաները, որ ուզում եմ անել, չեմ կարողանում, ու այն բաները, որ ուզում եմ չանել, շարունակում եմ անել: Ապա հարցրեց ամենայն անկեղծությամբ. - Ո՞րն է քո գաղտնիքը: - Իմ գաղտնիքը, - ասացի, - այն է, որ գաղտնիք չկա: Ես էլ քեզ նման անկարող եմ ապրելու Աստծո դրած չափանիշով: Հետևաբար, ճիշտ այդ պատճառով մենք Հիսուսի կարիքն ունենք: Աստվածաշունչը բացելով ցույց տվեցի «իր» մեջբերումը, ինչպես Պողոսն արտահայտեց նույնը Հռոմ.

Կարդա՛
Յո՞ւմ. 7. 14-25

Որովհետև ինչ որ անում եմ, չգիտեմ, քանի որ այն չեմ անում, ինչ որ ուզում եմ, այլ այն եմ անում, ինչ որ ատում եմ: Յո՞ւմ. 7.15

7.15-ի մեջ: Պողոսի այս պատրանքի խոսքերը հաճախ վերաբերում են թե՛ Քրիստոնյաների և թե՛ նրանց, որոնք փորձում են հավատքի փորձառությունը ունենալ, որոնք իրենք իրենց գտնում են բավարար չափով բարի լինելու փորձի մեջ, որ արժանի լինեն Աստծուն, սակայն քչերն են գտնվում: Հավանաբար նույն զգացումները դու էլ ես ունենում: Եթե այդպես է, Պողոսի հայտարարությունը, թե Քրիստոսն է մեր փրկության ու տված փոփոխության հեղինակը (7.25-8.2), մեզ խայտանք պիտի պարզվի: Հիսուսն արդեն արել է մեզ ազատ արձակելու գործը այն բաներից, որոնք մեզ շփոթի են մատնել: Աստված մեր հոգու ղռներն է բախում: Պատասխանիր Նրա բախումին այսօր: Գաղտնիք չէ, թե ինքն է պատասխանը:

Աղոթք - Հայր, երկար տարիներ առաջ Պողոսի գրած խոսքերը թող դիպչեն նրանց սրտերին, որոնք անկարող են զգում իրենց: Բաց նրանց սրտերը Սուրբ Հոգու գործի համար, որ առաջնորդում է նրանց Յիսուսին: Ամեն:

Առանց Յիսուսի փրկությունը և հոգևոր աճումը երկու պարզևներն են, որոնց հնարավոր չէ հասնել:

«Հուլյս՝ մանուկի համար»-ի ծառը

Մեր Ծնունդի ծառը փայլփլող լույսերով զարդարելուց հետո կապեցի կապույտ ու վարդագույն օղակապեր ճյուղերի վրա ու տվեցի «Հուլյս՝ մանուկի համար» անունը: Ամուսինս ու ես չորս տարուց ավելի սպասում էինք զավակ որդեգրելու: Ու ասացինք. «Վստահաբար եկող Ծնունդին»: Ամեն առավոտ ծառի մոտ կանգնելով աղոթեցի՝ ինքս ինձ հիշեցնելով Աստծո հավատարմությունը: Դեկտեմբերի 21-ին ստացանք լուրը. «Ո՛հ, մանուկ չկա մինչև Ծնունդ»: Ավերված ու փշրված՝ լուռ կանգնեցի ծառի մոտ, որ մեզ համար եղել էր Աստծո նախատեսություն խորհրդանիշը, ու մտածեցի. Աստված հավատարի՞մ է դեռ: Մխալ բա՞ն էի անում արդյոք: Երբեմն Աստծո ակներև ետ մնալը իր սիրո կարգապահության արդյունքն է: Եվ երբեմն Աստված սիրով ուշացնում է մեր վստահությունը նորոգելը: Ողբ Երեմիայի մեջ

Կարդա՛ր
Ողբ Երեմ. 3.1-3,13-24

Անսպառ են Տիրոջ ողորմությունները... Ամեն նոր առավոտի հետ բազմանում է քո ճշմարտությունը, Տե՛ր: Ողբ Երեմ. 3.22-23

Երեմիա մարգարեն նկարագրում է Աստծո սրբազրությունը Իսրայելի մեջ: Ցավը զգալի է. «Երիկամներս մեջտեղից կիսեց, նետահարեց ինձ» (3.13): Այդ ամենի մեջ Երեմիան նաև ցուցաբերեց գերագույն վստահություն Աստծո հավատարմության համար. «Անսպառ են Տիրոջ ողորմությունները: Ամեն նոր առավոտի հետ բազմանում է քո ճշմարտությունը, Տե՛ր» (3.22-23): Թողեցի ծառը իր տեղում Ծնունդից հետո ու շարունակեցի իմ առավոտյան աղոթքը: Վերջապես Հարություն Տոնի շաբաթավերջին մենք ունեցանք մեր փոքրիկ աղջնակին: Աստված միշտ հավատարիմ է՝ ո՛չ անհրաժեշտաբար մեր ժամանակացույցով, ո՛չ էլ միշտ մեր ցանկության համաձայն: Հիմա զավակներս երեսուն տարեկանին մոտ են, սակայն ամեն տարի այդ ծառի մանր մեկ օրինակն եմ զարդարում՝ հիշելու, որ Աստծո հավատարմությանը պետք է հուսամ:

Աղոթք - Սիրելի՛ Տե՛ր, օգնիր, որ Քեզ վստահեմ այսօր: Դու հավատարիմ Աստված ես: Ամեն:

Հուսալու լավագույն պատճառը Աստծո հավատարմությունն է:

Երկնքի սիրո երգը

1 936-ին երգահան Բիլլի Հիլը հրապարակեց հանրաձանոթ մի երգ «Սիրո փառքը» խորագրով: Շատ չանցած՝ սկսեցին երգել սիրով իրար փոքր բաներ անելու ուրախության մասին: Հիսուն տարի հետո գրող Փիթըր Սեթերան ավելի ռոմանտիկ մի երգ հորինեց նման խորագրով: Նա երևակայեց հավիտյան ապրող երկու անձանց, որոնք ամեն ինչ միասնաբար են անում սիրո փառքի համար:

Կարդա՛ր
Յայտնություն 5. 1-13

Մենք սիրենք
նրան, որովհետև
առաջ նա սիրեց
մեզ: Ա Յովհ. 4.19

Աստվածաշնչի վերջին գիրքը՝ Հայտնություն գիրքը, նկարագրում է սիրո նոր երգ, որ մի օր ամբողջ երկնքի ու երկրի մեջ եղող ձայները վեր պիտի բարձրացնի (Հայտ. 5.9, 13): Սակայն երաժշտությունը սկսվում է առավոտի փոքր երգով. Հովհաննեսը ողբում է՝ չտեսնելով պատասխան աշխարհի մեջ կատարված բոլոր սխալ բաներին (Հմ. 3-4): Սակայն իր վիճակը լուսավորվում է, ու երաժշտությունը աստիճանաբար բարձրանում է (Հմ. 12-13), մինչ Հովհաննեսը սովորում է իսկական սիրո փառքն ու պատմությունը: Շուտով նա լսում է ամբողջ ստեղծագործության փառաբանությունը Հուդայի հզոր Առյուծ-Թագավորին (Հմ. 5), որ սիրով գառնուկի նման իրեն զոհելով՝ շահել է Իր հետևորդների սրտերը՝ մեզ ազատելու համար (Հմ. 13): Ավելի հուզիչ բառերով երգում մենք տեսնում ենք, թե ինչու նույնիսկ պարզ ազնիվ մի արարք բարձրանում է երգի թևերին: Այն փառքը, որի համար երգում ենք, ցոլացնում է մեր Աստծո սիրտը: Մենք երգում ենք Իր մասին, որովհետև մեզ տվեց մեր երգը:

Աղոթք - Յայր, խնդրում ենք օգնիր մեզ՝ տեսնելու, թե նույնիսկ փոքրագույն սիրո ու ազնվության մի արարք մեզ հիշեցնում է Քո ունեցած սերը մեր հանդեպ: Ամեն:

Ինչպե՞ս կարող ես Աստծուն շնորհակալություն հայտնել ազնվության պարզ քայլերով:

Գեղեցկության մի խճանկար

Նստած էյն Քարեմում (Իսրայել)՝ Այցելություն եկեղեցու զգավթի մեջ, հիացումով դիտեցի 67 խճանկար, որոնք պարունակում էին Ղուկաս 1.46-55-ի բառերը տարբեր լեզուներով: Ավանդականորեն «ծանոթ» և լատիներեն «փառաբանել» բառից եկած Մեծացուցե - Մակնիֆիբան Մարիամի ուրախ պատասխանն է այն հայտարարության, որ նա պիտի լիներ եկող Մեսիայի մայրը:

Յուրաքանչյուր ցուցատախտակ պարունակում է Մարիամի բառերը՝ նրանց մեջ՝ «Թող իմ անձը Տիրոջը փառավորի... Իմ հոգին ուրախացավ իմ Փրկիչ Աստծով... Որովհետև հզորն ինձ համար մեծամեծ բաներ արեց» (Հմ. 46-49):

Սուրբ Գրային այս երգը, քանդակված սալերի վրա, փառաբանության երգ է, ուր Մարիամը հիշում է Աստծո հավատարմությունը իր ու Իսրայելի ժողովրդի հանդեպ: Մարիամը՝ Աստծո շնորհի երախտապարտ ստացողը, հրճվում է իր փրկությունով (Հմ. 47): Ընդունում է, որ Աստծո ողորմությունը սերունդներով իսրայելցիներին է հասել (Հմ. 50): Ետ նայելով Աստծո ցուցաբերած հոգատարությանը՝ Մարիամը փառավորում է Տիրոջը իր կատարած հզոր գործերի համար իր ժողովրդի հանդեպ (Հմ. 51): Նաև շնորհակալություն է հայտնում Աստծուն՝ անդրադառնալով, թե իր ամենօրյա կարիքները Աստծո ձեռքից են գալիս (Հմ. 53): Այս Ծնունդին նկատի առ Աստծո բարությունը, մինչ ետ ես նայում տարուն: Այդ անելով՝ դու կարող ես ստեղծել մեծ գեղեցկության խճապատկեր քո փառաբանության բառերով:

Աղոթք - Դա՛յր, փառավորում եմք Քեզ այն մեծ բաների համար, որ Դու ես արել մեր կյանքերի մեջ այս տարվա ընթացքում: Ուրախանում ենք Քո ողորմության ու հոգատարության համար: Ամեն:

Ցուցակ պատրաստիր Աստծո տված օրհնությունների համար: Դետո կիսիր իր արած բարության պատմությունները ուրիշների հետ:

Կարդա՛ր Ղուկաս 1. 46-55

Թող իմ անձը Տիրոջը փառավորի:
Իմ հոգին ուրախացավ իմ Փրկիչ Աստծով: Ղուկ. 1.46-47

Յայելիներ ու լսողներ

Երբ Կամպալայի (Ուգանդա) պանդոկից դուրս եկա, հյուրընկալողս, որ եկել էր ինձ տանելու, ինձ նայեց զվարճալի ժպիտով: Հարցրի.

- Ծիծաղելու ի՞նչ կա:

Նա խնդաց ու հարցրեց.- Մազերդ սանրեցի՞ր:

Հիմա իմ հերթն էր ծիծաղելու, որովհետև մոռացել էի մազերս սանրել: Դուրս չեկած՝ նայել էի հայելուն, սակայն ինչպե՞ս չէի նկատել:

Հատուկ ձևով Հակոբը օգտակար ուղղություն է տալիս՝ Աստվածաշնչի մեր սերտողությունը ավելի օգտակար դարձնելու համար: Մենք հայելուն ենք նայում մեր անձերը քննելու համար ու տեսնելու, թե որևէ փոփոխելու բան ունե՞նք՝ մազ սանրել, երեսը լվալ, շապիկը շիտակ կոճկել:

Աստվածաշունչը նույնպես հայելու նման մեզ օգնում է քննել մեր նկարագիրը, կեցվածքը, խորհուրդները և վարմունքը (Հակ. 1.23-24): Սա մեզ կարողություն է տալիս մեր կյանքը ճշտելու Աստծո տված սկզբունքներին համաձայն: Մեր լեզուներին «սա՛նձ» պիտի դնենք (Հմ. 26) և «որբերին ու այրիներին այցելենք» (Հմ. 27):

Ուշադիր պիտի լինենք մեր մեջ եղող Աստծո Սուրբ Հոգուն ու մեր անձերը «աշխարհից անարատ պահելու» (Հմ. 27):

Երբ ուշադիր նայենք «ազատության կատարյալ օրենքին» ու այն գործնականի վերածենք մեր կյանքերի մեջ, պիտի օրհնվենք մեր արածների համար (Հմ. 25): Մինչ նայում ենք հայելիին, «խոնարհությամբ ընդունենք մեր մեջ սահմանված խոսքը» (Հմ. 21):

Աղոթք - Երկնավոր Դայր, «Բա՛ց իմ աչքերը, որ տեսնեմ Քո Օրենքի հրաշալիքները» (Սաղմ. 118.18): Օգնիր, որ իմ կյանքն ապրեմ այնպես, ինչպես ցույց ես տալիս Քո խոսքի մեջ: Ամեն:

Ինչպես որ հայելին է մեր պատկերը ցուցնում, Աստվածաշունչն էլ հայտնում է մեր ներքին եությունը:

Կարդա՛ր Յակոբոս 1. 16-27

Բայց նա, ով թափանցում է ազատության կատարյալ օրենքի մեջ և նրա մեջ մնում, այլ գործ կատարող. նա իր կատարելով երանելի է: Գալ. 1.25

Ամոթից՝ պատիվ

Դարձյալ տարվա այն ժամանակն է, երբ ընտանիքներ են հավաքվում ուրախությամբ Ծնունդը տոնելու: Մեզնից ոմանք, սակայն, երկյուղ ունեն հանդիպելու որոշ «մտահոգ» ազգականների հետ, որոնց հարցերը կարող են ամուրիներին ու զավակ չունեցող զուգերին տալ այն զգացումը, թե սխալ բան կա իրենց մեջ: Երևակայեք Եղիսաբեթի դավարին կացությունը, որ զավակ չուներ տարիների ամուսնությունից հետո: Իր մշակույթի համաձայն՝ դա նկատվում էր որպես նշան Աստծո շնորհագրկության (ԱԹազ. 1.5-6) և կարող էր իրապես ամոթալի դիտվել: Ուստի մինչ Եղիսաբեթը ապրում էր արդարություն (Ղուկ. 1.6), իր դրացիները և ազգականները կարող էին այլ բաներ մտածել նրա մասին:

Սակայն Եղիսաբեթն ու իր ամուսինը շարունակեցին հավատարմությամբ Տիրոջը ծառայել: Հետո իրենց առաջացած տարիքում հրաշք պատահեց: Աստված լսեց նրա աղոթքը (Հմ. 13): Նա սիրում է Իր բարիքը ցույց տալ մեզ (Հմ. 25): Թեև ուշ է թվում, սակայն Իր ժամանակը միշտ էլ շիտակ է ու Իր իմաստությունը՝ կատարյալ: Եղիսաբեթի ու նրա ամուսնու համար Աստված հատուկ պարգև ուներ. մի մանուկ, որ պիտի լիներ Մեսիայի ճամփան պատրաստողը (Ես. 40.3-5): Դու քեզ անընդունակ ես տեսնում, որովհետև մի բանի պակաս ունես քո կյանքի մեջ. օրինակ՝ համալսարանի վկայական, կողակից, զավակ, աշխատանք կամ տուն: Շարունակիր հավատարմությամբ Նրա համար ապրել ու համբերությամբ սպասիր Իրեն ու Իր ծրագրին: Հոգ չէ՝ թե ինչպիսին են հանգամանքները, Աստված գործում է քո մեջ ու քո միջոցով: Նա գիտի քո սիրտն ու լսում է քո աղոթքները:

Աղոթք - Աստված, Դու հավիտյան բարի ու հավատարիմ ես: Օգնիր մեզ, որպեսզի շարունակենք Քեզ վստահել, նույնիսկ երբ ցավեր ունենանք: Ամեն:

Շարունակիր ապրել Նրա համար՝ համբերությամբ սպասելով Նրա ծրագրին:

Կարդա՛ր Ղուկաս 1. 18-25

«Տերն այս օրերին ինձ այսպես արեց, ինձ վրա նայեց, որ մարդկանց առաջ իմ նախատիմքը վերացնի»: Ղուկ. 1.25

Մեծ արթնութիւնը

Երբ մեր երեխաները դեռ փոքր էին, ընտանիքի ու բարեկամներին հետ հավաքույթների գանձարան հիշատակներ ունենաւ: Զափահասները մինչև ուշ գիշեր զրուցում էին, ու փոքրիկները, խաղից հոգնած, բազմոցի կամ աթոռի վրա քնում էին:

Երբ գնալու ժամն էր գալիս, երեխաներին գրկում ու տանում էի մեքենան, պառկեցնում ետևի աթոռի վրա՝ տուն տանելու: Երբ տուն էինք հասնում, նրանց դարձյալ գրկում էի, տանում իրենց անկողինը, բարի գիշերի համբույրը տալուց հետո լույսը մարում:

Առավոտյան նրանք արթնանում էին տանը՝ իրենց անկողնում:

Սա հարուստ փոխաբերութիւն է ինձ համար այն գիշերվա մասին, երբ մենք «պիտի ննջենք Հիսուսով» (Ա Թես. 4.14): Մենք մրափում ենք ... ու արթնանում մեր հավիտենական տան մեջ. այն տունը, որ պիտի բուժի մեր հոգնութիւնը:

Մի քանի օր առաջ հանդիպեցի Հին Կտակարանի մի հատվածի, որ ինձ զարմացրեց. եզրափակիչ մատնանշում Բ Օրինաց գրքում: «Մովսեսը վախճանվեց Մովաբի երկրում, Տիրոջ խոսքի համաձայն» (Բ Օր. 34.5): Երբայերեն բառացի նշանակում է. «Մովսեսը մեռավ... Տիրոջ խոսքով», խոսք, որ հին օրերի ռաբբինները թարգմանեցին. «Տիրոջ համբույրի հետ»:

Արդյո՞ք այդքան դժվար է պատկերացնել Աստծուն մեր վերջին օրվա մեջ աշխարհի վրա մեզ վերմակելով ու մեզ բարի գիշերի համբույրը տալով: Հետո, ինչպես Ջոն Դոննը շատ պերճախոս ասաց. «Կարճ քնից հետո արթնանում ենք հավիտենականութիւն մեջ»:

Աղոթք - Երկնավոր Հայր, քանի որ Քո բազուկները մեզ գրկում են, մենք կարող ենք խաղաղությամբ քնել: Ամեն:

Մահը դարձակետ լինելուց ավելին չէ մեզ համար՝ մեր ներկայից դեպի հավիտենականութիւն տանող:

Կարդա՛ր
Բ Օրենք 34. 1-8

Քրիստոսով մեռելները նախ հարութիւն կառնեն:
Ա Թես. 4.15

ԾՆՈՒՆԴԻ ՆԱՄԱԿ

Ամեն Ծնունդին բարեկամներիցս մեկը երկար նամակ է գրում իր կնոջը՝ վերհիշելով տարվա մեջ եղած բոլոր դեպքերը, և երազում է ապագայի մասին: Նա միշտ էլ ասում է կնոջը, թե որքա՛ն է սիրում, և ինչո՞ւ: Նա նաև նամակ է գրում իր բոլոր աղջիկներին: Նրա սիրո խոսքերը լինում են Ծնունդի անմոռանալի նվեր:

Մենք կարող ենք ասել, թե առաջին Ծնունդի սիրո նամակը Հիսուսն էր, խոսքը, որ մարմին առավ: Հովհաննեսը նշում է այս բանը իր Ավետարանի մեջ. «Սկզբում էր Բանը, և Բանն Աստծո մոտ էր, Բանն Աստված էր» (Հովհ. 1.1): Հին փիլիսոփայությունից մեջ հունարեն բառը՝ *Խոսքի* համար լոգոսը, առաջարկում է երկնային միտք կամ կարգ, որ իրականությունը միավորում է, սակայն Հովհաննեսն ընդլայնում է սահմանումը՝ հայտնելու համար

Խոսքը որպես անձ՝ Հիսուսը՝ Աստծո Որդին, որ «սկզբում Աստծո մոտ էր (Հմ. 2): Այս Խոսքը՝ Հոր «Միածին» Որդին, «մարմին եղավ ու մեր մեջ բնակվեց» (Հմ. 14): Հիսուսի Խոսքի միջոցով Աստված իրեն հայտնում է որպես կատարելություն: Աստվածաբանները գոտեմարտել են այս խորհրդի հետ դարեր շարունակ: Թեև մենք ամեն բան չենք կարող հասկանալ, սակայն կարող ենք վստահ լինել, թե Հիսուսը, որպես Խոսք, լույս է տալիս մեր խավար աշխարհին (Հմ. 9): Եթե Իրեն հավատանք, կարող ենք Աստծո սիրելի զավակները լինելու փորձառությունը ունենալ (Հմ. 12):

Հիսուսը՝ Աստծո՝ մեզ ուղղված սիրո նամակը, եկել ու բնակվել է մեր մեջ: Դա ինքնին արդեն հիանալի Ծնունդի պարզե է:

Աղոթք - Տե՛ր Հիսուս Քրիստոս, Դո՛ւ ես Աստծո Խոսքը, և Դո՛ւ ես իմ կյանքի մեջ լույս բերում: Թող որ ես Քո բարությունն ու շնորհը ցուցանեմ ու Քեզ պատիվ բերեմ: Ամեն:

Ինչպե՞ս կարող եմ բաժանել Հիսուսի հիանալի շնորհը ուրիշներին հետ:

Կարդա՛ր Յոլի. 1. 1-14

Եվ Բանը մարմին եղավ ու մեր մեջ բնակվեց, և նրա փառքը տեսանք որպես Յորից եղած Միածնի փառք՝ լի շնորհով ու ճշմարտությամբ: Յոլի. 1.14

Առաջնորդին հետևել

Մեր տան վրայով երեք ռազմական ինքնաթիռներ սուրացին:
- Ուոււ,- ասում եմ ամուսնուս՝ Դենին:

-Նա համաձայնում է՝ ասելով.

- Տպավորիչ է:

Մենք բնակվում ենք Օդային Ուժերի կենտրոնի մոտ, ու անբնական չէ մեզ համար տեսնել նման տեսարաններ: Ամեն անգամ որ այս ինքնամուղ օդանավերը թռչում են, նույն հարցն եմ տալիս.

- Ինչպե՞ս են նրանք այսքան իրար մոտ թռչում ու իրենց հավասարակշռությունը պահում:

Հայտնի պատճառը, որ ես սովորեցի, խոնարհությունն է: Վստահ, որ առաջնորդ օդաչուն սավառնում է ճիշտ արագություն և շավիղով, կողքին սավառնող օդաչուները ուղղություն չեն փոխում և հարցականի տակ դնում իրենց առաջնորդի ուղին: Դրա փոխարեն նրանք ձևեր են ընդունում ու մոտիկից հետևում: Արդյունքը ավելի հզոր խումբն է լինում: Տարբեր չէ պարզան Հիսուսի հետևորդների համար: Նա ասում է. «Եթե մեկն ուզում է իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա, ամեն օր իր խաչն առնի ու իմ հետևից գա» (Ղուկ. 9.23): Նրա ուղին անձնուրացություն ու տառապանքի ուղի էր, որին դժվար էր հետևել: Սակայն Նրա ազդու աշակերտները լինելու համար մենք էլ ենք հրավիրված մի կողմ դնելու անձնասեր ցանկություններն ու դրանց փոխարեն հոգևոր բեռներ վերցնելու ամեն օր. օրինակ՝ նախ ուրիշներին ծառայենք, մինչ մոտիկից Նրան ենք հետևում: Խոնարհությամբ Աստծո կողքից քայլելու պատկերը հիանալի է: Նրա առաջնորդությանը հետևելով ու շատ մոտ լինելով՝ մենք կարող ենք Քրիստոսի հետ մեկ լինել:

Աղոթք - Աստված, աղերսում եմք, լցրու մեզ Քո Հոգու սիրով, ուրախությամբ ու խաղաղությունով: Տուր կարողություն փայլող լույս լինելու մեր աշխարհի մեջ, մինչ Քեզ հետ եմք քայլում: Ամեն:

Մեր կյանքերը պատուհան են, որի միջից ուրիշները Հիսուսին են տեսնում:

Կարդա՛ր
Ղուկաս 9. 21-24

Եթե մեկն ուզում է իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա, ամեն օր իր խաչն առնի ու իմ հետևից գա:
Ղուկ. 9.23

Մի՛ վախեցիր

Ամեն անգամ, երբ հրեշտակ է երևում Աստվածաշնչում, նրա առաջին բառերն են լինում. «Մի՛ վախեցիր»: Փոքրիկ հրաշք: Երբ Գերբնականը կապ է հաստատում Երկիր մոլորակի հետ, ընդհանրապես մարդկային դիտորդներին վախով զետի՛ն է տալալու: Սակայն Ղուկասն Աստծո մասին ասում է, որ հայտնվում է այնպես, որ չի վախեցնում, ինչպես Հիսուսը ծնվեց կենդանիների հետ ու պառկեց մսուրում: Աստված այնպես է մոտենում, որ մենք երկյուղ չունենանք: Ի՞նչը ավելի քիչ վախազդու կարող է լինել, քան նորածին մանուկը: Երկրի վրա Հիսուսը թե՛ Աստված է և թե՛ մարդ: Որպես Աստված՝ Նա հրաշքներ կարող է գործել, մեղքեր ներել, մահին հաղթել և ապագան նախատեսել: Սակայն հրեաների համար, որոնք վարժ էին Աստծո պատկերներին՝ որպես ճերմակ ամպ կամ կրակե սյուն, Հիսուսը չփոթ ստեղծեց: Ինչպե՞ս Բեթղեհեմի մեջ մի մանուկ՝ ատաղձագործի որդին և Նազարեթից մի մարդ կարող է լինել Մեսիա Աստծուց: Ինչո՞ւ է Աստված մարդու կերպարանք առնում: Տեսարանը ռաբբիների հետ տաճարում վիճաբանող տասներկու տարեկան մանուկ Հիսուսին կծիկ է տալիս: Ղուկասն ասում է. «Բոլոր նրանք, ովքեր լսում էին նրան, զարմանում էին նրա իմաստություն ու պատասխանների վրա» (Ղուկ. 2:47): Առաջին անգամ սովորական մարդիկ կարող էին խոսակցություն ունենալ Աստծո հետ տեսանելի կերպով: Հիսուսը կարող է խոսել ցանկացածի հետ՝ Իր ծնողների, ռաբբիի, աղքատի այրու՝ առանց նախապես ասելու. «Մի՛ վախեցիր»: Հիսուսի միջոցով Աստված մեզ է մոտենում:

Կարդա՛
Ղուկաս 2. 42-52

Աստծու թագավորությունը մոտեցել է: Մարկ. 1.15

Աղոթք - Երկնավոր Հայր, մի պահ կանգնում ենք Ծնունդի ժամանակ՝ հիշելու, թե ինչպես Քո Որդին մեզ մոտ եկավ մանուկի կերպարանքով... ու պաշտում ենք հիացումով ու զարմանքով, որ Աստված մեզ մոտ եկավ: Ամեն:

Հիսուսն Աստված ու մարդ էր նույն անձի մեջ, որպեսզի Աստված ու մարդ միասին ուրախ լինեն:

Յուլյար մեր ռազմավարությունն է

Իմ նախասիրած ֆուտբոլային խումբը ութ հաջորդական խաղեր պարտվել է, երբ գրում եմ այս տողերը: Յուրաքանչյուր պարտության հետ ավելի դժվար է հուսալ, թե այս տարի հնարավոր պիտի լինի բարելավել վիճակը: Մարզիչը ամեն շաբաթ փոփոխություններ է արել, սակայն հաղթանակ չեն կարողացել արձանագրել: Զրուցելով իմ գործընկերների հետ՝ կատակեցի՝ ասելով, թե տարբեր արդյունքի ցանկալը երաշխավորությունն է, և ասացի. «Յուլյար ռազմավարությունն է»:

Դա ճիշտ է ֆուտբոլի պարագայում: Սակայն մեր հոգևոր կյանքերի մեջ ճիշտ հակառակն է: Ոչ միայն հույս մշակելը Աստծո մեջ ռազմավարությունն է, այլև հավատքով Նրան կառչելն ու վստահելը միայն ռազմավարությունն է: Հաճախ այս աշխարհը մեզ հուսախաբ է անում, սակայն հույսը խարսխում է մեզ Աստծո ճշմարտությանն ու զորությունը մեր դիմադրաված փոթորիկների ժամանակ: Միքիա մարգարեն լավ հասկացավ այս ճշմարտությունը: Նրա սիրտը կտրած էր՝ տեսնելով, թե ինչպես Իսրայելը Աստծուց հեռացավ: «Վա՛յ ինձ: ...Երկյուղածությունը վերացավ երկրից, և մարդկանց մեջ չկա մեկը, որ ուղիղ լինի» (7.1-2): Ապա նա կենտրոնացավ իր իսկական հույսի վրա. «Սակայն ես Տիրոջը կսպասեմ, կսպասեմ իմ փրկիչ Աստծուն» (7.7): Ի՞նչ է հարկավոր մեր հույսը պահելու ճշմարտամի ժամանակ: Միքիան մեզ ցույց է տալիս՝ հսկել, սպասել, աղոթել և հիշել: Աստված լսում է մեր աղաղակը, նույնիսկ երբ մեր հանգամանքները քաջալերական չեն: Այդ պահերին Աստծո հանդեպ մեր ունեցած հույսին կառչել ու վարվել ի պատասխան մեր հույսին, մեր ռազմավարությունն է ու միակը, որ կարող է մեզ օգնել դժվարությունների ժամանակ:

Աղոթք - Դայր, խոստացար հաստատ խարիսխ լինել մեզ համար: Օգնիր, որ Քեզ գոչենք հավատքով ու հույսով՝ հավատալով, որ Դու կլսես մեր սրտի աղերսը: Ամեն:

Ի՞նչ է պահանջում հույս ունենալ դժվարության պահին՝
հսկել, սպասել, աղոթել, հիշել:

Կարդա՛ր Միքիա 7. 1-7

Սակայն ես Տիրոջը
կսպասեմ, կսպասեմ
ինձ փրկիչ
Աստծուն: Միք. 7.7

Առատության թե դառնության մեջ

Էնն Վոսքամփսի գիրքը՝ «Հազար նվեր», քաջալերում է ընթերցողներին քննել իրենց կյանքերը ամեն օր՝ տեսնելու, թե Տերը ի՞նչ է արել իրենց համար: Նա ամեն օր նոթագրում է Աստծո տված առատ պարգևները՝ մեծ ու փոքր, սկսելով խոհանոցի խողովակի պարզ պղպղակի գեղեցկությունից մինչև իր ու մեր բոլորի նման մեղավորների անբաղդատելի փրկությունը: Էննը պնդում է, թե շնորհակալությունը Աստծուն տեսնելու բանալին է նույնիսկ կյանքի ամենից դժվար պայմաններում: Հորը նշանավոր է նման տազնապներով լեցուն կյանքի համար: Արդարև, նրա կորուստները խորն էին ու բազմաթիվ: Իր հոտերը կորցնելուց անմիջապես հետո կորցրեց տասը զավակներին: Հորի մեծ ցավն ու ողբը հստակ է իր անդրադարձի մեջ. նա «պատառոտեց իր հագուստները, կտրեց իր գլխի մազերը» (1.20): Նրա ասած բառերը իր ցավի մեջ ինձ մտածել են տալիս, թե Հորը գիտեր երախտագիտություն սովորությունը, դրա համար է շնորհակալ, որ Աստված իրեն տվել էր այն բոլոր բաները, որ կորցրեց (Հմ. 22): Ուրիշ ինչպե՞ս կարող էր պաշտել իրեն տկարացնող ցավի մեջ: Ամենօրյա երախտագիտություն հայտնելու սովորությունը չի կարող ջնջել ցավի մեծությունը, որ մենք զգում ենք կորստի ժամանակ: Հորը հարցրեց և գոտեմարտեց իր ցավի մեջ, ինչպես գրքի մնացյալ բաժինն է նկարագրում: Սակայն տեսնել Աստծո բարությունը մեր հանդեպ, նույնիսկ ամենափոքր ձևերով, կարող է մեզ պատրաստել ծունկի գալու և պաշտելու մեր ամենակարող Աստծուն մեր երկրավոր կյանքի ամենից խավար ժամերի մեջ:

Աղոթք- Ո՛վ Աստված, Դու ես մեր վայելած բոլոր բարիքների աղբյուրը: Օգնիր, որ տեսնեն Քո առատածեռնությունը նույնիսկ փոքր բաների մեջ ու Քեզ վստահեն կորստի ու դժվարության մեջ: Ամեն: **Պատրաստիր** շնորհակալության ցուցակ ու տե՛ս, թե ինչպես է շնորհակալություն հայտնելու կանոնավոր սովորությունը փոխում մեր ամենօրյա կյանքը:

Կարդա՛ր
Յոթ 1. 13-22

Տերը տվեց, Տերն էլ հետ առավ:
Յոթ. 1.22

Խորհրդածիր Նրա մասին

Օավալդ Չամբերսը Լոնդոնի Սուրբ Գրոց Քոլեջում դասավանդելու տարիներին (1911-1915) ապշեցրեց աշակերտներին իր ասածներով: Երիտասարդ մի աղջիկ բացատրեց, թե քանի որ քննարկումը որոշված էր ճաշի ժամանակ, Չամբերսը հաճախ ենթարկվում էր հարցերի տեղատարափի ու հակադրություն:

Նա հիշում է, որ Օավալդը շատ հաճախ պարզապես ժպտում էր ու ասում. «Առայժմ թող հարցը. պիտի հասկանաս հետո»: Նա քաջալերում էր նրանց, որ մտածեն հարցի մասին ու թույլ տան Աստծուն, որ Իր ճշմարտությունը հայտնի իրենց:

Մի բանի մասին մտածել նշանակում է կենտրոնանալ ու լուրջ խորհել, ինչպես Բեթղեհեմի մեջ Հիսուսի Ծնունդին նախորդող դեպքերից հետո հրեշտակների ու հովիվների հայտնությունը, որոնք եկան տեսնելու Մեսիային: «Իսկ Մարիամն այդ բոլոր բաները պահում էր և իր սրտում մտորում» (Ղուկ. 2.19): Նոր Կտակարանի աստվածաբան Ու. Ի. Վայնն ասաց, թե «խորհրդածել» նշանակում է «միասին նետել, խորհրդակցել, մի բան մյուսի հետ դնել՝ նկատի առնելով հանդամանքները» (Նոր Կտակարանի Բացատրական Բառարան):

Երբ պայքարում ենք հասկանալու իմաստը, թե ինչ է պատահում մեր կյանքերի մեջ, ունենք Մարիամի օրինակը, թե ինչ է նշանակում Աստծուն ու Նրա իմաստությունը փնտրել:

Երբ մենք նրա նման ընդունենք Աստծո առաջնորդությունը մեր կյանքերում, կունենանք նոր բաներ Իր սիրո առաջնորդության մասին, պահելու և խորհրդածելու նրանց մասին մեր սրտերում:

Աղոթք - Հայր, առաջնորդիր մեզ Քո Սուրբ Հոգով, մինչ նկատի ենք ունենում Քո սերն ու ընդունում Քո ծրագիրը մեր կյանքերի համար: Ամեն:

Մի քանի վայրկյան լռության մեջ անցկացրու այս զբաղված շրջանում՝ նստելու ու լսելու, թե Աստված ի՞նչ է ասում մեզ:

Կարդա՛ր
Ղուկաս 2. 8-20

Իսկ Մարիամն այդ բոլոր բաները պահում էր և իր սրտում մտորում:
Ղուկ. 2.19

Ձմռան ձյուն

Ձմռանը ես հաճախ եմ արթնանում աշխարհի գեղեցիկ անակնկալի առջև, որ խաղաղության և հանդարտության առավոտյան ձյունն է: Ոչ գարնան որոտախառն փոթորկի նման, որ հայտարարում է իր ներկայությունը, ձյունը թափվում է փափուկ:

Օղբի Աստաղը «Ձմռան ձյունի երգ»-ում երգում է, որ Հիսուսը կարող էր աշխարհ գալ զորությամբ՝ փոթորկի նման, սակայն Նա եկավ լուռ ու դանդաղ, ձմռան ձյունի նման, որ փափուկ թափվում է գիշերը պատուհանիցս դուրս:

Հիսուսի գալուստը մի քանի լուռ անակնկալներով եղավ: Փոխանակ պալատի մեջ ծնվելու՝ Նա ծնվեց անակնկալ մի տեղում՝ խոնարհ մի տան մեջ, Բեթղեհեմում: Ու նա քնեց միակ գտնված անկողնում՝ մսուրի մեջ (Լուկ. 2:7): Արքայական և կառավարական պաշտոնյաների այցելության փոխարեն՝ Հիսուսը ողջունվեց հեզ հովիվների կողմից (Հմ. 15-16): Հարստություն չունենալով՝ Հիսուսի ծնողները կարողացան միայն երկու թռչուն զոհ մատուցել, երբ նրանք Նրան տաճար տարան (Հմ. 24): Հիսուսի այս անակնկալ մուտքը աշխարհ նախատեսված էր Եսայի մարգարեի կողմից, որ մարգարեացավ, թե Մեսիայի գալուստը «չի աղաղակելու... ոչ ոք դրսում նրա ձայնը չի լսելու» (Ես. 42:2), ոչ էլ պիտի գա զորությունով, որ կարող է ջախջախված եղեգը փշրել կամ էլ պլպլացող պատրույզը մարել (Հմ. 3): Փոխարենը Նա եկավ մեղմ կերպով, որպեսզի մեզ իր կողմը քաշի իր առաջարկած Աստծո խաղաղությունով: Խաղաղություն, որ դեռ հնարավոր է ցանկացածի համար, որ հավատում է մսուրում պառկած Փրկչի անակնկալ պատմությանը:

Աղոթք - Տե՛ր Դիսուս, շնորհակալ եմ, որ կամեցար հրաժարվել Քո արքայությունից և աշխարհ եկար խաղաղություն բերելու: Թող շատերը այս Ծնունդին Աստծո հետ խաղաղություն ունենալու Քո առաջարկն ընդունեն: Ամեն:

**Ինչպես լռիկ ու խաղաղիկ է տրված այս շնորհը: -
Փոքրիկ Քաղաք Բեթղեհեմի**

Կարդա՛ Եսայի 42. 1-4

Նա չի աղաղակելու
և չի վիճելու, ոչ ոք
դրսում նրա ձայնը
չի լսելու, անգամ
ջախջախված եղե-
գը նա չի ջարդե-
լու... Ես. 42:2-3

Պարզապես ուրիշ օր

«Ամեն օր Ծնունդ» գրքում Ուիլյամ Դին Հաուելը պատմում է մի փոքր աղջկա մասին, որ իր ցանկացածն է ստանում: Նախ, երկար ու սոսկալի տարվա համար Ծնունդ է ամեն օր: Երրորդ օրը Ծննդյան ուրախությունը արդեն սկսում է պակասել: Շատ չանցած՝ բոլոր մարդիկ սկսում են ասել շաքարը: Հնդկահավը հագվազյուտ է լինում ու վաճառվում է աներևակայելի գնով: Նվերները չեն ընդունվում շնորհակալությունը ու դիզվում են մի տեղ: Մարդիկ բարկությունը շառաչում են: Բարեբախտաբար, Հաուելի պատմությունը հեղինական առասպել է: Սակայն սքանչելի օրհնություն է, որ Ծնունդի տոնակատարությունը երբեք մեզ չի հոգնեցնում, հակառակ այն իրողության, որ տեսնում ենք Նրան ամբողջ Աստվածաշնչում: Հիսուսի երկինք՝ Հոր մոտ համբարձվելուց հետո Պետրոս առաքյալը հայտարարեց բազմությունը Երուսաղեմի տաճարում, թե Հիսուսը Նա էր, որի մասին Մովսեսը նախապես խոսեց, երբ ասաց. «Ձեր Տեր Աստվածը ձեր եղբայրների միջից ինձ նման մարգարե կհանի» (Գործք Առ. 3.22, Բ. Օր. 18.18): Աստուծո խոստումը Աբրահամին՝ «Եվ քո սերնդով պիտի օրհնվեն երկրի բոլոր ազգերը», վերագրում էր Հիսուսին (Գործք Առ. 3.25, Ծնն. 22.18): Պետրոսը նշեց. «Եվ բոլոր մարգարեները, որոնք... մարգարեացան, այս օրերը պատմեցին»՝ Մեսիայի գալուստը (Գործք Առ. 3.24):

Մենք կարող ենք Ծնունդի հոգին երկար ժամանակ կենդանի պահել տոնակատարությունները ավարտելուց հետո: Տեսնելով Հիսուսին՝ ամբողջ պատմության մեջ մենք կարող ենք գնահատել, թե ինչպես Ծնունդը պարզապես ուրիշ սովորական օր է:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ մեզ տվեցիր Քո Որդուն, ինչպես նաև իր պատմությունը Աստվածաշնչի էջերում: Ամեն:

Այս տարի, մինչ հավաքում ես ծնունդի զարդարանքները, ծնունդի հոգին այլևս մի ծրարիր:

Կարդա՛ր
Գործք Առ. 3. 17-26

Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը՝ մեր հայրերի Աստվածը, փառավորեց իր Որդի Հիսուսին...
Գործք Առ. 3.13

Բարձրագույնը տեղում

Ամուսինս բարեկամներից մեկին եկեղեցի հրավիրեց: Պաշտա-
մունքից հետո նա ասաց. «Սիրեցի երգերը ու մթնոլորտը,
սակայն չեմ հասկանում, թե ինչո՞ւ եք Հիսուսին նման բարձր
պատվո տեղ տալիս»: Ամուսինս հետո բացատրեց իրեն, որ Քրիս-
տոնեությունը հարաբերություն է Քրիստոսի հետ: Առանց Նրա՝
Քրիստոնեությունը անիմաստ պիտի լի-
նի: Մեր կյանքերում Հիսուսի՝ մեզ հա-
մար արածների պատճառով միասին հան-
դիպում ու Նրան ենք պաշտում:

Ո՞վ է Հիսուսը և ի՞նչ է արել: Պողոս
առաքյալը պատասխանում է այս հար-
ցին Կողոսացիս 1-ում: Ո՛չ որ Աստծուն
չի տեսել, սակայն Հիսուսը եկավ Նրան
ցոլացնելու ու հայտնելու (Հմ. 15): Հիսուսը, որպես Աստծո Որ-
դի, եկավ մեզ համար մեռնելու ու մեզ մեղքից ազատելու:
Մեղքը մեզ Աստծո սրբությունից հեռացրել է, ուստի խաղա-
ղություն կարելի է անել միայն կատարյալ մեկի միջոցով: Դա
Հիսուսն էր (Հմ.14, 20): Այլ խոսքով, Հիսուսը մեզ տվել է այն,
ինչ որ մեկը կարող է տալ՝ Աստծուն մոտենալու ու հավիտե-
նական կյանքի միջոց (Հովհ. 17.3):

Ինչո՞ւ է նա արժանի նման պատվի: Նա մահվան հաղթեց ու
մեր սրտերը շահեց իր սիրով ու զոհողությամբ: Նա մեզ տա-
լիս է զորություն ամեն օր: Նա ամեն ինչ է մեզ համար:

Մենք իրեն փառք ենք տալիս, որովհետև արժանի է դրան:
Նրան բարձրացնում ենք, որովհետև այնտեղ է իրեն արժա-
նավայել տեղը: Եկեք բարձրագույն տեղը տանք Նրան մեր սր-
տերի մեջ:

Աղոթք - Հիսուս, Դու Փրկիչս ու Տերս ես, ուզում եմ Քեզ
տալ պատվո բարձրագույն տեղը սրտիս մեջ: Ամեն:

Հիսուսը մեր պաշտամունքի կենտրոնն է:

Կարդա՛
Կող. 1. 15-23

Եվ նա բոլորից
առաջ է, ու ամեն
բան նրանով է
հաստատուն:
Կող. 1.17

Բարի գերծելու օր

2006-ից մի խումբ մարդիկ տոնել են անսովոր դեպք Նոր Տարվա մասին: Դա կոչվում է «Բարի գերծելու օր»: Հիմնված լատին-ամերիկյան սովորությունների վրա՝ անհատները գրի են առնում անհաճո, նեղություն պատճառող հիշատակներ և անցյալ տարվա մեջ եղած վատ հարցեր ու ապա նետում են ծվատող մեքենայի մեջ:

102-րդ Սաղմոսի հեղինակը ավելի հեռուն է գնում՝ առաջարկելով, որ մարդիկ սահն «բարի գերծում» անհաճո հիշատակների համար: Նա մեզ հիշեցնում է, թե Աստված լավ գերծում է տալիս մեր մեղքերին: Իր փորձով Աստծո ընդարձակ սերը Իր ժողովրդի հանդեպ տալու համար Սաղմոսերգուն գործածում է խոսքի պատկերներ: Նա բացատրում է Աստծո սիրո մեծությունը երկնքի ու երկրի միջև եղած հեռավորության միջոցով (Հմ. 11): Հետո Սաղմոսերգուն խոսում է Նրա ներումի մասին ընդարձակ պայմաններով: Ինչքան արևի ծագած տեղը մայր մտած տեղից է հեռու, այնքան Տերը վերացրել է մարդկանց մեղքը (Հմ. 12): Սաղմոսերգուն ցանկանում է, որ Աստծո ժողովուրդը գիտենա, թե Իր սերն ու ներումը հավիտենական ու ամբողջական են: Աստված ազատագրեց Իր ժողովրդին իր օրինազանցություններից՝ ամբողջովին ներելով նրանց:

Բարի Լուր: Կարիք չունենք սպասելու մինչև Նոր Տարի՝ փորձառությունը ունենալու «Բարի գերծելու օրվա»: Հիսուսի հանդեպ մեր ունեցած հավատքով, եթե մեր մեղքերը խոստովանենք, Նա մեզ կտա լավ գերծանություն ու կնետի դրանք ծովի հատակը: Այսօր հնարավոր է Բարի գերծումի օր լինի:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ մեղքից ազատ լինելու համար: Ամեն:

Ի՞նչ մեղքեր կան, որոնց հրաժեշտ տալ է պետք: Ի՞նչ ես զգում, երբ գիտես, որ Աստված հավիտենապես ու ամբողջությամբ ներում է քո հանցանքները:

Կարդա՛ր Սաղմոս 102.1-12

Որքան հեռու է արևելքն արևմուտքից, այնքան հեռացրեց նա մեր անօրենությունները մեզնից: Սաղմ. 102.12

Երբ Աստված ո՛չ ասի

Երբ ես զինվորագրվեցի 18 տարեկանում, ինչպես ամեն սինգապուրցի երիտասարդ, աղոթեցի թախանձագին հեշտ նշանակումի համար, ասե՞ք՝ գրագիր կամ վարորդ: Ֆիզիկապես ուժեղ չլինելով՝ հուսացի խնայվել բիրտ պատերազմական մարզումներից: Սակայն մի երեկո, երբ կարդում էի Աստվածաշունչը, մի համար ուշադրությունս գրավեց. «Քեզ իմ շնորհը բավական է» (Թ Կոր. 12:9): Սիրտս նվաղեց: Աստված պատասխանել էր իմ աղոթքներին: Նույնիսկ եթե ես դժվար պարտականություն ստացած լինեի, Նա իմ կարիքները պիտի հոգար: Ուրեմն ես եղա զինյալ հետևակի բաժնում: Արեցի այն բաները, որ միշտ հաճույք չէին պատճառում ինձ: Հիմա ետ նայելով շնորհակալ եմ, որ Աստված ինձ չտվեց իմ ցանկությունը: Մարզվելն ու փորձառությունը զորացրին ինձ Ֆիզիկապես ու մտովի և ինձ տվեցին վստահությունը չափահասության անցնելու: Եսայի 25:1-5-ի մեջ Իսրայելի դատապարտության մասին մարգարեանալուց ու թշնամիներից նրա ազատման մասին խոսելուց հետո մարգարեն փառավորում է Աստծուն Իր ծրագրի համար: Եսային նշում է, թե այս բոլորը «սքանչելի գործեր» են, որոնք նախապես ծրագրված էին (հմ. 1), ու դեռ նրանց մեջ կան տաժանելի ժամանակներ: Կարող է դժվար լինել լսել Աստծուն, որ ո՛չ է ասում, և ավելին՝ դժվար է հասկանալ, երբ մենք աղոթում ենք բարի բանի համար, ինչպես մեկի համար, որպեսզի ճգնաժամից դուրս գա: Ճիշտ այդ ժամանակ պետք է Աստծո ճշմարտության ծրագրերին կառչենք: Մենք կարող ենք չհասկանալ ինչո՞ւ, սակայն կարող ենք շարունակել Նրա սիրուն, բարությունը և հավատարմությունը վստահել:

Աղոթք - Տեր, տո՛ւր ինձ հավատք՝ Քեզ վստահելու, նույնիսկ երբ Դու ո՛չ ես ասում: Սովորեցրու ինձ ճշմարտությունից զորություն ստանալ՝ վստահ լինելով, թե Դու որպես սիրող Աստված սքանչելի բաներ ես ծրագրել Զո ժողովրդի համար: Ամեն:

Երբ Աստված ո՛չ է ասում, ծրագիր ունի: Շարունակիր վստահել Նրան:

Կարդա՛
Եսայի 25. 1-5

Տեր Աստված իմ...
սքանչելի գործեր կատարեցիր... Ես. 25.1

Ամեն բան նո՛ր

Հնոտիք վաճառող վայրերը գրավում են ինձ: Հաճույք եմ ստանում, երբ մեքենաների վրա եմ աշխատում, ուստի հաճախակի մեր տան մոտ եղող հնավաճառներին եմ այցելում: Առանձին տեղ է, ուր կարելի է գտնել տարբեր տեսակի անտեսված առարկաներ և գործածությունից դուրս եկած բաներ: Մինչ շարքերի միջով քայլում եմ, երբեմն մի մեքենա է ուշադրությունս գրավում, ու ինքս ինձ գտնում եմ մտածումի մեջ նրա արկածների մասին, որ ունեցել է իր «կյանքի ժամանակին»: Յուրաքանչյուրս պատմություն ունի պատմելիք մարդկային նեղությունների մասին:

Սակայն ես հաճույք եմ ստանում նոր կյանք գտնելով հին կտորի համար:

Երբ կարողանում եմ անտեսված բան առնել ու նոր կյանք տալ նրան նորոգված մեքենայի նման, զգում եմ փոքր հաջողություն՝ ժամանակի ու նվազումի հաղթանակ:

Երբեմն մտածում եմ Հիսուսի խոսքերի մասին Աստվածաշնչի վերջում. «Ամեն բան նոր եմ անում» (Հայտ. 21.5): Այս խոսքերը ցույց են տալիս Աստծո նորոգող ստեղծագործությունը, որ պարունակում է հավատացյալների: Արդեն բոլոր նրանք, որոնք ընդունել են Հիսուսին, «նոր ստեղծված են» իր մեջ (Բ Կորնթ. 5.17):

Մի օր մենք պիտի մտնենք իր հետ լինելու չվերջացող օրերի խոստումի մեջ (Հովհ. 14.3): Տարիքն ու հիվանդությունը այլևս չպիտի կարողանան իրենց վնասը հասցնել, ու մենք պիտի շարունակենք հավիտենական կյանքի արկածախնդրությունը:

Աղոթք - Սիրո՛ղ Տեր, Քեզ եմ փառավորում, որովհետև նոր ստեղծված եմ, ու Քո ազնվության ու ողորմության մեջ ինձ տվել ես հավիտենական կյանքի խոստումը: Ամեն:

Տարվա վերջում ու նորի գալը առիթ է նոր սկսելու համար:
Ի՞նչ կարող է Աստված նոր ստեղծել քո կյանքի մեջ:

Կարդա՛ր Յայտնություն 21.1-7

Եթե մեկը Քրիստոսի մեջ է՝ նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ:
Բ Կորնթ. 5.17

Պատգամաբերը

«Պատգամ ունեմ քեզ»: Մի կին, որ աշխատում էր իմ մասնակցած համագումարում, ինձ մի կտոր թուղթ տվեց: Ու զարմացա, որ ես կարող էի նյարդային կամ գրգռված լինել: Սակայն երբ կարդացի «Դու եղբորորդի ունես» արտահայտությունը, հասկացա, որ կարող էի ուրախանալ: Պատգամները կարող են բարի կամ վատ լուրեր բերել կամ մարտահրավեր լինել: Հին Կտակարանում Աստված գործածեց իր մարգարեներին՝ հաղորդելու հույսի կամ դատապարտության պատգամներ: Սակայն երբ մոտիկից նայենք, կտեսնենք, որ նույնիսկ իր դատաստանի բառերը ծրագիր ունեին առաջնորդելու իր ժողովրդին փրկության, բժշկության ու հարուստության:

Կարդա՛ր Մաղաքիա 3. 1-5

Ահա ես ուղարկում եմ իմ պատգամաբերին, և նա կտեսնի իմ ճանապարհները՝ իմ առաջ: Մաղ. 3.1

Երկու տեսակի պատգամներ են երևում Միքիա 3-ի մեջ, երբ Տերը խոստացավ նոր պատգամավոր ուղարկել, որ ճամփա պատրաստի իր համար: Հովհաննես Մկրտիչը հայտարարեց ճշմարիտ Պատգամաբերի՝ Հիսուսի գալուստը (տե՛ս Մատթ. 3.11), «ուխտի պատգամաբերը» (Մաղ. 3.1), որ պիտի կատարի Աստծո խոստումը. սակայն Նա պիտի գործի «որպես հալոցի բոց ու որպես լվացարարների օձառ» (Հմ. 2), որովհետև Նա պիտի գտի նրանց, որոնք հավատում են իր խոսքին: Տերը ուղարկեց իր խոսքը՝ մաքրելու իր ժողովրդին իր ունեցած սիրո կարեկցությունով, նրա բարիքի համար: Աստծո պատգամը սիրո, հույսի ու ազատության պատգամ է: Նա իր որդուն ուղարկեց՝ լինելու այն պատգամաբերը, որ մեր լեզվով է խոսում, երբեմն սրբագրության, սակայն մի՛շտ հույսի պատգամով:

Աղոթք - Տեր Դիսուս Քրիստոս, օգնիր ոչ միայն հասկանալու Քո պատգամը, այլ ապրելու նրանով: Ամեն:

Խնդրիր Տիրոջից, որ օգնի քեզ իր բարի լուրը ուրիշների հետ կիսելու Նոր Տարվա մեջ:

Նյութերի ցանկ

Աղոթք.....	Հոկ. 4, 9, 17, 28, դեկ. 1, 17, 29
Անարդարութիւն.....	Հոկ. 4, նոյ. 4
Առանձնութիւն.....	Դեկ. 6
Աստուածաշնչի հեղինակութիւն.....	Նոյ. 28
Աստուածաշնչի սերտողութիւն.....	Դեկ. 16
Աստծո զորութիւններ.....	Հոկ. 22
Աստծո հոգածութիւններ.....	Հոկ. 12, 15, նոյ. 6, 10, 13, 23, 29, դեկ. 7, 10, 24
Աստծո սերը.....	Հոկ. 8, 11, 16 նոյ. 13, 23, 27, դեկ. 9, 14
Աստծուն սպասել.....	Դեկ. 13, 17
Աստծո վարդապետութիւններ.....	Հոկ. 14, Նոյ. 5, 16, 26
Աստծուն վստահել.....	Հոկ. 10, 12, 25, 28, 29 նոյ. 18, 20, 26, դեկ. 2, 29
Ավետարանչութիւն.....	Հոկ. 2, 6, նոյ. 15, 25, դեկ. 8
Դրախտ.....	Հոկ. 24, նոյ. 11, դեկ. 8, 18
Ծառայութիւն.....	Հոկ. 19, 27, նոյ. 9, դեկ. 20
Կյանքի պայքարներ.....	Հոկ. 22, 31, նոյ. 18, 20, դեկ. 13
Կռակաշտութիւն.....	Նոյ. 2
Հալածանք.....	Հոկ. 10, նոյ. 4
Հավիտենական կյանք.....	Դեկ. 30
Հարաբերութիւններ.....	Նոյ. 7, 8
Հեզութիւն.....	Հոկ. 3, Դեկ. 20
Հիվանդութեանը դիմադրել.....	Նոյ. 9, 30
Հնազանդութիւն.....	Հոկ. 23, նոյ. 12, 28, դեկ. 20
Հոգևոր անոմ.....	Դեկ. 12
Հոգևոր ճակատում.....	Հոկ. 4
Հոգու կերպարանափոխութիւններ.....	Հոկ. 20, 21, դեկ. 16

Հուլյս.....	Հով. 31, դեկ. 22
Մահ.....	Դեկ. 18
Մեղք.....	Հով. 5, դեկ. 28
Մեղքերի թողություն.....	Հով. 5, 21, նոյ. 7, 27, դեկ. 28
Ներել ուրիշներին.....	Նոյ. 7
Շնորհակալություն.....	Հով. 29, նոյ. 30, դեկ. 3, 15, 23
Ուրիշ հավատացյալների հետ ապրել.....	Հով. 30
Պայքար և ընդդիմություն.....	Հով. 30, նոյ. 19
Պաշտամունք.....	Նոյ. 16, դեկ. 3, 14, 15, 23, 27
Պատերազմ.....	Հով. 4
Սեր ուրիշների հանդեպ....	Հով. 1, 7, 27, նոյ. 1, 3, 15, 17, դեկ. 5
Ստեղծագործություն.....	Հով. 14
Սուրբ Հոգի.....	Հով. 9, նոյ. 24
Տանջանք.....	Նոյ. 1, 6, 11, դեկ. 2, 27
Վախ.....	Հով. 16
Տալ.....	Նոյ. 22
Ցեղապաշտություն.....	Նոյ. 3
Փորձություն.....	Նոյ. 2
Փրկություն.....	Հով. 13, 18, 25, դեկ. 12
Քաջակերություն.....	Նոյ. 14, դեկ. 5
Քրիստոս՝ միություն.....	Հով. 7
Քրիստոս՝ Փրկիչ/Մեսիա...	Հով. 2, 26, դեկ. 4, 11, 26, 27, 31
Քրիստոսի Աստուածությունը.....	Հով. 19, 21
Քրիստոսի ծնունդը.....	Դեկ. 4, 6, 19, 21, 24, 25, 26
Քրիստոսի կեանք և ուսուցումները.....	Հով. 11
Քրիստոսի մահը.....	Հով. 18, 24
Քրիստոսի հարությունը.....	Հով. 24
Քրիստոսի նման ապրել.....	Հով. 6, Դեկ. 16

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

**Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ**

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ (010) 54-35-76, (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. (374) 94 52 75, 95 02 95

Անուն, ազգանուն

Հասցե.....

Հեռախոս.....



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ
Ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Էլկայք՝ www.amaa.am